



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1610

ԴԱՍԱԳԻՐՁ

# ՄՐԵԱՀԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԱՅԵՓԱՆ Պ. ՊՈՂՈՍ ՓԱՓԱՀԵԱՆՑ

ՎԱՀԵՐԱՅԵԱԾ

ՅԱԶԳԱՅԻՆ ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

ՈՒՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



ԿՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՄ  
ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՎԱՅԵԱՆ

1874

22

Փ - 31

W.H.  
317

2010


22  
Փ-31

317

ԴԱՍԱԳԻՐՁ

## ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ


ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿՈՐԾՈՆԱՑ



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՆԻՐԵԱՑ

ՄՅԵԺԱՆ Պ. ՊՈՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ



Վ.Ա.ԽԵՐԱՅԵԱԼ

ՅԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՃՈՂՈՎՈՅ  
ԿԵԴՐՈՒԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՎԱՖԵԱՆ

1874

ИЧВ № 1327/55



2012



36802-66

2001

50743-14-4.

Մեծարդոյ Սիրելի

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆՍՅԱՆ ՀԱՅՈՅ

Տ. Տ. ԳԵՂՐԱԿԱՑ Դ. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Տ. Տ. ԵՍԱՔԵԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՑ

Տ. Տ. ՆԵՐՍԵՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Քննելով մանր զԴասագիրս Արբազան Պատ-  
մութեան Հին և Նոր Կտակարանաց՝ զնորող  
աշխատասիրեալն առ ի ջէնջ, չդտաք ինչ ի նմա-  
ընդդէմ սուրբ Վարդապետութեան, հետեւա-  
բար և օդտակար յոյժ յուսումն մանկանց մե-  
րազնէից, վասնորոյ հրամայեցաք ի տպագրել:

2 մայիս 1866

Ի Պատրիարքարանի  
ամենայն Հայոց

Ողջ լերուք ի Տէր

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՑ  
ՊՈՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



Ա.

ՄԵծարդոյ Առեւիան առ Փափազանց

Է ՂԱՅՐԵՆԻ

Ազգային վարժարանաց մէջ Արբազան Պատմութեան կարեւոր և օգտակար ուսումը դիւրաւ աւանդելի ընելու նպատական ձեռնամնելի եղանք սոյն Դասագիրքս յօրինելու . մանաւանդ որ արդէն ասոր պէտքն ալ շատ դասատուներէ պկառուած ու հաստատուած էր :

Ներկայ Դասագիրքը ջանացինք կարելի եղածին չափ համառօտ պարզ բայց ամֆոփ ընել , առանց կարեւոր մասերը գուրա թողելու : Ասոր պարունակութիւնն է Հին և Նոր կտակարանաց բովանդակութիւնը , աշխարհի ստեղծումէն մինչեւ Քրիստոսի Փրկէին աշխարհ գալը և անկէ մինչեւ Առաքելցց քարոզութեան սկսելը : Դասական ընթացքի վրայ յօրինուածէ , և դիւրութեան համար իւրաքանչիւր պարբերութիւններու վրայ հարցուներ նշանակուած , անանկ որ առանց նոյն հարցուներուն պատմութեան ընթացքը անընդհատ իր ամբողջութիւնն ունի :

1865—Ե4 ի կազմուած Ազգային Ուսումնական Խորհրդուներկայացնելով Դասագիրքս , անոր հաճութիւնն ու հաւանութիւնը առնելէ ետեւ , Ամենապատիւ Արբազան Պատրիարք Հօր հաճութիւնն ու հրամանն ալ առնելով այժմ տպագրութեամբ կը հրատարակենք , յուսալով որ ազգային մանկուցն յառաջադիմութեանը համար օգտակար ծառայութիւն մը ըրած ըլլալու փափաքնիս կը լեցուի :

Յ Մայիս 1866  
Ամենափրկչի վարժարան  
ի Պալաթիա

Ս. Գ. Պ. ՓԱ.ՓԱ.ԶԵ.ԱՆ.Ց

# ԴԱՍԱԳԻՐՔ

## ՄՐԲԱԶՈՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Նախագիտելէ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊՈՅԱԽԱՅԱՎ

116

ՀԻՆ ԿՄԱԿԱՐԱՆԻ պատմութիւնը վեց մաս  
կը բաժնուի .

Ա. Աշխարհիս ստեղծումէն մինչև Զրհեղեղը  
Բ. Զրհեղեղին մինչև Արրահամու կոչումն  
ի բանան :

Գ. Արրահամու ի բանան կոչումէն մինչև  
Խորայելացւոց Եգիպտոսէն ելքը :

Դ. Եգիպտոսէ ելքէն մինչև Խորայելացւոց  
թագաւորութեան սկիզբը :

Ե. Թագաւորութեան սկիզբէն մինչև Բա-  
բելոնի գերութիւնը :

Զ. Բաբելոնի գերութենէն մինչև Քրիստո-  
սի ծնունդը :

## ԱԹԱՅԻՆ ՄԱՍ

ԱՇԽԱՏՀԻՍ ՍՏԵՂԾՈՒՄՔՆ ՄԻՒԶԵԻ ԶՐԴԵՂԵԴ,

## ԱՇԽԱՏՀԻ ՍՏԵՂԾՈՒՄՔ

Աստուած ի՞նչպէս ստեղծեց այս աշխարհս .

1. Աստուած վեց օրուան մէջ ստեղծեց բոլոր տիեզերքը , և ինչ որ երկնի և երկրի մէջ արարածներ կան :

Առաջին օրը՝ լցուը ստեղծեց , և խաւարէն զատեց՝ որ լցուը ցերեկ և խաւարը գիշեր եւ դաւ :

Երկրորդ օրը՝ հրամայեց որ ջրերուն մէկ մասը վեր քաշուելով երկինքը ձեւացաւ , որ հաստատութիւն կ'ըստի :

Երրորդ օրը՝ վար մնացած ջրերը զատ տեղ մը ժողվելով ծովս ըրաւ , և անանկով երեւցաւ յամաքը , որ երկիր կոչեց , և հրամայեց որ անոր մէջէն ամեն կերպ խոտեր և ծառեր բուս նին :

Չորրորդ օրը՝ արեւն ու լուսինը և բոլոր աստղերը հաստատեց երկինքը , որ ցորեկ ու գիշեր երկիրա լուսաւորեն , այլև ժամանակ՝ օր՝ տարի և անոր չորս եղանակները որոշեն :

Հինգերորդ օրը՝ հրամայեց և ջրին մէջէն

ամեն տեսակ լողացող ձիներ և զեռուններ և բոլոր թեւաւոր թռչուններ ելան :

Վեցերորդ օրը՝ հրամայեց որ երկիրը ամեն ցեղ չորբոտանիներ և անասուններ հանէ և այնպէս եղաւ : Նոյն օրը ստեղծեց մարդն ալ սքանչելի կերպով :

Եօթներորդ օրը ամեն գործէ դադրեցաւ , և այն օրը օրհնելով ուղեց որ իրեն համար սուրբ պահուի :

## ՄԱՐԴՈՅՑ ՍՏԵՂԾՄԱՆ ԿԵՐՊԸ

Ի՞նչ կերպով առելքուեցաւ մարդս .

2. Աստուած ուրիշ արարածները ստեղծելուն պէս չըրաւ մարդոյս ստեղծումը . այլ հող առաւ գետնին և մարմին շինեց . և անոր երեսին կենդանի շունչ փչելով անմահ հոգի մը տուաւ անոր , որով մարդն եղաւ Աստուծոյ պատկերին և նմանութեանը համեմատ բանական կենդանի . և անոր անունը դրաւ Ադամ :

Կիսը օբյէ<sup>o</sup> ստեղծեց .

3. Ետքը Ադամայ վրայ թմրութիւն մը ձգելով անոր կողերէն ոսկը մը հանեց մարմինով պատեց ու կին ձեւացուց , և անիկայ ալ հոգեւորելով Ադամին օդնական տուաւ անոր նման . որուն անունը Եւայ կոչեց Ադամ :

Աստուած ո՞ւր դրաւ զանմիք ,

4. Այս երկուքս եղան բոլոր մարդկային ազգի նախաձնող . որովհետեւ Աստուած օրհնեց զանոնք որ աճին ու շատնան և երկիրս լեցնեն . և երկրի վրայ եղող ամեն արարածներուն տիրեն : Եւ դրաւ զանոնք զուարծալի պարտէզի մը մէջ , որ սովորաբար դրախտ կ'ըսուի , ու ամեն տեսակ աղւոր տեսք ունեցող և աղնիւ պտուղ բերող ծառերով դարդարուած էր . որոնց մէջ էր նաև ծառ ինաց և ծառ չէրութեան բարեց և առէ ըսուածը :

ԴՐԱԽՏԻ ՄԷՋ ԱԳՈՄՈՅ ԵՒ ԵՒԱՅԻ ՎԻՃԱԿԸ

Ադամ և Եւայ ի՞նչ կեսմիք կը վարէին գրախային մէջ .

5. Ադամ եւ Եւայ դրախտին մէջ անմեղ և երանական կեցութիւն ունէին . իրենց զուարծութիւնն էր միշտ Աստուածոյ տեսութիւնը և չնորհքը վայելել , երկնից հրեշտակներուն հետ զԱստուած փառաբանել . իրենց զբօսանք էր միայն դրախտը դործել ու պահել առանց յոդներոյ և տքնելոյ . և դրախտին ամեն բարիքը ուտել բաց ի գիտութեան բարւոյ և չարի ծառէն , որուն համար պատուիրեց Աստուած որ անոր պտուղէն չուտեն . երբոր անկէց ուտէք նէ ըսաւ պիտի մեռնիք :

Ադամ ու Եւայ այս պատուէրս բննեցի՞ն .

6. Աստանայն որ առաջ հրեշտակ էր , բայց իրեն ամբարտաւանութեամբը Աստուածոյ երեսէն ինկաւ , երկինքէն վլոնտուեցաւ և սատանայ եղաւ , նախանձելով Ադամայ և Եւայի այս երանական վիճակին , և օձը՝ որ ամեն կենդանիներէն խորամանկ էր , իր չարութեանը գործիք ընելով Եւայի խելքը շրջեց , որ ուտէ արգիլուած ծառին պտուղէն . Եւայ օձին խօսքէն խարուելով , ինք կերաւ և Ադամին ալ կերցուց :

Այս յանցանքին համար ի՞նչ ըսաւ Աստուած .

7. Աստուած բարկանալով դրախտէն դուրս հանեց զանոնք , և պատիժ տուաւ Եւային՝ որ ցաւով տղայ բերէ , և Ադամին՝ որ հայր ճակտին քրտինքովլը դանէ , և երկուքն ալ մեռնելով հող դառնան :

ԳԱՅԻՆ ԵՒ ԱԲԷԼ

Ադամ՝ դաւակ ունեցա՞ւ .

8. Ադամայ ու Եւայի զաւակացը առջնեկեղաւ կայէն . և անկէց ետքը Աբէլ : կայէն որ երկրագործ էր , իր ձեռքի վաստակոցը անպիտանները Աստուածոյ նուէրք հանելուն համար Ժատութեամբը հաճելի չէր Աստուածոյ : Բայց Աբէլ որ հովիւ էր , իր հօտին մէջի պատուա-

կանները զոհելով Աստուծոյ, առատ ու զուարթ  
օիրտ ունենալուն համար շատ սիրելի էր Ար-  
տուծոյ :

Կայէն ի՞նչ ըրաւ Աբէլին .

9. Ասոր վրայ կայէն նախանձելով օր մը  
խարէութեամբ զբոսանքի համար գաշտ մը տա-  
րաւ Աբէլը, ու հոն զարկաւ մեռցուց զանիկայ :

Աստուծ Աբէլին տեղ տրիշ զատակ տուա՞լ Ադամին .

10. Աստուծ Աբէլին տեղ Սէթ անունով  
բարի զաւակ մը տուաւ Ադամին, որ Աստուծոյ  
շատ սիրելի եղաւ, այնքան որ Ս. դիրք ասոր  
սերունդը որո՞ւն Աստուծոյ կ'անուանէ, իսկ կայէ-  
նինը որո՞ւն հարրիւն :

Որո՞՞ւք երեւելի եղան Սէթայ սերունդին մէջ .

11. Սէթայ սերունդին մէջ երեւելի եղան  
Ենովք, որ ողջ ողջ երկինքը վերացաւ, և Մա-  
թուսաղայ, որ ամեն մարդէ աւելի ապրեցաւ,  
այսինքն 969 տարի :

Որո՞՞ւք երեւելի եղան Կայէնի սերունդին մէջ .

12. Կայէնի սերունդին մէջ երեւելի ե-  
ղան Յօրաղ՝ որ երաժշտութիւն հնարեց, եղ-  
բայրը Թորէլ՝ որ դարբնութիւն հնարեց, ու  
Քոյլերնին Նյեմա՝ որ կտաւ դործել սկսեց :

ԶԲՀԵՊԱԳ.

Աստուծ ի՞նչը ջրհեղեղով պատժեց մարդկային աղբը .

13. Սէթայ և կայէնի սերունդը հետզհե-  
տէ այնքան բազմացան, որ հազարաւոր տարի  
անցնելին վերջը բոլորովին մոռցան զիստուած,  
և սկսեցին ամեն տեսակ անօրէնութիւն գործել  
Աստուծ ալ բարկանալով ջրհեղեղով պատժեց  
մարդկային աղբը :

Ո՞վ տղատեցաւ այս պատճէն .

14. Միայն Սէթայ օրհնեալ ցեղէն նոյ Նա-  
հապետը կար, որ Աստուծոյ հաճելի էր : Նոյ  
Աստուծոյ հրամանովը տապան մը շինեց, և ին-  
քը իր կնիկովը և երեք զաւակովը և անոնց  
կնիկներովը մէկտեղ, և սուրբ կենդանիներէն  
եօթնական զոյդ, ու անսուրբ կենդանիներէն  
երկերկու զոյդ արու և էգ հետերնին առած  
տապանը մտան : Աստուծ ալ դուրսէն տա-  
պանին դուռը վրանին դոցեց :

Ո՞րպէս ժամանակ տեսեց սինձըեւը .

15. Ցետոյ սկսաւ Ջրհեղեղը . քառասուն  
օր և քառասուն դիշեր սոսկալի անձրե գարով  
և գետնին տակի ջուրերուն անդունդները պատ-  
ռելով ծովը բարձրացաւ, ու բոլոր աշխարհ-  
քըն Ջրով լեցուեցաւ . այնքան որ ջուրը բարձր

լեռներու ծայրերն ալ ծածկեց, ու խղդեց առ  
հասարակ երկրի վրայ եղած ամեն շնչաւոր ա-  
րարածները։ Հարիւր յիսուն օրէն ետքը Աստ-  
ուած հով մը հանեց, ու կամաց կամաց ջուրը  
սկսու աշխարհիս երեսէն պակսիլ։ Նոյի տա-  
պանն ալ Հայաստանի կողմերը գտնուելով Ա-  
րարատ կամ Մասիս ըսուած լերին վրայ նստաւ։

### ԵՐԻԹՈԹԻ ՄԱՍ

ԶՈՀԵԼԵՂԵՆ ՄԻՒՋԻ ԱԲՐՈՀԱՄՈՒ ԿՈՉՈՒԹՅՈՒ Ի ՔԱՆԱԿ

ՆՈՅ. ՈՒ ԻՐ ԵՐԵՓ ՈՐԴԻՔԸ, ՍԵՄ, ՔԱՄ, ՑԱԲԵՓ  
Նոյ ե՞րբ դուրս եաւ տապանէն։

16. Տարի մը անցնելէն ետքը, Նոյ նա-  
հապետ Աստուծոյ հրամանաւը տապանէն դուրս  
ելու իր ընտանիքովը ու բոլոր հետը առած  
կենդանիներովը։

Նոյ ի՞նչ ըրած տապանէն դուրս ելիկո՞ն պէս։

17. Նոյ Նահապետ շնորհակալութեան հա-  
մար ողջակէղ մատոյց Աստուծոյ այն սուրբ կենդա-  
նիներէն։ Աստուած ալ օրէնեց զինքը, և ուխտ  
ըրաւ մէյ մալ ջրհեղեղ ջրնելու. և աս բանիս  
նշան՝ ծերանի գրաւ երկինքը ամպերուն մէջ։

Նոյ լինո՞ւ ամփեց քամը.

18. Նոյ Սեմն ու Յարեթը օրէնեց որ իր  
գինիէն զուարթացած ու պառկած ատեն պա-  
տահած մերկութիւնը չըտեսնելու կերպով ծած-  
կեցին. իսկ դբամը անփեց, որ մերկութիւնը  
տեսնելով ծիծաղած էր հօրը վրայ։

Նոյ քանի՞ տալուան մեռաւ.

19. Նոյ Նահապետ ջրհեղեղէն ետքն ալ  
350 տարի ապրելով՝ և մարդոց շատնալով Ա-  
րարատէն դաղթիլը տեսնելէն յետոյ՝ 950 տար-  
ուան մեռաւ։

### ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Ի՞նչ էր Յաբերնի աշտարակը.

20. Նոյ Նահապետին և իր երեք որդւոց  
սերունդները հետզհետէ բազմանալով, սկսան  
Արարատէն դուրս դաղթիլ։ Ոն ատեն մարդոց  
մեծ բազմութիւն մը հպարտութեամբ ուղեցին  
Սենար դաշտին մէջ մեծ աշտարակ մը շինել,  
որուն ծայրը ինչուան երկինք պիտի համէր։

Յալողեցա՞ւ աշտարակին շնութիւնը.

21. Աստուած տեսնելով այս ամրարտա-  
ւանական գործքը, յանկարծակի աշտարակը  
շինող մարդոց լեզուն խառնեց, այնպէս որ մէ-  
կըզմէկու ըսածը չհասկնալով աշտարակը չկը-

ցան շինել . ասով աշտարակին տեղին անունն ալ  
Բաբելոն ըսուեցաւ , որ Խառնագունին ըսել է :  
Ո՞վ էր Աքրահամ :

22. Աշտարակին բաժանումէն ետեւ մար-  
դիկ նորէն կռապաշտութեան դարձան : Ասո-  
ուած ասոնց մէջէն իրեն հաւատարիմ ծառայ  
ընտրեց Աքրահամ նահապետը , որ Սեմայ ցե-  
ղէն էր , և Միջագետաց երկիրը՝ խառան քա-  
ղաքը կը բնակէր իր Թարա հօրը հետ :

Աստուած ո՞ւր կոչեց զԱքրահամ և ի՞նչ խոստացա  
սնոր .

23. Աստուած կանչեց զԱքրահամ նահա-  
պետը ՚ի Քանան , ու խոստացաւ անոր որ իւր  
զաւակը աստղերու նման անթիւ պիտի ընէ ,  
ինքը հայր պիտի ըլլայ աստուածընտիր ժողո-  
վուրդի մը , որ պիտի տիրեն բոլոր այն երկին :

Ե Ռ Ռ Ո Ռ Դ Ծ Ը

ԱՔՐԱՀԱՄՈՒ Ի ՔԱՆԱ ԿԱՉՈՒՄԷՆ ՄԱԽԱՆԻ ԽԾԱՅԱՎԱՆՈՒ  
ՆԵՐԸ ԵԳԻՎՏՈՒՆ

ԱՔՐԱՀԱՄ ՆՈՀԱԳԻՑ

Աքրահամ նոչո՞ւ Եղիպատ փախտ :

24. Քանանացւոց երկիրը սով իշխալուն

համար Աքրահամ Եգիպտոս փախտւ : Ետքը  
երբ Քանանացւոց երկիրը վերադարձաւ , Ղովտ  
իր եղբօրորդին զատեց իր քովէն , ու Խրկեց  
որ երթայ Յորդանան գետին կողմերը բնակի .  
ուր շինուած կային Սոդոմ ու Գոմոր ըսուած-  
քաղաքները :

Ինչո՞ւ համար Ղովտ գերի ըռնուեցա .

25. Ան ատենները Սոդոմի քովը եղած  
տէրութիւններէն չորսը միաբանած՝ Սոդոմաց-  
ւոց ու Գոմորացւոց վրայ պատերազմ բացին ու  
յաղթեցին , ու Սոդոմացւոց ամեն ստացուած-  
քը յափշտակեցին , շատ մը մարդ ալ գերի  
բռնեցին , որոնց հետ Ղովտն ալ կը գտնուէր :

Ղովտ ի՞նչպէս ազատեցա զերտթենէն .

26. Աքրահամ այս բանս լսելով շուտ մը  
իր 318 կտրին ծառաներովը՝ այն չորս թագա-  
ւորներուն ետեւէն վազեց , հասաւ ու աղէկ  
ջարդ մը տալով անոնց , Սոդոմացւոց բոլոր ա-  
ւարը ետ դարձուց , ու Ղովտը և միւս գերի-  
ներն ալ ազատեց :

Աքրահամ ասոր փոխարէն ի՞նչ ստացա .

27. Սոդոմացւոց թագաւորը մեծարանօք  
դիմաւորեց . և պատերազմէն առնուած բոլոր  
աւարը Աքրահամու տալ պնդեց . բայց Աքրա-

Համ շընդունեց : Մելքիսեդեկ Սաղիմայ արքայն ալ՝ որ քահանայ Աստուծոյ ալ էր, առաջն ելաւ հաց ու գինի հանեց անոր և օրհնեց . Աբրահամ ալ իր ստացուածքէն տասանորդ տուաւ Մելքիսեդեկին :

Աբրահամ զաւակ ունեցաւ .

28. Աբրահամու կինը Սարրա ամուլ ըլլալով անոր ստիպմամբը իր Ագար աղախինէն զաւակ մը ստացաւ իսմայէլ անունով . բայց իր յոյսը բոլորովին Աստուծոյ ըրած խոստմունքին էր թէ՝ իր կնոջմէն պիտի ունենայ իրեն ժառանգը :

Աստուած Աբրահամին ըրած խոստմունքը կատարեց .

29. Աստուած Աբրահամու յոյսը հաստատելու համար մարդու կերպարանքով երեք հըրեշտակ զրկեց անոր աւետելու թէ որչափ ինք ծեր է և Սարրա ալ պառաւած , Աստուծոյ կարողութեամբը տարիէ մը ետքը զաւակ մը պիտի ծնանի Սարրայէն իրեն ժառանգ , որ անով պիտի օրհնուին բոլոր մարդկային ազգերը :

Ետքը հըրեշտակները ո՞ւր գացին .

30. Հըրեշտակները անկէց Սոդոմէկան . Ղովտ տեմնելով զանոնք որ պատուաւոր անձինք են՝ իր տունը հրամցուց այն դիշեր . և

անոնցմէ իմանալով որ Սոդոմայ ու Գոմորայ բոլոր սահմանին մէջ գոնէ տասն արդար ալ շքատնուելուն համար պիտի կործանին այն քաղաքները . առաւօտուն կանուխ իր կինը և երկու աղջիկներն ալ հետն առած Սոդոմէն դուրս ելաւ , և հազիւ թէ Սեգօր հասաւ , որ թէպէտ այն ալ Սոդոմայ սահման էր , բայց իշտորհս Ղովտայ ազատեցաւ պատուհասէն :

Ի՞նչպէս պատճեցաւ Սոդոմ .

31. Աստուած սկսաւ երկինքէն կրակէ անձրեւ իջեցնել Սոդոմի ու Գոմորի վրայ . ուրով այն քաղաքները բոլոր մէջի գտնուածներովը երեցան և մոխիր դարձան . Ղովտայ կինըն ալ ետեւը դառնալուն համար աղէ արձան կտրեցաւ . վասն զի անանկ պատուէր տուածէին հրեշտակները որ ետեւնին չնային :

Աբրահամ ե՞րբ ունեցաւ ժանանգը .

32. Տարին լրանալուն Աստուծմէ Աբրահամու խոստացուած աւետեաց զաւակը ծնաւ Սարրայէն իրենց ծերութեան ատենը . Աբրահամ ասոր անունը իսահակ դրաւ , որ իրեն ժառանգը և յաջորդը պիտի ըլլար . և ասոր սերունդը պիտի տիրէր այն երկին :

Խամայէլ ի՞նչ եղաւ .

33. Երբ Խսահակ զարդացաւ , Արքահամ իր Ագար աղախինէն եղած խմայէլ զաւակը մօրը հետ ճամբեց տունէն . Խսմայէլ ալ ֆառան անսպատը գնաց բնակեցաւ . և Աստուած զանիկա Արքահամու սերունդ ըլլալուն համար նախահայր ըրաւ մեծ ազդի մը , որ խմայէլացիք ըսուեցան :

Աստուած ի՞նչպէս վորուեց Աքրահամին հաւասար .

34. Աստուած Արքահամին հաւատքը ու հնազանդութիւնը փորձելու համար , տեսիքի մէջ երեւցաւ ու ապսպից անոր , որ Խսահակըն իրեն զոհ ընէ : Արքահամ առանց տարակուսելու տարաւ զիսահակ Աստուծոյ ցուցըցած տեղը , և երբ պատրաստուեցաւ ու թուրը քաշեց որ զիսահակ մորթէ , Աստուծոյ հրեշտակը արդիլեց զինքը և ոչխար մը ցուցուց իսահակին տեղ զոհելու համար :

Աքրահամ ինչո՞ւ իր Եղիազար ծառան Միջադետք խրկեց .

35. Սարրա 127 տարեկան մեռաւ : Արքահամ ծերացած ըլլալով ուղեց որ Խսահակ որդին կարդէ : Այս բանիս համար իւր Եղիազար անուն հաւատարիմ ծառան Միջագետք խրկեց շատ ընծաներով : Եղիազար ալ Արքահամի աղ-

գականներէն Բաթուէլի աղջիկը և Հաբանի քոյրը Ուերեկան առաւ Խսահակին հարս բերաւ : Աքրահամ քանի՞ տարեկան մեռաւ և ուր թարուեցաւ .

36. Արքահամնահապետ 175 տարեկան մեռաւ , և զինքը իր Սարրա կնոջ քով թաղեցին Խսահակ և Խմայէլ երկու որդիքը :

### ԽՍԱՀԱԿ ՆԱՀԱՊԵՏ

Խսահակ քանի՞ գաւակ ունեցաւ .

37. Խսահակ նահապետ Ուերեկային ամշլութեանը պատճառաւ քսան տարիի չափ զաւակ չունեցաւ . Ետքը Աստուծոյ շատ աղաչելով երկուորեակօ (Էքիլդ) մը ունեցաւ , ու անուննին Եսաւ ու Յակոբ դրաւ :

Խսահակ ի՞նչու Եսաւը կը սիրէր .

38. Եսաւ ու Յակոբ երբ մեծցան , առաջնը սկսեց որսորդութիւն ընել , որով Խսահակայ սիրելի եղած էր . և երկորդը Յակոբ տունը կը կենար , և տանը բաները կը հոգար . անոր համար աս ալ Ուերեկային սիրելի էր :

Եսաւ ի՞նչպէս կորսնցոց իր անդքանիութիւնը .

39. Օր մը Եսաւ Երբ որսորդութենէն ետ գարձաւ , յոդնած ու անօթի ըլլալով , և տեսնելով որ Յակոբ ոսպէ ապուը եփած է , ուղեց զայն : Յակոբ ալ ապուքին փոխարէն Եսաւին

անդրանկութիւնը ուղեց . Եսաւ ալ տուաւ , և  
կորսնցուց իր անդրանկութիւնը :

Եսաւ ի՞նչպէս զրկուեցաւ անդրանկութեան օրհնութեսէն ալ .

40. Եսահակ Նահապետ Երբ ծերացաւ  
ու աչքերն ալ խիստ տկարացան , չմեռած ու-  
զեց որ Եսաւն օրհնէ : Ուստի հրաման ըրաւ  
Եսաւին որ նախ երթայ որս մը զարնէ ու եփէ ,  
որպէս զի որսն ուտելէն ետքը զինքն օրհնէ :  
Երբ Եսաւ որսը զարնելու գնաց , Ուերեկայ  
շուտ մը ուշ մը մորթեց , եփեց և տուաւ Յա-  
կոբին , որ իր հօրը տանի և անդրանկութեան  
օրհնութիւնը առնէ : Իսահակ ալ չտեսնելով որ  
Յակոբ է , ուշը ուտելէն վերջը օրհնեց զՅա-  
կոբ՝ կարծելով որ Եսաւ ինքն է : Երբ Եսաւ  
դաշտէն դարձաւ , ամեն բան լնցած գտաւ ,  
և ասանկով իր անդրանկութեան օրհնութենէն  
ալ զրկուեցաւ :

### ՅԱԿՈԲ ՆԱՀԱՊԵՏ

Յակոբ ի՞նչո՞ւ խառան գնաց .

41. Եսաւ Յակոբին վրայ սաստիկ ոխ պա-  
հեց , ուստի Յակոբ ալ Ուերեկայի խորհրդովը  
ելաւ խառան գնաց :

Յակոբ ի՞նչպէս Լաբանին տուսը հրափրեցաւ .

42. Երբ խառանին դաշտը հասաւ , Յա-

### ЧИТАЛИЩЕ — 47 „КРАСИРАЦ“

կոր տեսաւ որ հոն Ջրհորի մը քով ազջիկ մը ոչ-  
խարներուն ջուր տալու համար կ'ապասէր :  
Յակոբ Ջրհորին բերանին քարը վերցնելով , ու-  
աղջկան ոչխարներուն ջուր տալէն յետոյ զինքը  
ճանցուց անոր թէ Ուերեկային որդին է : Աղ-  
ջկը որ Ուաքէլ կ'ըսուէր , գնաց այս բանս պատ-  
մեց իր հօրը Լաբանին . Լաբան ալ Յակոբը հը-  
րաւիրեց իր տունը :

Յակոբ ի՞նչ վարձ առաւ Լաբանին :


43. Յակոբ Լաբանին տունը եօթը տարի  
մէյ մը՝ եօթը տարի ալ մէյ մը ծառայեց լա-  
բանին , և անոր երկու աղջիկները լիան և Ուա-  
քէլը իր ծառայութեան փոխարէն կին առաւ .  
և Երբ կ'ուղելը ալ Քանան դառնալ , Լաբան  
շթողուց զինքը :

Յակոբ ընդ ամենը քանի՞ տարի կեցաւ Լաբանին տունը .

44. Յակոբ քանի մը տարի ևս կենալով  
Լաբանին տունը , շատ հարստացաւ . և ընդ  
ամենը քսան տարի Լաբանին քով կենալէն յե-  
տոյ , օր մը ժողվեց իր ընտանիքն ու հօտը և  
Լաբանին ծածուկ ճամբայ ելաւ դէպի Քանան :

Յակոբ Քանանի մօտ ի՞նչ ել կիւղ կրեց .

45. Յակոբ Երբ Քանանի Երկրին մօտե-  
ցաւ , մեծ Երկիւլ կրեց . քանզի լսեց որ Եսաւ



եղբայրը 400 հոգւով իր վրայ կուգայ : Յակոբ  
այս սրտադողին մէջ նախուծոյ գիմելով, Ասու-  
ուած սիրտ տուաւ անոր որ անվախ ըլլայ , և ա-  
նունն ալ փոխեց Խարայէլ գըաւ :

Յակոբին չետ ի՞նչպէս հաշտուեցաւ Եսաւ .

46. Յակոբ երբ տեսաւ որ Եսաւ մօտե-  
ցած է , իսկոյն երեք խումբ բաժնեց ընտանի-  
քը , և ինքը յառաջ անցնելով , եօթն անդամ  
երկրպագութիւն ըրաւ Եսաւի : Այս բանիս վր-  
բայ Եսաւին գութը շարժելով , լալով պադար-  
ւեցաւ Յակոբին հետ ու հաշտուեցաւ :

Յակոբ իր ինահակ հայրը ողջ զտա՞ւ .

47. Յակոբ Քանանի երկրին մէջ ասդիս  
անդին քանի մը տեղ փոխելէն ետքը , վերջա-  
պէս Քէփրոն՝ իր հօրը տունը գնաց , ուր ողջ  
դտաւ իր Խարահակ հայրը . որ 180 տարեկան  
մեռաւ , և զինքը թաղեցին Եսաւ ու Յակոբ :

Յակոբ քանի զաւակ ունէր , և անոց անունն երև ի՞նչ էին .

48. Յակոբ տաներկու զաւակ ունեցաւ ,  
որ են Ռուբէն , Շմաւոն , Ղեւի , Յուդա , Խա-  
գար , Զաբուղոն , Դան , Նեփթաղիմ , Գագ , Ա-  
սեր , Յովսէփ , Բենիամին : Ասոնցմէ սերեցան  
ետքը Խարայելացւոց աղջին տասներկու ցեղե-  
ըը :

### ՅՈՎԱԷՓԻ ՆԱՀԱՊԵՏ

Յովսէփայ վրայ ինչո՞ւ կը նախանձէին իր եղբայրները .

49. Յովսէփ շատ գեղեցիկ ու խելացի տը-  
ղայ մ'էր , և Ռաքէլի ալ անդրանիկ զաւակն  
ըլլալով , շատ սիրելի էր իր հօրը . ասոր համար  
իր եղբայրները խիստ կը նախանձէին Յովսէփայ  
վրայ , և կը ջանային անոր անունն աւրել Յա-  
կոբայ առ ջեւ :

Յովսէփ ի՞նչ երաղ տեսաւ .

50. Յովսէփ երկու երազ տեսաւ . առաջինը  
կը տեսնէր Յովսէփ որ եղբարցը հետ դաշտի մը  
մէջ որայ կապելու ժամանակ իր որան ելաւ կայ-  
նեցաւ , ու եղբարցը որաները իր որային երկը-  
պագութիւն ըրին : Երկրորդն ալ աս էր , կը  
տեսնէր Յովսէփ որ արել , լուսինը և տասնըմէկ  
աստղեր իրեն երկրպագութիւն կ'ընէին :

Յովսէփ ի՞նչպէս ճախուեցաւ . Խամսյելացի վաճառ ակրս-  
ներուն .

51. Յովսէփայ տեսած երազները աւելի  
եւս գրգռեցին եղբարց ատելութիւնը . և օր  
մը երբ Յովսէփայ եղբարքը ոչխար արածելու  
համար հեռու տեղ գացած և ուշացած էին ,  
Յակոբ Յովսէփը անսոնց ետեւէն խրկեց , որ եր-  
թայ նայի թէ ինչպէս են . անոնք ալ բռնեցին

Յովսէփը նախ անջրդի ջրհորի մը մէջ ձգեցին ,  
ետքը հանեցին անկէ ու իսմայէլացի վաճառաւ  
կաններուն ծախեցին : Յովսէփին ծաղկեայ պատ-  
մուճանն ալ այծի արիւնի մէջ թաթիւնը՝ Յա-  
կորին տարին ըսելով թէ՝ գաղան պատուած է  
Յովսէփը :

Դանցէլացիք ո՞ւր տարին զՅովսէփի և սբո՞ւ ծախեցին .

52. Իսմայէլացիները Յովսէփը Եգիպտոս  
տարին , ու Փարաւոն թագաւորին Պետափրէս  
գահճապետին ծախեցին : Պետափրէս քիչ ա-  
տենէն հաւատալով Յովսէփայ վրայ եղած զըր-  
պարտութեան մը՝ բանտը դնել տուաւ զանի :

Յովսէփ բանտին մէջ ի՞նչ ըրաւ .

53. Յովսէփայ կեցած բանտին մէջ Փա-  
րաւոնին երկու իշխանները կային : Ասոնք դի-  
շեր մը մէյմէկ երաղ տեսած ըլլալով , հետեւ  
եալ աւատօտ՝ Յովսէփ մեկնեց իրենց երազը .  
և մեկնութիւնն ալ սասոյդ ելաւ , իշխանին մէ-  
կը կախուեցաւ , և միւսը ազատելով առաջին  
պաշտօնին հասաւ :

Յովսէփ ի՞նչպէս ազատեցաւ բանտէն .

54. Այս բանիս վրայ երկու տարի անց-  
նելէն յետոյ՝ Փարաւոն թագաւորին ալ երաղ մը  
տեսաւ , և բանտէն ազատուով իշխանին միջ-

նորդութեամբը Յովսէփ այս երազը պատմելու  
համար ազատեցաւ բանտէն , և Փարաւոնին առ-  
ջեւը տարուեցաւ :

Փարաւոնին երազն ի՞նչ էր .

55. Փարաւոն պատմեց իր երազը թէ ,  
եօթը գէր կովեր Նեղոս գետէն ելած՝ արա-  
ծելու ատեն , ուրիշ եօթը վատոյժ կովեր ե-  
լան , և այն գէր կովերը կերան : Դարձեալ տե-  
սած էր թէ , մէկ ոճի մը վրայ՝ եօթը ատոք  
հասկեր բուսան , յետոյ եօթը ցամաք հասկեր  
ալ բուսնելով՝ ատոքները կուլ տուին :

Յովսէփ ի՞նչպէս մեկնեց Փարաւոնին երազը .

56. Յովսէփ Փարաւոնին երազը այսպէս  
մեկնեց . եօթը գէր կովերը և եօթը ատոք հաս-  
կերը՝ եօթը առատութեան տարիներ են ,  
ըստաւ . և եօթը վատոյժ և եօթը ցամաք հաս-  
կերը՝ եօթը սովի տարիներ են :

Փարաւոն Յովսէփին ի՞նչ ըրաւ .

57. Փարաւոն Յովսէփին իմաստութիւնը  
աեսնելով՝ իր երկրորդն ըրաւ զայն , ու բոլոր  
Եգիպտոսի կառավարութիւնն անոր յանձնեց :

Յովսէփ իշխանութեան համերըն պէս ի՞նչ ըրաւ .

58. Յովսէփ իշխանութեան համելուն  
պէս՝ եօթը առատութեան տարիներուն մէջ

խիստ շատ ցորեն ժողվեց . և երբ սովոր տարիւն  
ները հասան , ժողովուրդը անով կերակրեց :

Յովելի ի՞նչպէս կրցաւ տեսնել իր եղբայրները .

59. Սովը մինչեւ քանանի երկերը տարածուած ըլլալով , Յակոբ նահապետ երբ լըսեց որ Եգիպտոսի մէջ ցորեն կը ծախուի , զո՞ն խրկեց իր տասը եղբարքը մէկէն՝ որ ցորեն զնեն :

Յովելի ի՞նչպէս վարուեցաւ իր եղբարը .

60. Յակոբայ տղաքը երբ Յովելի փայտամալ չեւն ելան , ճանչցաւ Յովելի իր եղբայրները , բայց զինքը ճանչցուց անոնց . և քանի մը հարց ու փորձ ընելէն և քիչ մը չարչրկելէն ետքը , Շմաւոնը կապել ու իր քովը պահել տուաւ , և ապսպրեց մէկալներուն՝ որ երթան պղախիկ եղբայրնին Բէնիամինն ալ բերեն , որպէս զի Շըմաւոնը թողու . ասանկով Յովելի փայտամալ առանց Շմաւոնի դարձան ի Քանան :

Յակոբ թողո՞ւց Բէնիամինը .

61. Սովը օրէ օր սաստկանալով՝ Յակոբ նահապետ պարտաւորեցաւ իր տղաքը դարձեալ յէգիպտոսի իրկել ցորեն զնելու համար , և Եգիպտոսի դատաւորին կամացը համեմատ պարտաւորեցաւ Բէնիամինն ալ ակամայ հետերնին իրկել :

Յովելի եղբարքը քանին դառնացու առեն ի՞նչ սըրտադող ունեցան .

62. Յակոբայ որդիքը երկրորդ անդամ Եգիպտոս դարձան ու Յովելի առջին ելան . բայց Յովելի այս անդամալինքինքը չճանչցուց . և երբ անոնք ցորեն առած ճամբայ ելան , յանկարծ ետ դարձնել տուաւ զանոնք , որպէս թէ գողցեր տարեր են իր արծաթէ բաժակը , զորինքը Յովելի դիտմամբ Բէնիամինի քուրձին մէջ դնել տուած էր , և անկեց ալ ելաւ :

Յովելի ի՞նչպէս յայսնեց նոքվները եղբարը .

63. Յովելիին եղբարքը մեծ սրտադող քաշեցին , ամենքը մէկէն Յովելի ոտքը կյանալով Բէնիամինի յանցանքին ներումն իւրնդրեցին : Զգիմացաւ Յովելի , և լալով զինքը եղբարցը յայտնեց , դրկեց ու պատաւ զանոնք :

Յովելի նոքվները յայսնեկն վերջն ի՞նչ ըրաւ .

64. Յետոյ Յովելի շուտ մը հայրը յէգիպտոսի բերել տուաւ , և Փարաւոն թագաւորին առջել հանեց . Փարաւոն դեսեմի երկերը անոր տուաւ բնակութեան համար , ուր ետքէն բազմացաւ Խրայելացւոց ազգը :

Յակոբ նահապետ քանի՞ տարի ապրեցաւ Եգիպտոսի մէջ .

65. Յակոբ նահապետ 17 տարիի չափ

Եղիպտոսի մէջ ապրելէն ետքը, մեռնելու ժամանակ կանչեց իր տասներկու զաւակները . և անոնց ամեն մէկուն զատ զատ օրհնութիւն տուաւ . և Յուղայի օրհնութեանը մէջ յայտնի դուշակեց, որ անոր ցեղը թագաւորական պատիւի պիտի համեմէր, և Մեսիան անոր ցեղէն պիտի դայ :

Յակոբ ս' ուր թաղուեցաւ .

66. Յակոբ նահապետ 147 տարեկան մեռաւ ի Քեսեմ, և Յովսէփ հօրը մարմինը զմռաւել տալով մեծ հանդիսիւ Քանանի երկիրը տարաւ, ու անոր հարց գերեզմանին մէջ թաղեց զանի :

Յովսէփ քանի՞ տարեկան մեռաւ .

67. Յովսէփ 140 տարեկան մեռաւ իր իշխանութեան մէջ, և կտակ ըրաւ ողջ մնացած եղբարցը որ Եղիպտոսէն ենելու ատեն իր սուկորները մէկտեղ տանին :

Յովսէփայ մեռնելէն ետքը Խորայէլացիշ լի՞նչ լիճակ ունեցան Եղիպտոսի մէջ .

68. Յովսէփայ մահը մեծ աղէտ եղաւ իսրայէլացւոց համար, քանզի հետզետէ ուրիշ Փարաւոններ թագաւորելով սկսեցին չարչըել զիսրայէլացիս : Փարաւոնին մէկն ալ իսրայէ-

լացւոց օրէ որ շատնալը տեսնելով և անոնցմէ վախնալով՝ հրաման ըրաւ որ իսրայէլացւոց նուրածին արու զաւակները Նեղոս գետը ձգուին :

### ՄՈՎՍԵՍ

Ո՞վ էր Մովսէս .

69. Մովսէսի ծնողքը Ղեւիի ցեղէն էին . երբ ծնաւ Մովսէս երեք ամիսի չափ պահեցին զինքը իր ծնողքը . բայց Փարաւոնին վախնալով պրտուէ (խակրէ) հիւսած և ձկւթով (զիֆթ) ծեփած մնառուկի մը մէջ դրին մանուկը և դեռ ձգեցին :

Ո՞վ աղասեց Մովսէսը գետէն .

70. Փարաւոնին գուստը նաժիշտներով գետեզրը ժուռ գալու ատենը՝ տեսնելով այս մնառուկը, զուրս համել տուաւ ու զանի իրեն որդեգիր ընելով՝ անունը Մովսէս դրաւ :

Մովսէս քառասուն տարեկան ըլ լարուն պէտ ի՞նչ ըրաւ .

71. Մովսէս հետզհետէ Եղիպտացւոց ամեն ուսումները և իմաստութիւնները սորվեցաւ, և երբ քառասուն տարեկան եղաւ ձգեց Փարաւոնի պալատը, ու զնաց իսրայէլացւոց ազգին հետ կեցաւ :

Մովսէս ինչո՞ւ Մադիսմի երկիրը փախաւ .

72. Օր մը տեսաւ որ Եղիպտացի մը զիս-

բայց էլացի մը կը չարչրկէր, վրայ հասաւ, սպան նեց զիդիպոտացին . բայց տեսնելով որ այս մարդաբանութիւնը յայտնուեցաւ, վախէն Մադի ամի երկիրը փախաւ, ուր ամումնանալով քառասուն տարիի չափ կեցաւ :

Մովսէս սրություն հրաննաւ Եգիպտոս դարձաւ .

73. Աստուած տեսնելով իսրայէլացւոց աղդին աղէտը ու քաշած տանջանքը, ուղեց Մովսէսի ձեռօք իսրայէլացիները աղատել այն նեղութիւններէն . ուստի օր մը՝ երբ Մովսէս ոչխար կ'արածէր Մադիամի երկրին մէջ, Աստուած բոցավառ մորենիի մը մէջէն կանչեց ըդ Մովսէս “ գարձիր, ըստու, յԵգիպտոս ու իմ ժողովուրդս հանէ անկէ ” :

Աստուած ի՞նչ նշան տւու, Մովսէսի, որ Կարայէլացիք հաւատան անոր .

74. Որպէս զի իսրայէլացիները հաւատան թէ Մովսէս Աստուածոյ կողմէն իսրկուած է, անոր երեք նշան տուաւ Աստուած . առաջինը առ էր, երբ Մովսէս ձեռքի դաւաղանը գետինը կը ձգէր՝ օձ կը դառնար դաւաղանը . ու երբ օձին պօչէն կը բռնէր կը վերցնէր, նորէն դաւաղան կ'ըլլար օձը : Միւս նշանն ալ աս էր . երբ Մովսէս ձեռքը ծոցը կը խոթէր, բորտոտած դուրս կը հանէր . նորէն ձեռքը ծոցը կը խոթէր և բո-

րը սրբուած դուրս կը հանէր : Երրորդ նշանն ալ այս էր որ գետէն ջուր առնելով ցամաք գետնի վրայ թափէր նէ՝ արիւն կը դառնար : Մովսէս Եգիպտոս դառնալո՞ն ա՛մս ի՞նչ ըրաւ .

75. Աստուածոյ հրամանովը Մովսէս եղիպտոս դառնալուն պէս, Ահարոն եղրայրը հետը առնելով ֆարաւոնին դիմացը ելաւ ու խնդրեց որ իսրայէլացիները թողու Եգիպտոսէն ենելու :

Փարաւոն թողո՞ւց Խարայէլացիները .

76. Փարաւոն իսրայէլացիները չը թողեւ լն զատ հրաման ըրաւ որ աւելի ևս չարչարեն զիսրայէլացիս ու աշխատցնեն . Աստուած ալ բարկանալով, տապը հարուած խրկեց Եգիպտոսի վրայ :

Որո՞նց են այդ տառը հարուածները .

77. Եգիպտոսի տասը հարուածներն առնք են .

Ա. Եգիպտոսի բոլոր ջրերը արիւն դարձան .

Բ. Բոլոր Եգիպտոսի քաղաքները տուները գորտերով լցուեցան .

Գ. Եգիպտոս մունով (սիվրիսինէկ) ծածկը տեցաւ .

Դ. Եգիպտոս շանաձաննով լցուեցաւ .

Ե. Եգիպտացւոց կենդամներուն սոսկալի ջարդ մը ինկաւ .

Զ. Եգիպտոսի բոլոր մարդոց և անասնոց մարմինը խոցերով և ուռեցքներով ծածկուեցաւ .

Է. Սոսկալի կարկուտով տուներէն դուրս մնացած մարդերը, անասունները, նաև ծառերը և կանանչեղինները ամենն ալ մոխիր դարձան .

Ը. Եգիպտոս մարախով ծածկուեցաւ, և կարկուտէն մնացածն ալ չորցուց .

Թ. Բոլոր Եգիպտոս թանձը մուխով պատեցաւ, անանկ որ ճրագը լցո չէր տար .

Ժ. Եգիպտոսի բոլոր մարդոց և անասուններուն անդրանիկները մեկ գիշերուան մէջ մեռան :

Փարաւնա մինչեւ վերջը կրցաւ դիմանաւ .

78. Փարաւնի միրտը մինչեւ իններորդ հարուածին ատենը սոսկալի խստացած կամակորութիւն ցուցընելէ ետքը, տասներորդ հարուածին բոլորովին զիջաւ, և հրաման տուաւ Մովսէսին, որ Իսրայէլացիները շուտով առնէ, ելնէ Եգիպտոսին :

Իսրայէլացիք ի՞սչպէս ելան Եղիսաբէդն .

79. Ցամներորդ հարուածին գիշերը Իս-

րայէլացիք Աստուծոյ հրամանաւը տուն գլուխ մէյմէկ գառ մորթեցին ու խորվեցին, և ոտքերնին կոչիկ, ձեռքերնին դաւազան՝ բաղարջով (խամնւրսուղով) կերան զայն, ու արտորնօք ճամբայ ելան :

Իսրայէլացիք ի՞սչ կոչեցին այս գառն զիշտուլ .

80. Այս գառն զենուլը Պատեք կոչեցին Իսրայէլացիք, որ է Զատիկ, և այս տօնն ամեն տարի կը կատարէին, և մինչև հիմա ալ կը կատարեն առանց գառնազենութեան :

Փարաւն զոյնո՞ց Իսրայէլացիները թող տարուն վրայ .

81. Փարաւն շուտով զզաց Իսրայէլացիները թող տալուն վրայ, ուստի բոլոր զօրքովը Իսրայէլացւոց ետեւէն ինկաւ մինչև կարմիր ծոփոն եղերը :

Իսրայէլացիք ի՞սչպէս ավատեցն Փարաւնոցին ձեռքէն .

82. Մովսէս տեսնելով որ Փարաւն իր զօրքովը կը համի, իսկոյն Աստուծոյ հրամանովը զարկաւ ջրերուն դաւազանով, և ջրերը երկու բաժնուելով մէջ տեղը ցամաք ճամբայ բացուեցաւ, որուն մէջէն անցան Իսրայէլացիք ծոփոն միւս կողմը : Երբ Փարաւն ալ ետեւնուն մտաւ բոլոր զօրքովը նոյն ճամբուն մէջ, Մովսէս դարձեալ դաւազանով զարկաւ ջրե-

լուն, ու ջրերը եկան միացան երկու կողմէն  
և խեղդեցին զփարաւոն իր բոլոր զօրքովը : Ա-  
սանկով աղատեցան իսրայէլացիք ֆարաւոնին  
ձեռքէն :

Չ Ո Բ Ռ Ո Բ Դ Մ Ա Ս

ԵԳԻՊՏՈՍԻ ԵԼՔԻՆ ՄԻՒՋԵՆ ԽՄՐԱՅԵԼԱՅՈՒՅ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱԿ  
ՍԿԻՋԵԸ

ՄՈՎՄԻՅ ԵՒ ԽՄՐԱՅԵԼՈՑԻՈՅ ՃԱՄՅՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Իսրայէլացիք կարմիր ծովէն անյնելէն ետքը ո՞ւր դացին .

83. Իսրայէլացիք կարմիր ծովէն անցնե-  
լէն ետքը մտան Սուր անապատը, և եկան ՄԵ-  
ռոյ, որուն ջրերը չխորուելու չափ լեզի ըլլա-  
րվ, Աստուած Մովսէսի փայտ մը ցուցուց որ  
ջրոյն մէջ ձգուածին պէս անուշցան ջրերը, ան-  
կէց ալ Սին անապատը անցան ուր իսրայէլա-  
ցիք հացի նեղութիւն կրելով, Աստուած ալ  
հացի տեղ մանանա տուաւ անոնց : Այս մա-  
նանայն գինծի (քիշնիշ) պէս՝ բայց ճերմակ  
բան մ'էր . որ գիշերները կ'իջնէր, և առա-  
ւօտները՝ ժողովուրդը զանոնք կը հաւաքէր ու  
շաղելով կ'եփէր կ'ուտէր :

Իսրայէլացիք որմ'այ չետ առաջին պատերազմն ըրին,

84. Իսրայէլացիք Ո.ափիդիմ հասնելնուն  
պէս Ամաղէկացւոց հետ առաջին պատերազմն  
ըրին : Յետու զօրավարութիւն կ'ընէր . որով իս-  
րայէլացիք զօրացած կարող եղան Ամաղէկացի-  
ները ջարդել :

Աստուած ո՞ւր ինչպիսքը յայտնեց Իսրայէլացւոց .

85. Ո.ափիդիմէն Սինա լերին գիմացը  
գացին, ուր Աստուած զինքը ժողովուրդին  
յայտնեց ահաւոր փառքով, և տամնաբանեայ  
պատուիրանները տուաւ : Յետոյ Մովսէսը լեռը  
կանչեց որ իր պատուիրանները գրած տայ անոր:

Մովմէսին ուշանալը ի՞նչ աղդեցութիւն ըջաւ ժողո-  
վագենան :

86. Մովսէսին ուշանալը տեսնելով ժո-  
ղովուրդը Ահարոնին գիմեցին որ ուրիշ Աստ-  
ուած մը շինէ . Ահարոն ալ անոնց ոսկիէ հորթ  
մը շինեց, զոր իրբեւ աստուած սկսան պաշ-  
տել իսրայէլացիք :

Իսրայէլացւոց այս կրտսեպաշտութիւնը շատ աեւե՞ց .

87. Իսրայէլացւոց այս կրտսեպաշտութիւնը  
շատ չտեւեց . քանզի Մովսէս քառասուն օրէն  
լեռնէն իջնելով՝ երբ տեսաւ իսրայէլացւոց  
հորթ պաշտելը, բարկութենէն հետը բերած

պատուիրաններուն տախտակը գետինը զարկաւ կոտրեց, հորթն ալ ջարդեց, ու խարտոցելով փոշին ջուրին հետք խառնեց ու խմցուց ժողովուրդին։ զեւեայ ցեղին ալ հրաման տուաւ որ զինին, ու բանակին չորս կովմը պարտելով ջարդեն ժողովուրդը, որով 3000 հոգին չափ ջարդուեցաւ։

Մովսէս ի՞սօ՞ւ կրկին անողամ՝ Սիսա ի՞ռը քաշուեցաւ.

88. Կրկին անդամ Մովսէս Սիսա լեռը քաշուեցաւ պատուիրաններուն երկու տախտակը նորոգելու համար, ուր 40 օր կենալով գրեց պատուիրանները և բերաւ ժողովրդին։

Որո՞նք են տախտականեայ պատուիրանները։

89. Աստուծոյ տուած տասնաբաննեայ պատուիրանները ասոնք են։

Ա. Ես եմ քու Աստուածդ, չըլլայ որ ինձմէ զատ ուրիշ Աստուածդ, ունենաս։

Բ. Երկնի և երկրի վրայ եղած բաներուն նըմանութիւնով կուռք չը շինես, և զանոնք չը պաշտես ամենեւին։

Գ. Քու աէր Աստուծոյդ անոնը պարապ տեղը բերանդ չառնես։

Դ. Շարաթ օրը սուրբ պահէ, ու մնացեալ վեց օրը դորձէ։

Ե. Հայրու ու մայրու պատուէ, որպէս զի երկայնակեաց ըլլաս։

Զ. Սպանութիւն մի ըներ։

Է. Շնութիւն մի ըներ։

Ը. Դողութիւն մի ըներ։

Թ. Սուտ վկայութիւն մի ըներ քու ընկերիդ վրայ։

Ժ. Ուրիշին տանը և ուրիշին կնոջ մի ցանկար և անոր ստացուածոց աչք մի անկեր։

Մովսէս ի՞նչ կրծսական բաներ շինել տուաւ։

90. Մովսէս Աստուծոյ հրամանաւը շատ ոսկի արծաթ ու գոհար ժողովելով ժողովուրդէն, ու թէսէլիէլ ճարտարապետին տալով զանոնք, վրան մը շինել տուաւ, որ ի՞րան վկայութեան ըսուեցաւ։ Այս վկայութեան Խորանին մէջն էր ծապանակը, որ մնատուկ մ'էր անփուտ փայտէ, ներսէն դուրսէն ոսկիով պատած, և բերանի կափարիչն ալ որ Քաւութիւն կ'ըսուէր, զուտ ոսկի էր։ Այս տապանակին մէջը կային պատուիրանաց երկու քարէ տախտակները և ոսկի սափորով մը մանանայն։

Քահանայութիւնը ո՞ր ցեղին տրուեցաւ.

91. Աստուծոյ հրամանաւը Մովսէս Ղեւացւոց ցեղին տուաւ քահանայութիւն ընելու պաշտօնը. և Ահարոն Մովսէսի եղբայրը առաւ.

Հին քահանայապետն եղաւ՝ զեւտացի ըլլալուն  
համար, և քահանայապետութեան ալյատկա-  
ցած զգեստ շնուեցաւ. որ անիկայ հազնելով  
մտնելու էր տապահնակին տեղը:

Խորայէլացիք ի՞նչ տրտունջ ունէին.

92. Խորայէլացւոց ճամբորդութեանը մէջ  
տրտնջողը պակաս չէր Մովսէսի ու Ահարոնի  
դէմ. անդամ մալ եգիպտառի առատութիւնը,  
միսը, սոխն ու սիսորը յիշելով ամենքը մէկ  
բերան. միս ուղել սկսան Մովսէսին:

Մովսէս ի՞նչպէս վերցուց Խորայէլացւոց տրտունջը.

93. Մովսէս Աստուծոյ դիմեց, Աստուած  
ալ սաստիկ քամիով մը ծովուն կողմէն շատ մը  
լրամարդի (պլյարձըն) բերաւ դիզեց բանա-  
կին չորս կողմը: Խորայէլացիք ժողվեցին այս  
լրամարդիները, և ապլստելով ժամանակ ժա-  
մանակ կուտէին, բայց իրենց ոկրամոյրութեան  
պատիմն ալ շուտով վրայ հասաւ. ժողովուր-  
դին մէջ սաստիկ հիւանդութիւն մը ինկաւ և  
շատ մարդ ջարդուեցաւ:

Ե՞րբ հասան ֆառան անսպատը.

94. Խորայէլացիք եղիպտառէ ելնելին  
տարի մը ետքը հասան ֆառան անսպատը.  
Մովսէս Առերեաց երկրին մօտեցած ըլլալը դիտ-

նալով, Աստուծոյ հրամանաւը խրայէլացւոց  
տասներկու ցեղերէն տասներկու հոգի ընտրեց  
ու Քանանացւոց երկիրը խրկեց լրտեսելու:

Լրտեսները ի՞նչ լուր բերին.

95. Լրտեսները երբ ետ դարձան, շատ  
դովեցին երկրին բերրիութիւնը, որուն նշան  
հետերնին խաղողի խիստ մեծ ողկոյզ մը բերած  
էին. բայց ժողովուրդին աչքը վախցուցին ըսե-  
լով անոնց թէ այն երկրին մարդոցը քով մենք  
մարախ կերեւայինք:

Խորայէլացիք ի՞նչու Եփսպոս դառնալ ողեցին.

96. Երբ այս բանը լսեց ժողովուրդը շատ  
վախցաւ. և ամենքը Մովսէսի դէմ բարկացան,  
ո՞ր զուր տեղը զիրենք Եգիպտառէն հաներ է.  
ուստի մէջերնին որոշեցին որ ուրիշ առաջնորդ  
մը ընտրեն իրենց ու Եգիպտառ դառնան:

Աստուած ի՞նչպէս սպատեց Խորայէլացւոց երկչուութիւնը.

97. Բարկացաւ Աստուած անոնց վրայ.  
ու հրամայեց որ քառասուն տարի անսպատին  
մէջ թափառական շրջին, բոլոր քսան տարե-  
կանէ վեր եղողները ջարդուին, ու անկէ ետքը  
մտնեն Խորայէլացիք քանանի երկիրը:

Ի՞նչու պատժուեցան Կորլս, Դալման և Աքիրս.

98. Քահանայապետութիւնը Ահարոնին և

Ղեւեայ ցեղին սեպհականուելուն վրայ նախանձելով և տրանջելով Մովսէսի համար կորիս և դադան և Աբիրոն, իրենց բանակովը գետնին տակը անցան և այրեցան :

Քաչանայապետութիւնը Ղետացւոց ցեղին տրուած քելը Աստուած ի՞նչ նշանով յայտնեց .

99. Աստուած ալ ինք Ահարոնը քահանայապետութիւնը անոր ցեղին սեպհականած ըլլալը ցուց սա նշանով . Մովսէսի ձեռօք ապապրեց տասներկու ցեղին որ իրենց անունները մէյմէկ գաւազանի վրայ դրեն ու վկայութեան խորանը դնեն, և որ ցեղին գաւազանն որ ծաղկի, այն է իմ ընտրածս, ըստ : Երկրորդ օրը տեսան որ Ղեւիի ցեղէն Ահարոնին գաւազանը ծաղկած ու ընկոյզ ալ տուած էր . ասով քահանայապետութիւնը Ղեւիի ցեղին մէջ հաստատուեցաւ, և այս գաւազանն ալ Տապանակին մէջ դրուեցաւ :

Ե՞րբ հասան կադէս անսպատը .

100. Խորայէլացիք իրենց քառամօրեայ ճանապարհորդութեան երեսուն և իններորդ տարին կադէս հասան, ուր ջուրի պակասութիւն ունենալով սաստիկ տրանջալ սկսան . Մովսէս Աստուծոյ հրամանաւը ապառած քարին

զարկաւ գաւազանով ու ջուր բղիեցուց անկէ : Ե՞րբ հասան Հովը լիով, և ի՞նչ պատահեցաւ հմ .

101. Քառամսներորդ տարին հասան Հովը լիով, որ Քանանի Երկրին դիմացը կ'իյնար : Այս Երին վրայ Ահարոն 123 տարեկան մեռաւ, և Մովսէս քահանայապետական զգեստները անոր Եղիազար տղուն հագցընելով Ահարոնին տեղ քահանայապետ դրաւ զանի :

Մովսէս ինչո՞ւ շնեց պղնձէ օձը .

102. Հովը լեռնէն դէպ ի կարմիր ծով երթալու ճամբայ բռնեց Մովսէս՝ ինչպէս որ Աստուած պատուիրեր էր . ժողովուրդը ասկէց յոգնելով և մանանայէն ալ զղուանք բերելով տրանջալ սկսան նէ, Աստուած բարկանալով օձեր զրկեց անոնց վրայ, որով շատ մարդ մեռան : Եւ երբ զղացին, Մովսէս Աստուծոյ հրամանաւը պղնձէ օձ մը շինեց և ցողի մը գըլուխ անցընելով տնկեց բանակին մէջ տեղը, և օձէն զարնուողը անոր նայեր նէ մահուանէ կ'աշտուէր :

Խորայէլացիք ի՞նչպէս Յորդանան զետին եղերքը հասան .

103. Խորայէլացիք հետզհետէ Ամովըհացւոց ու Մովսէսի հետ պատերազմելով յաղթեցին, և անոնց Երկիրներուն տիրելով

հասան Յորդանանու եղերքը . Մովսէս այս  
տեղուանքը Խորայէլացւոց Երկուք ու կէս ցե-  
զին բաժնեց , մնացած ինն ու կէս ցեզին ալ  
Յորդանանու միւս կողմը եղած Երկիրները տըր-  
ուելու էին :

Ո՞ւր մեռաւ Մովսէս .

104. Մովսէս Յորդանանու միւս կողմը  
չկրցաւ անցնիլ . տեսաւ Աքարիմ կամ Նաբաւ  
Երին վրայէն Յորդանանու միւս կողմի Երկիր-  
ները , զօրոնք Աստուած խոստացած էր Խորա-  
յէլացւոց , և 120 տարեկան մեռաւ , և իրեն  
յաջորդեց Յեսու , որ Եփրեմի ցեղէն էր :

### ՅԵՍՈՒ

Խորայէլացիք ի՞նչպէս անցան Յորդանան գետէն .

105. Յեսու Մովսէսի յաջորդելուն պէս  
պատրաստեց Ժողովուրդը Յորդանանէն անցընե-  
լու համար : Քահանաները Տապանակը վերցու-  
ցած Ժողովուրդին առջեւէն կ'երթային , և Երր  
ուարելնին Յորդանան գետին մէջ կոխեցին , իս-  
կոյն Աստուած գետին ջուրերը Երկու բաժնեց .  
Քահանաները կեցան գետին մէջ , մինչեւ որ  
Ժողովուրդը գետին միւս կողմը անցաւ . Ետքը  
իրենք ալ գետէն դուրս Ելնելնուն պէս՝ ջուրե-  
րը նորէն միացան :

Խորայէլացիք Երբ Յորդանանու միւս կող-  
մը անցան , ալ մանանա իշնելը դադրեցաւ , ու  
զատիկը ցորենի բաղարջով ըրին :

Ի՞նչպէս առ ին Երիքովը .

106. Յեսու պաշարեց զերեքով , և քա-  
հանաները Տապանակով Եօթն օր Երիքովի պա-  
րիսպներուն չորս կողմը պտտեցան . Եօթներորդ  
օրը պարիսպները վիլան և Խորայէլացիք ներս  
մննելով քաղաքին տիրեցին :

Յեսու Գայի քաղաքին վրայ ալ յարձա-  
կեցաւ , առաւ ու կրակի տուաւ զայն :

Գաբաւ մնացիք ի՞նչպէս ապատեցան Խորայէլացւոց ձէռքէն .

107. Գաբաւոնացիք Խորայէլացիներէն  
վախնալով՝ վարպետութեամբ մը անոնց հետ  
գաշինք դրին , հետու տեղերէ եկած ձեւացը-  
նելով ինքինքնին . բայց Երբ Յեսու իմացաւ որ  
մօտակայ Ժողովուրդ մըն են . Գաբաւոնացիք  
գացին տիրեցին անոնց քաղաքներուն և Ժողո-  
վուրդին չդպան , բայց զանոնք իրենց ծառա-  
յութեանցը գործածել սկսան :

Ագնիքնեկ ի՞նչպէս բռնուեցաւ .

108. Յետոյ Յեսու Երուսաղէմի Աղոնի-  
քեզեկ թագաւորին վրայ յարձակեցաւ , և տես-  
նելով որ պատերազմը չըլմցած Երեկոյ կ'ըւ-

լայ, Աստուծոյ աղաչելով արեւը կայնեցուց, մինչեւ որ թշնամին յաղթեց, և Ադոնիքեղեկը իր չորս նիզակակից թագաւորներովը բռնեց Յեսու և սպաննեց :

Յեսու որո՞ւ դէմ վերջին պատերազմ ըրաւ .

109. Վերջին ու սաստիկ պատերազմ մ'աւըրաւ Յեսու՝ Սուր քաղաքին Յարին թագաւորին հետ և յաղթեց : Ասանկով Յեսու վեց տարուան մէջ ամբողջ Քանանի կամ Աւետեաց երկրին տիրեց . և ընդ ամենը 29 թագաւոր բռնեց հոն ու ամենն ալ սպաննեց :

Յորդանամու միւս կողմի երկիրները որո՞նց բաժնեց Յեսու :

110. Յեսու այն երկիրները Խրայէլացւոց ինն ու կէս ցեղին բաժնեց, ինչպէս որ Մոլսէս որոշած էր . միայն թէ Ղեւտացւոց ցեղը մէկ տեղ մը մասնաւոր երկիր չունէր, այլ քառասուն և ութը քաղաք ունէր բոլոր Աւետեաց երկրին մէջ, որոնց վեցը + առաստանէ կ'ըսուէին, և ակամայ մարդասպան մը հոն փախչելու ըլլար, կ'աղատէր :

Քանի՞ տարեկան մեռաւ Յեսու .

111. Յեսու Խրայէլացիները Աւետեաց երկրին տէր ընելէն ու զանոնք հոն տեղաւորելէն ետքը 140 տարեկան մեռաւ :

ՔԱԴԵՅ

Յեսուն ետքը որո՞նք կառավարեցին Խրայէլացիները .

112. Յեսուայ մահուանէն ետքը Յուղայի ցեղին իշխանները կը կառավարէին Խրայէլացւոց աղդը : Ասոնցմէ էր Քաղեր որ Մոլսէսի և Յեսուայ ատենն ալ մեծ ծառայութիւններ ըրած էր :

113. Քաղերին առաջնորդելովը Խրայէլացիք Քանանացւոց ու Փերեղացւոց դէմ պատերազմ ըրին ու անոնց Ադոնիքեղեկի թագաւորը բռնելով ձեռքերն ու ոտքերը կտրեցին . Ինչպէս որ ինք ալ ուրիշ եօթանասուն թագաւորներու ըրած էր :

Աստուած ինչո՞ւ երբեմն կը պատժէր Խրայէլացիները .

114. Խրայէլացիք իրենց ժառանգած սահմաններուն մէջ բոլոր կռապաշտ աղդերը ջնջելուն տեղը ինչպէս որ Աստուած հրամայեր էր . շատերը իրենց հարկատու ըլլալու համար թողուցեր էին . որոնց հետ ընտանութիւն ընելով քիչ քիչ սկսան ճշմարիտ աստուածպաշտութեան օրէնքէն պաղիլ : Աստուած ալ զանոնք Խրայէլու համար երբ կռապաշտութեան կը հետեւէին, այլաղեաց ձեռքը մատնելով կը պատժէր . և երբ զղալով առ Աստուած կը դիմէին, այն ատենն ալ դթալով իրենց մէջն մէ-

կը կը յարուցանէր, որ կ'ազատէր զանոնք թըշ-  
նամիներէն, և բոլոր ազգին կառավարութիւնը  
իր ձեռքը կ'առնէր, ասանկները դատաւոր  
կ'ըսուէլն :

ԳՈԴՈՒՆԻԵԼ

Ո՞վ եղաւ առաջին դատաւորը .

145. Դատաւորաց առաջինը եղաւ Գոդո-  
նիէլ Քաղերայ պղտիկ եղբայրը, որ Միջադետի  
Ասորւոց Քուսարսաթեմ թագաւորին ձեռքէն  
ազատեց Խորայէլացիները, ութը տարի անոր  
բռնութեանը չարաշար ծառայելնէն ետքը :

Ա.Ի.ՈՎ.Դ

Ո՞վ յաջորդեց Գոդոնիէլն :

146. Գոդոնիէլն ետքը դատաւոր եղաւ  
Աւովդ՝ Բենիամինի ցեղէն : Յսի Խորայէլացինե-  
րը Մովլաբացւոց էդղոմ թագաւորին ձեռքը  
տան և ութ տարի չարչարուելէն ազատելու  
համար, որ մը Խորայէլացւոց ընծաներն առած  
էդղոմին դնաց, ու քեզի ծածուկ խօսք ունիմ  
ըսելով՝ էդղոմին սենեակէն բոլոր ծառաները  
դուրս հանել տուաւ . և նոյն միջոցին էդղոմին  
մօտենալով՝ վերարկուին տակը պահած դանա-  
կը հանեց, զարկաւ գետինը կործանեց զէդ-  
զոսը, ու շուտ մը դուրս ենելով Խորայէլացի-

ները ոտք հանեց, ու գերութենէ ազատեց  
զանոնք :

ՍԱՄԵԳԱՐ

Ո՞վ յաջորդեց Աւովդի .

147. Աւովդին տեղը դատաւոր եղաւ  
Սամեգարը որ կտրիճ մարդ մ'ըլլալով՝ կուիք  
մը ժամանակ արօրի մաճով 600 այլազգի սպան-  
նեց :

ԳԵԲՈՐԱ ԵՒ ԲՈՐԱԿ

Սամեգարին ո՞վ յաջորդեց .

148. Սամեգարին ետքը Գեբորա մարդա-  
րէհուին սկսեց դատաւորութիւն ընել Խորայէ-  
լացւոց : Գեբորա Քանանացւոց Յաբին թագաւ-  
որին ձեռքէն Խորայէլացիները ազատելու հա-  
մար, կանչեց իր քովը Բարակը, որ Բենիամի-  
նի ցեղէն կտրիճ մ'էր, և անոր ձեռքովը  
յաղթեց Յաբին թագաւորին Միսարա զօրա-  
վարին :

ԳԵԴԵՈՆ

Ո՞վ էր Գեդէոն .

149. Աստուած Բարակին տեղ Խորայէ-  
լացւոց դատաւոր ընտրեց Գեդէոնը՝ Մանասէի

ցեղէն : ԳԵՂԷՌՆ իր թշնամիներուն յաղթելուն  
վրայ ապահով ըլլալու համար , խնդրեց Աս-  
տուծմէ որ միայն գետինը փռած գղաթը  
(փէօստէքի) թրջի գիշերը , և գետինը չոր մը-  
նայ : Առաւատուն ելաւ տեսաւ որ գետինը չոր  
էր , բայց գղաթը քամելով կոնք մը ջուր վա-  
զեց վրայէն : Ետքը ուզեց որ գետինը թրջի ու  
գղաթը չոր մնայ , Աստուծած այս խնդիրն ալ  
կատարեց :

ԳԵՂԷՌՆ ի՞նչպէս աղատեց Խսրայէլացիները Մադիանաց-  
ւոց ձեռքէն .

120. ԳԵՂԷՌՆ այս հրաշքով զօրացած իս-  
րայէլացիները Մադիանացւոց ձեռքէն աղատե-  
լու համար Աստուծոյ հրամանաւը հետը միայն  
300 կտրիճ զինուր առաւ , մէկ ձեռքերնին  
մէյմէկ եղջիւրէ փող տուաւ , միւս ձեռքերնին  
ալ մէյմէկ սափոր՝ մէջը վառած ճրադով , կէս  
գիշերին յանկարծ Մադիանացւոց վրայ ին-  
կան : Եւ երբ ԳԵՂԷՌՆ նշան տուաւ , իսկոյն  
զինուրները փողերը հնչեցին , սափորները կոտ-  
րելով՝ ճրադները գուրս հանեցին , և Առ- Տե-  
ռն և ԳԵՐՔԱՃ պօռալով , սոսկալի ջարդ մը տալ  
սկսան թշնամիին զօրաց , որոնք գիշերային մը-  
թութեան մէջ աւելի եւս շփոթած զիրար կը  
ջարդէին :

ԱԲԻՄԵԼՔԻ

Ո՞վ յաջորդեց ԳԵՂԷՌՆին .

121. ԳԵՂԷՌՆի տեղը Աբիմելքի իր որ-  
դին դատաւոր եղաւ : Աբիմելքի իր իշխանու-  
թեանը մէջ ապահով մնալու համար իր եօթա-  
նասուն եղբայրները եփրա քաղաքին մէջ քարի  
մը վրայ մորթել տուաւ . միայն անոնց ամենէն  
փոքրը Յովամթան փախչելով աղատեցաւ :

Աբիմելքի ի՞նչպէս մեռաւ .

122. Աբիմելքի քանի մը տարի իշխելէն  
ետքը . որ մը պատերազմի ատեն երբ բերդի  
մը գուռին մօտեցաւ , վերէն կին մը երկանի  
քար մը նետեց գլխուն , որով խիստ գէշ վիրա-  
ւորուեցաւ . և կապարճակիրին հրամայեց որ  
սուրովը զարնէ զինքը , որպէս զի կնոջ ձեռքէն  
մեռած չսեպուի : Եւ ասանկով իր եղբարցը վր-  
այ ըրած անօրէնութեան պատիժը կրեց :

ԹՈՎ. Դ. Ա. ԵՒ ՑԱՅԻՐ

Ո՞րո՞վ յաջորդեցին Աբիմելքին ,

123. Աբիմելքէն ետքը թովզա ու Յա-  
յիր ետեւէ ետեւ բաւական ժամանակ դատա-  
ւորութիւն ըրին :

ՅԵՓԹԱՅԵՀԵ

Ո՞վ էր ՅԵՔԹԱՅԵ, և ի՞նչ ուստ ըրաւ Աստուծոյ .

124. ՅԵԿԻՐԵՆ ԵՄՔԸ ՅԵԿԻԹԱՅԵ Առաջ  
ՆՈՐԴԵց ԽԱՐԱՅԵԼԱԳՎՈՐ . Ա.ՄԻԿԱ Ա.ՄՈՆԱԳՎՈՐ ԴԵմ  
ԱՊԱՏԵՐԱՂՄԻ ԳԱՋԱՃ ԺԱՄԱՆԱԿԸ ՈՒԽՄ ԾՐԱւ  
ԱՍՏՈՒՃՈՅ . որ Եմէ պատերազմէն յաղթական  
ՄՈՒՆ դառնայ . ամենէն առաջ իր դէմն ԵՆՈՂԸ  
ԹՂՋԱԿԵՂ ԸՆԷ Ա.ՄՈՒՆՃՈՅ :

Ասոււած կատարե՞ց ՅԵԿԻԹԱՅԵի ԼԱԽԵՂԸ :

125. Ա.ՄՈՒՆՃԱՃ յաջողութիւն տուաւ ՅԵԿԻ  
ԹԱՅԵՀՆ , ու ՅԵԿԻԹԱՅԵ ԵՐԲ յաղթութեամբ տուն  
կը դառնար , իր մէկ հատիկ աղջիկը թմփուկ  
զարնելով դէմն ելաւ . ՅԵԿԻԹԱՅԵ խիստ ցաւե  
լով “վայ ինձի ”, գոչեց , և իմացուց աղջկանը  
իր ԸՐԱՃ ուխտը :

ՅԵԿԻԹԱՅԵ ալ կատարե՞ց իր ուխտը .

126. Ա.ՂՋԻԿԸ հօրը ԹոյլսուութեամբԸ ,  
ԵՐԿՈՒ ամիս իր ԸՆԿԵՐԱԿԻԵց օրիորդներուն հետ  
ԼԵՌՈՆԵՐՈՒՆ մէջ իր կուսութիւնը ողբաց , յետոյ  
ՅԵԿԻԹԱՅԵ կատարեց իր ուխտը :

ՅԵԿԻԹԱՅԵ ուրիշ որո՞ւ չետ կուի ըրաւ .

127. ՅԵԿԻԹԱՅԵ ԵՎՐԵՄԻ ցԵՂԻՆ հետ ալ  
մեծ կուիւ մ'ըրաւ , 42,000 մարդ ջարդեց աւ  
նոնցմէ :

ԵՍԵԲՈՆ , ԵԶՈՆ , ԱԲԴՈՆ

Որո՞սպ յաջորդեցին ՅԵԿԻԹԱՅԵի .

128. ՅԵԿԻԹԱՅԵՀՆ ԵՄՔԸ ԵՄԵԼԵ ԵՄԵԼ  
ԴԱՏԱՎՈՐ ԵՂԱՆ ԵՄԵՐՈՆ , ԵՂՈՆ և Ա.ԲԴՈՆ :

ՍԱՄՓՍՈՆ

Ա.ԲԴ.ԸՆԷՆ ԵՄՔԸ ո՞վ եղաւ դատաւոր .

129. Ա.ԲԴ.ԸՆԻ մահէն քառասուն տարի  
ԵՄՔԸ ԽԱՐԱՅԵԼԱԳՎԻՆԵՐԸ այլազգեաց լուծէն աւ  
զատելու համար Ա.ՄՈՒՆՃԱՃ դատաւոր ընտրեց  
ՍԱՄՖՍՈՆԸ , որ Դանի ցեղէն Մանովէ անունով  
մարդու մը զաւակ էր , և ծնանելու ատենը հը-  
ըեշտակ Ա.ՄՈՒՆՃՈՅ խմացուց հօրն ու մօրը թէ  
ՍԱՄՖՍՈՆ Ո-ԴՐՈՒՄՆ Ա.ԴՐՈՒ-Ն պիտի ըլլայ , և ա-  
նոր դլսու մազերը չպիտի կտրուին :

ՍԱՄՖՍՈՆ առաջին անգամ իր զօրութիւնն ի՞նչպէս յայտ-  
նեց .

130. ՍԱՄՖՍՈՆ չափահաս ըլլալով , որ մը  
ԵՐԲ ԹԱՄՆԱԺ-Ա Կ'ԵՐԹԱՐ այլազգի աղջկան մը  
հետ հարսնիքի խօսք կապելու համար , ճամ-  
բան առիւծի կորիւնի մը հանդիպեցաւ . ՍԱՄՖ-  
ՍՈՆ դազանին ԵՐԿՈՒ կզակներէն բռնեց , ու  
բերանը պատուելով սպաննեց զայն :

Ք.անի մ'օրէն ԵՄՔԸ դարձեալ նոյն ճամբա-  
յէն անցնելու ատենը , տեսաւ որ մեղուները

մեղը շինած էին առիւծին բերնին մէջ, առաւ  
մեղրէն և աղջկան տունը գնաց հարսնիքը կա-  
տարելու համար :

Հարսնեաց մէջ ի՞նչ հանելուկ զրացեց Սամիսն .

134. Հարսնեաց ուրախութեան մէջ՝  
այն մեղրէն քովի այլազգի կտրիճներուն տա-  
լով Սամիսն սա հանելուկն ըստ, էրողն ի-  
բակուր, հղուն անոյշ ելու . և պայման դրաւ որ  
եթէ դիտնան, ինք անոնց երեսուն պատտառա-  
կալ և երեսուն պատմուճան տայ . չդիտնան նէ  
անոնք իրեն տան :

Այլազգի կրցա՞ն լուծել հանելուկը .

132. Այլազգիները Սամիսնին կնոջը ձե-  
ռօք իմացան հանելուկն միտքը և ըսկն Սամի-  
սնին . ժեւէ անոյշ չ'նւ իս, առէածէ ուժով ՛վ իս :  
Սամիսն կնոջը խարդախութենէն զզուեցաւ,  
և պայմանը վճարելու համար Ասկաղոն իջաւ ու  
երեսուն այլազգի մեռցնելով անոնց հագուստը  
բերաւ տուաւ հանելուկը գիտցողներուն :

Սամիսն ի՞նչ քաջութեան գործեր ըրած ունի .

133. Սամիսնի բարկութիւնը օրէ ՚օր  
զայրանալով կինը թողուց և այլազգիներուն  
շատ վնաս հասցնել սկսեց . անդամ մը իշու ծը-  
նօտով 1000 հոգի սպաննեց այլազգիներէն .

անդամ մ'ալ գաղաքին մէջ պաշարուած  
ըլլալով, կէս գիշերին ելաւ Սամիսն, քաղա-  
քին դուռը սեմովն ու նդովը տեղէն հանեց,  
կոնակը զարկաւ ու լերան գլուխը տարաւ ձը-  
գեց :

Սամիսն ի՞նչպէս բռնուեցաւ այլազգիներէն .

134. Այլազգիները Սամիսնի ձեռքին ա-  
զատելու ճարերնին հատած, դալիլա անուն կը-  
նո՞ջ մը շատ պարզեւներ խոստացան որ Սամի-  
սնը տկարացնելով իրենց ձեռքը մատնէ : Դա-  
մակար Սամիսնի խօսքերուն քանի մը անդամ  
խարուելէն ետքը՝ վերջապէս երկար թախան-  
ձանքներով ուժը դիմու մազերուն վրայ ըլլա-  
լը իմանալով, խօրունկ քունին մէջ ածիկել որ-  
ւաւ և այլազգիներուն մատնեց, որ եկան բըռ-  
նեցին Սամիսնը և աչքերը փորելով դաղա քա-  
ղաքը չաղացքի կապեցին շղթաներով, որ ալիւր  
աղայ :

Սամիսն կրցա՞ւ իր վրէժն առնել այլազգիներէն .

135. Քիչ մը ժամանակէն ետքը այլազգի-  
ները դագոն կուռքին տօնը կատարելու ատե-  
նը, Սամիսնն ալ իրենց ժողովուած տունը բե-  
րին ու շէնքին երկու սիւներուն մէջ տեղը կե-  
ցնելով կը ծաղրէին զինքը : Սամիսնին մազերը  
բաւական երկնցած և ուժը աեղը եկած ըլլա-

լով, “Տէր զօրութեանց, յիշէ զիս, և այս անգամ ալ ինծի ոյժ տուր, ըստ, սիւները բըռնեց և այնպէս ուժով մը թօթվեց, որ իրենց տեղէն խախտելով կործանեցաւ տունը՝ ֆըլատակներուն տակը Սամիսոն 3000 այլազգեաց հետ մեռաւ, քսան տարի դատաւորութիւն ընելէն ետքը։ Յետոյ Սամիսոնի ազգականներըն եկան անոր մարմինը վերցնելով տարին հօրը գերեզմանը թաղեցին։

ՀԵՂԻ ՈՒ ՍԱՄՈՒԷԼ ՔԱՀԱՆՈՅԱՊԵՏԱԵՐԸ

Աստուած զ՞վ ընտրեց Սամիսոնին յաջորդ։

136. Սամիսոնին տեղը Աստուած իր ժողովրդեան առաջնորդելու համար Սամուէլն ընտրած էր։

Ո՞վ էր Սամուէլ։

137. Սամուէլ Ղեւտացւոց ցեղէն Եղկանա անունով մարդու մը զաւակ էր, և Աստուծոյ նուիրած ըլլալուն համար, տաճարը ընծայուեցաւ՝ չեղի քահանայապետին պաշտպանութեանը տակ։

Սամուէլի տպացութեանը ո՞վ կը կառավարէր ժողովուրդը։

138. Սամուէլի տղայութեանը չեղի կը կառավարէր ժողովուրդը։ Բայց չեղիին երկու

որդիքը Ովնի և գենեհէս շատ անկարգութիւններ կ'ընէին, և չեղի անփոյթ էր զանոնք սաստելու, ինչպէս որ պէտք էր։ Աստուած բարկանալով չեղիին անհոգութեանը վրայ, Սամուէլին միջոցաւ իմացուց անոր որ չարաշար պիտի պատժուին։

Աստուած ի՞նչպէս պատժեց չեղիի տունը։

139. Քիչ ատենէն Աստուծոյ սպառնացած պատիմը հասաւ չեղիի տանը վրայ։ Քանզի իսրայէլացիք այլազգեաց դէմ պատերազմունենալով միշտ կը յաղթէին։ ուստի Տապանակը Սելովէն առին բանակը տարին։ Ովնի և բենեհէս ալ միատեղ գացին։ Բայց Աստուած իսրայէլացւոց կողմը չըլլալով, յաղթուեցան այլազմիներէն՝ 30,000 հոգի կորսնցնելով, որոնց հետ կը գտնուէին նաեւ Ովնի և գենեհէս, ու Տապանակն ալ գերի տարին։ Չեղի իր տանը դուռը նստած ատենը երբ այս գոյմն առաւ, սրտի ցաւէն կռնակին վրայ ինկաւ, և կողը կոտրելով մեռաւ 98 տարեկան։

Տապանակն ի՞նչպէս դարձաւ գերութեսէն։

140. Այլազգիները Տապանակին գերութեանը համար վրանին եկած պատուհաներուն չդիմանալով, եօթը ամիսէն ետքը՝ իրենց քուրմերուն խորհրդով՝ Տապանակը շատ ըն-

**ծայներով** նոր սայլի մը վրայ դրած և երկու երինջի Ծած թող տուին որ տանին ։ Երինջներն ուղղակի Տապանակը Բեթսամիւս տարին։ Հոն Խարայէլացիք մեծ ուրախութեամբ դիմաւորեցին Տապանակին։ բայց իրենց ազօրինաւոր հետաքրքրութեանը համար՝ որ անխտիր Տապանակին մօտենալով մէջը զննելու եղան, 50,070 հոգի մեռան։

Հեղին տեղ ո՞վ անցաւ.

141. Սամուել Հեղին մեռած տարիէն մկսեց կառավարել զիրայէլացիս, և անոնց մէջ Աստուածպաշտութիւնը նորէն հաստատեց։

Սամուելի ժամանակ Խարայէլացիք ի՞նչպէս յադ թեցին այլազգեցաց.

142. Անդամ մը երբ Մասեփաթ ժողվուեր էին Խարայէլացիք, յանկարծակի այլաղդիք յարձակեցան անոնց վրայ։ Բայց Աստուածորոտման ձայներով շփոթութիւն ձգելով անոնց մէջ մկսան փախչիլ. Խարայէլացիք ետեւնուն իշնալով շատ մարդ չարդեցին։

Խարայէլացիք իրենց ի՞նչու թագաւոր ուղեցին և Աստուած զո՞վ ընտրեց թագաւոր։

143. Սամուելի ծերութեանը Ժամանակ եր որդիքը Յովէլ և Սբիա շատ կը կեղեքէին

Ժողովուրդը ։ Ժողովուրդն ալ ձանձրացած մէկ բերան իրենց թագաւոր ուղեցին. Սամուել ալ Աստուածոյ հարցնելով, ընտրեց անոնց թագաւոր ըլլալու համար Սաւուղը, որ Բենիամինի ցեղէն կիս անունով մարդու մը որդի էր։

### Հինգերորդ ՄԱՍ

ԹԱԴԱՌՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԻՆ ՄԻՆՉԵԱ ԲԱԲԵԼՈՆԻ  
ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

#### ՍԱԻՌԵԴ

Սաւոր ե՞րբ հրապարական թագաւոր օծուեցաւ.

144. Սաւուղ Սամուելին թագաւոր օծուելին վերջը 670,000 զօրքով զարկաւ ցրուեց այլաղդեաց բանակը, որ Գաղապահցւոց Յաբիս քաղաքը պաշարած էին։ Այս պատերազմէն վերջը Սաւուղ հրապարակաւ թագաւոր օծուեցաւ կը կին անդամ Սամուելին։

Ի՞չո՞ւ համար Սաւոր կ'ուզէր իր որդին Յովամիմնը մնայնել.

145. Անդամ մը Սաւուղ այլաղդեաց հետպատերազմ ըրած ատենը ուխտ ըրաւ որ այն օրը մինչեւ իրիկուն բան մը չուտեն, և կերողը մեռնի։ Յովամիմն Սաւուղին որդին անդիտու-

թեամբ քիչ մը մեղք կերաւ . իմացաւ Սաւուղ  
և երր կ'ուզէր որ սպաննէ իր որդին , ժողովուր-  
տը չժողուց :

Սաւուղ ի՞նչպէս անհապամդ գտնուեցաւ Աստուծոյ .

146. Սաւուղ Աստուծոյ հրամանովը 430,000  
հոգւով Ամաղեկացւոց վրայ քալեց , զամենքը  
բնաջինջ լրաւ , բայց անոնց Ո.գ.ադ թագաւորին  
և ընտիր կենդանիներուն խնայեց . ասով ան-  
հնաղանդ գտնուեցաւ Աստուծոյ հրամանին :

Սաւուղ ըրածին փոխարէս ի՞նչ պատիժ առաւ .

147. Աստուած ալ բարկանալով Սաւու-  
ղին վրայ , խրկեց Սամուէլն ի բեթղեհէմ , որ  
հոն Յուդայի ցեղէն Յեսաէ անունով մարդու մը  
Դաւիթ որդին թագաւոր օծէ Սաւուղին տեղ :

#### ԴԱՒԹ

Սաւուղ ինչո՞ւ կը դւահարէր .

148. Սամուէլ Աստուծոյ հրամանովը Սա-  
ւուղէն գաղտուկ թագաւոր օծելով զԴաւիթ ,  
Աստուծոյ հոգին ալ Սաւուղէն բաժնուեցաւ և  
Դաւիթին վրայ հանգչեցաւ . ասոր համար Սա-  
ւուղ երբեմն երբեմն կը դիւահարէր , և զին-  
քը զբօցնելու համար Դաւիթը բերին Սաւուղին  
քովը , որ քնար զարնէ . ասով Դաւիթ շատ սիրելի  
եղաւ Սաւուղին և անոր կապարճակիրն եղաւ :

Սաւուղ ինչո՞ւ սկսաւ նախանձիլ Դաւիթին ուրայ :

149. Քիչ ատենէն Սաւուղ Դաւիթին վը-  
րայ սկսաւ նախանձիլ . քանզի Դաւիթ Աստու-  
ծոյ ապաւինած մենամարտեցաւ Գողիաթ անուն  
այլազգի հսկային հետ , որ միայն իր անձին զօ-  
րութեանը վատահացած Խորայէլի Աստուածը  
կը նախատէր , և պարսատիկով քար մը նետե-  
լով Գողիաթին ճակտին , իսկոյն հսկայն գետինը  
փուուեցաւ . և ասով Դաւիթ Սաւուղին աւելի  
մեծ համբաւ ունեցաւ Խորայէլացւոց մէջ :

Դաւիթ ի՞նչպէս կը վարուէր Սաւուղին հետ .

150. Սաւուղին նախանձը հետղետէ ա-  
ւելնալով շատ որոգայթներ լարեց Դաւիթին  
համար որ բռնէ և սպաննէ զանի . բայց Աստ-  
ուած ազատեց զԴաւիթ : Դաւիթ ալ Սաւուղին  
չարասրտութեանը փոխարէն միշտ բարիք կ'ը-  
նէր անոր , քանզի երկու անգամ զՍաւուղ մեռ-  
ցընելու խիստ բարեպատեհ առիթներ ունե-  
ցաւ . բայց երկու անգամին ալ ի գործ չդրաւ :

Դաւիթ ե՞րբ թափառը եղաւ .

151. Սաւուղ վերջապէս Աստուծոյ երե-  
սէն ինկած պատերազմի մէջ ինկաւ մեռաւ :  
Դաւիթ Սաւուղի մահը ողբալէն վերջը թագա-  
ւորեց նախ եօթը տարիի շափ Յուդայի ցեղին

Վրայ, յետոյ բոլոր իսրայէլի թագաւոր օծուեցաւ :

Դաւիթ թագաւոր ճանչցուելուն պէս ի՞նչ ըրաւ .

152. Դաւիթ բոլոր իսրայէլի թագաւոր ճանչցուելուն պէս Սիոն լերան վրայի բերդն առաւ ու + Դաւիթ կոչեց : Յետոյ այլազգեաց դէմալ շատ պատերազմներ ըրաւ, և ջապանակն ալ վերցուց կարիաթարիմէն բերաւ յերուսաղէմ :

Դաւիթ քանի անդամ մեղք գործեց Աստուծոյ դէմ .

153. Դաւիթ երկու անդամ ծանր մեղք գործեց Աստուծոյ դէմ, և պատժուեցաւ . սա կայն շուտով զղաց և թողութիւն առաւ Աստուծմէ :

Դաւիթ ի՞նչ սրտի ցաւ տնեցաւ .

154. Դաւիթին սրտին մեծ ցաւ եղաւ իր Արիսողոմ տղուն մահը, որ իր հօրը Դաւիթին տեղը թագաւոր ըլլալ ուղելով երբ կը պատերազմէր անոր դէմ, և յաղթուելով ջորի մը հեծած կը փախչէր, կաղնիի մը տակէն անցնելու ատեն մազերը ծառին ոստերուն պղլուելով ջորին տակէն ելաւ և ինք կախուած մնաց . յետոյ Յովաբ զօրապետը նետով զարկաւ մեռցուց զՊաքիսողոմ :

Դաւիթ ուրիշ ի՞նչ գործեր ունեցաւ, և բայց տարեկան մեռաւ .

155. Դաւիթ ուրիշ շատ պատերազմներ ալ ունեցաւ . և Աստուծոյ օդնութեամբը բոլոր թշնամիներուն յաղթելէն, ու իր տէրութիւնը Միջերկրական ծովէն մինչեւ Եփրատ գետը ընդարձակելէն ետքը, տեսնելով որ ծերացածէր, հրաման ըրաւ որ Սողոմոն թագաւոր օծուի . և ինքը 40 տարի թագաւորելով 70 տարեկան մեռաւ :

### ՍՈՂՈՄՈՆ

Սողոմոն ի՞նչ խնդրեց Աստուծմէ .

156. Սողոմոն 42 տարեկան հօրը տեղ յաջորդելուն պէս, Գաբաւոն քաղաքը գնաց Աստուծոյ Հորհակալութեան զոհ մատուցանելու համար : Աստուած հօն երեւնալով Սողոմոնին՝ ինչ որ խնդրէ նէ տալ խոստացաւ : Սողոմոն մինակ իմաստութիւն խնդրեց . Աստուած ալ ոչ միայն շատ իմաստութիւն տուաւ Սողոմոնի, այլ միանդամայն հարստութիւնն ու փառքն ալ աւելցուց :

Սողոմոնի իմաստութիւնը ի՞նչ բանի մէջ երեւցաւ .

157. Քիչ ատենէն Սողոմոնի իմաստութիւնը դատի մը մէջ երեւցաւ : Երկու կին դա-

տաստանի եկած ըլլալով, երկուքն ալ կը պընդէին ողջ զաւկի մը համար՝ թէ իմն է, և մեռածի մը համար՝ թէ իմն չէ։ Սողոմոն հրաման ըրաւ որ ողջ զաւակը երկու կտոր ընելով երկու կնոջը բաժնեն. ան ատեն ողջ տղուն ճըշմարիտ մայրը չդիմանալով աղաչեց որ տղան ողջ միւսին յանձնեն. ասոր հակառակ միւս կինը կը պնդէր տակաւին թէ բաժնուի տղան. որով իմացուեցաւ տղուն ճշմարիտ մայրը և իրեն արըուեցաւ իր զաւակը։

Սողոմոն ի՞նչ շիսութիւններ ըրաւ.

158. Սողոմոն եօթը տարուան մէջ վառուծոյ տաճարը շինեց լմնցուց, և անոր նաւակատիքը մեծ հանդիսիւ կատարեց ։ Յետոյ երկու խիստ գեղեցիկ արքունի պալատներ շինեց. և նաւեր ալ շինել տուաւ ծովու վրայ, որոնք շատ ոսկի, ազնիւ քարեր և այլն կը բերէին։

Ապրան թագուհին ի՞նչու յԵրուսաղէմ եկաւ.

159. Սողոմոնի իմաստութիւնը բոլոր աշխարհ հռչակուած ըլլալով, Սաբա աշխարհին թագուհին երուսաղէմ եկաւ Սողոմոնին իմաստութիւնը լսելու։

Սողոմոն ի՞նչու բարկացուց պատուած.

160. Սողոմոն օրինաց դէմշատ այլաղդի

կիներ առնելով, և մինչեւ անդամ անոնց սիրոյն համար կռատուններ շինելով և կռապաշտութիւն ընելով զԱստուած բարկացուց. որուն համար Աստուած Սողոմոնի իմացուց որ թագաւորութիւնը իր ձեռքէն պիտի առնէ և իր ծառային պիտի տայ։ Բայց Աստուած դարձեալ իր Դաւիթ ծառայն յիշելով և անոր սիրոյն համար՝ բոլորովին թագաւորութիւնը Սողոմոնին ձեռքէն չառաւ, և միայն փոքր մաս մը իրեն թողուց. և այս բանս ալ Սողոմոնին մահուանէն ետքը ձգեց։

Սողոմոն ի՞րը մեռաւ, և թագաւորութիւնը ի՞նչու երկուքի բաժնուեցաւ.

161. Սողոմոն 40 տարի թագաւորելէն ետքը մեռաւ։ Որբովամ Սողոմոնի որդին, յաջորդեց իր հօրը, և թագաւոր եղաւ Յուդայի և Բենիամինի ցեղերուն. իսկ միւս ցեղերուն հետ Որբովամ շատ խստութեամբ վարուիլ ու զելուն համար, անոնք ալ զինքը մերժելով և թագաւոր չճանչնալով, իրենց թագաւոր ընտրեցին Յերորովամը, որ Եփրեմի ցեղէն էր։ Ասանկով Աստուծոյ պատիքը Սողոմոնի տանը վըրայ կատարուեցաւ, և թագաւորութիւնը երկուքի բաժնուեցաւ. Թագաւորութիւնը իւրայէւ, որ բաժնուած տասը ցեղերուն թագաւորու-

թիւնն էր, և թագավորութեան Յուրացի, որ Սովումնի տանը թագավորութիւնն էր երկու ցեղի վրայ :

ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ ԽՄՐԱՅԵԼԻ

ՅԵՐՈԲՈՎԱՄ

Յերոբովամ ի՞սչպէս կռապաշտութեան մէջ ձգեց ժողովրդը .

162. Յերոբովամ թագավոր ըլլալէն յետոյ, Աստուծոյ հրամանին դէմ արդիկեց ժողովութը Երուսաղէմ Երթալէ և զոհ մատուցանելէ . ուստի ոսկիէ Երկու Երինջ կանդնել տուաւ, որպէս զի ժողովուրդը զանոնք պաշտեն . ասանկով ժողովուրդը կռապաշտութեան մէջ ձգեց :

Աստուած ի՞սչ պատիժ սպառնացաւ Յերոբովամին .

163. Աստուած բարկանալով Յերոբովամի վրայ, Աքիս մարդարէին միջոցաւ իմացուց անոր, որ իր ըրած ապերախտութեանը և կռապաշտութեանը համար զինքը իր տնովը տեղվը պիտի ջնջէ :

Քանի՞ տարի թագաւորեց Յերոբովամ.

164. Մեռաւ Յերոբովամ 22 տարի թագաւորութիւն ընելէն ետքը . իրեն յաջորդեց իր որդին՝ Նաբատ :

ՆԱԲԱՏ

Ի՞սչպէս կատարուեցաւ Աստուծոյ սպառնացած պատիժը Յերոբովամի տանը վրայ .

165. Աստուծոյ սպառնացած պատիժը շուտով հասաւ Յերոբովամի տանը վրայ . Նաբատի թագավորութեան Երկրորդ տարին՝ Բասասա անունով իսաքարի ցեղէն մէկը զինքը սպաննեց, և անոր տեղը թագավոր նստելով՝ Յերոբովամին տունը թրէ անցուց :

ԲԱ.Ա.Յ.Ը.

Բաասա քանի՞ տարի թագաւորեց .

166. Բաասա կռապաշտութենէ ետ չըկեցաւ . Աստուած ալ Յէու մարդարէին բերնով իմացուց որ իրեն տունն ալ Յերոբովամինին պէս պիտի ջնջէ . Բայց Բաասա մեռցուց զՅէու, և 23 տարի թագաւորելէն ետքը մեռաւ :

ԷԼ.Ա.

Բաասին ո՞վ յաջորդեց .

167. Բաասին յաջորդեց իր որդին Ելա : Աստուծոյ սպառնացած պատիժը շուտով հասաւ Բաասին տանը վրայ ալ . քանզի Ելայի թագաւորութեան Երկրորդ տարին՝ Զամբրի զօրապետը սպաննեց զլալա և անոր տունը թրէ անցուց :

ԶԱՄԲԲԻ ԵՒ ԱՐՄԻ

Էայիս ո՞վ յաջորդեց .

168. Զամբրի յաջորդեց էլային . բայց եօ-  
թը որ միայն թագաւորեց , քանզի իսրայէլաց-  
ւոց բանակին սպարապետ Ամրիին ձեռքը չի յ-  
նալու համար՝ ինքինքը տնով տեղովը այրեց :  
Զամբրիս տեղն ո՞վ անցաւ .

169. Զամբրիին տեղն անցաւ Ամրի . որ  
Սամարիա լեռը համանուն քաղաք մը շինեց .  
և 12 տարի թագաւորելէն ետքը մեռաւ :

Ա.Ք.Ա.Բ

Ամբին ո՞վ յաջորդեց .

170. Ամրիին յաջորդեց իր որդին Աքա-  
ար , որ այլազգի թագաւորի մը թեղարէլ ա-  
նուն աղջիկը առնելով , շատ անօրէնութիւններ  
ըրաւ և կռապաշտութիւնը աւելի արմատա-  
ցուց ժողովորդին մէջ :

Աքարու ի՞նչ պատիժ տուաւ Աստուած .

171. Այս ատենս էր Եղիա մարդարէն , որ  
Աստուծոյ նախանձովը վառուած Աքարու  
ամբարշտութեանը պատիժ ըզալու համար , Աս-  
տուծմէ ինդրելով դադրեցուց անձրեւն ու ցո-  
վը , որով իսրայէլացոց երկիրները սաստիկ  
սով եղաւ :

Եղիա ի՞նչպէս ազատեցաւ Աքարու ձեռքէն .

172. Աքարու ու թեղարէլ այս պատի-  
ժէս խրատուելու տեղը Եղիա մարդարէն սպան-  
նել կ'ուզէին . բայց անիկա Աստուծոյ հրամա-  
նաւը բոռաթու հեղեղատը գնաց պահուըտե-  
ցաւ , ուր ագռաւները իրեն ուտելիք հաց ու  
միս կը բերէին , և ջուրն ալ հեղեղատէն կը խը-  
մէր :

Անդնապի այրին ի՞նչով ապրեցաւ սովու ատնով .

173. Հեղեղատն որ ցամքեցաւ , Եղիա  
անկէց Աստուծոյ հրամանաւը Սիդոնացւոց Սա-  
րէփթա քաղաքը գնաց այրի կնոջ մը տուն . ո-  
րուն սափորին մէջ մնացած ափ մը ալիւրը և շի-  
շին մէջ գտնուած քչիկ մը եղը օրհնելով՝ այն-  
պէս աճեցուց , որ բոլոր սովին ատենը նոյն ա-  
մաններէն ոչ ալիւրը պակսեցաւ և ոչ եղը , և  
անոնցմով կերակրեցան թէ Եղիան և թէ այրին  
իր տղաքներովը . որոնցմէ մէկն ալ հիւանդու-  
թեամբ մը նոյն օրերը մեռնելով , Եղիա Աս-  
տուծոյ աղաշելով նորէն ողջնցուց :

Եղիա Ճշմարիս Աստուածը յայտնելու ի՞նչ կերպ բռնեց .

174. Երեք տարի ու կէս սովը տիրելէն  
ետքը , Եղիա մարդարէն Աստուծոյ ճշմարտու-  
թիւնն ու ամենակարողութիւնը յայտնելու հա-

մար՝ բոլոր ժողովուրդը և բահաղու քուրմերը  
մեկտեղել տուաւ Աքապին . և անոնց առջեր  
զոհի սեղան մը ինք շինեց . սեղան մ'ալ քուր-  
մերուն պատրաստել տուաւ . ու պայման դը-  
րաւ թէ ո՞ր սեղանի ողջակեզը երկնքէն հուր  
իջնելով լափէ նէ , այն ժողովը եան պաշտածը  
ճշմարիտ Աստուած ճանչցուի :

Ո՞ր սեղանին վրայ ի՞նաւ երլարէն հուրը .

175. Քուրմերը իրենց սեղանին վրայ մին-  
չև իրիկուն բահաղ կուռքին կանչեցին պօռա-  
ցին , բան մը չեղաւ : Եղիա մարդարէն ալ առ  
Աստուած աղօթքով աղաչեց . և Աստուած յայտ-  
նապէս երկնքէն կրակ իջնեցուց Եղիային պատ-  
րաստած սեղանին վրայ , և ողջակեզը լափեց  
լընեցուց : Այն ատեն ժողովուրդը սարսափելով  
ճշմարիտ Աստուածը խոստովանեցան և բոլոր  
քուրմերը ջարդեցին . ասոր վրայ Եղիայի խըն-  
դիրքով Աստուած անձրւ մը տուաւ , ու դադ-  
րեցաւ սովը իսրայէլացւոց երկրէն :

Աքասար ի՞նչ անիբաւութիւն ըլաւ իր Յեղաբէլ կոսչը  
մոռօք :

176. Աքասար մեծ անիբաւութիւն մ'ըրաւ  
իր կնոջը Յեղաբէլին ձեռօք , Նաբաւթ անուն  
մարդու մը այգին յափշտակեց և զինքը մեռ-

թընել տուաւ յանիբաւի . բայց ինքն ալ չազատե-  
ցաւ Աստուածոյ բարկութենէն ու պատերազմի  
մը մէջ զարնուեցաւ մեռաւ :

ՈՒՇՈԶԻԱ.

Աքասարին ո՞վ յաջորդեց .

177. Աքասարին յաջորդեց իր որդին Ո-  
քողիա , որ երկու տարի թագաւորելէն Ետքը .  
օր մը պատուհանէ վար իյնալով հիւանդացաւ  
մեռաւ :

ՅՈՎ.ՐՈ.Մ

Ոքողիային ո՞վ յաջորդեց .

178. Ոքողիա որդի չունենալով իր տեղը  
յաջորդեց Եղիայը Յովրամ :

Եղիա ի՞նչպէս երկինքը վերացաւ .

179. Յովրամին օրովը Եղիա մարդարէն  
ողջ ողջ երկինքը վերացաւ հրեղէն կառքով ու  
երիվարներով : Իրեն Եղիսէ աշակերտը որ ա-  
ռաջուց Աստուածոյ հրամանովը մարդարէ օծած  
էր , գուշակելով ասանկ ըլլալիքը՝ ինդրեց իր-  
մէն որ ունեցած կրկն ոգին իրեն տայ : Եղիա  
վերացած ատենը իր վրան առած մաշկեակը  
վերէն Եղիսէին գլխուն ձգելով ինդիրքը կա-  
տարուած ըլլալը իմացուց : Եղիսէ այս մաշկե-

կովըս Յորդանան գետին զարնելով՝ ջուրերը եր-  
կու կողմի բաժնեցան, ինք մէջ տեղաց միւս  
կողմը անցաւ գնաց. և ասով յայտնի եղաւ թէ  
Եղիսյի մարդարէութեան և հրաշագործութեան  
շնորհքը Եղիսէին վրայ հանդչած է :

Ուժը ի՞նչ հրաշը ըրաւ Եղիսէ .

180. Եղիսէ ուրիշ շատ հրաշքներ ալ  
ըրաւ. Երիքովի Ջրոյն վնասակարութեանը և  
Երկրին անդաւակութեանը համար, Ջրով ին ա-  
մանի մը մէջ օրհնած աղ նետելով, Ջրերուն ա-  
մենն ալ մէկէն բժշկեց : Պարտըկան այրի կնոջ  
մը մինակ օծուելու չափ եղը աճեցնելով, ան-  
կէց պարտքն ալ վճարել տուաւ ու տանը ապ-  
րուստն ալ հոդաց : Ազնուական կնոջ մը մեռած  
դաւակը աղօթքով ողջնցուց : Սամարիա եղած  
սովուն ատենը քիչ մը դարեհացով ու չոր թու-  
զով հարիւր հոդի կերակրեց : Նէկման ասորի-  
ին բորոտութիւնը Յորդանան լուացուել տալով  
բոլորովին բժշկեց :

Յէ՛՛

Յովքամիս տեղը սկայալորդեց.

181. Եղիսէ Աստուծոյ ազդեցութեամբը՝  
ինչպէս որ Եղիս ալ իրեն յանձնած էր, Ազայէ-  
ւ Ասորւոց թագաւոր, և Ծովքամայ սպարա-

պետ Յէուն ալ Խարայէլի թագաւոր օծեց գաղ-  
տուկ. Յէու այս եղածը ծածկել ուզեց ալ նէ՝  
զօրապետները հրատարակելով, Յովքամ Հրիո-  
թած Յէուին գէմն ելաւ կառքով. Յէու նե-  
տով մը զարկաւ սպաննեց կառքին մէջ Յովքա-  
մը, 12 տարի թագաւորելին ետքը :

Աստուծոյ Աքաարին տանը վրայ սպանացած պատիժը  
ի՞նչպէս կատարուեցաւ .

182. Խարայէլի թագաւորութեան տիրա-  
պետեց Յէու. և Աքաարին տանը վրայ Աստուծոյ  
սպանացած պատիժը ասոր ձեռքովը կատար-  
ուեցաւ . քանզի Յէու սպաննեց Յեղաբէլը ձիե-  
րու տաքին տակը կոխկուտել տալով . Աքաա-  
րին ԴՅ որդիքն ալ դլիսատել տուաւ . և այնպէս  
տունը տեղը ջնջեց բոլորովին :

Յէու ի՞նչ բարիք գործեց իր օրովը .

183. Յէու Աստուծոյ հաճելի դործ մը  
ըրաւ : Իր տէրութիւն մէջ Բահաղ կուռքը պաշ-  
տով և քուրմ որչափ կար նէ, ամենքը յատուկ  
հրովարտակով Բահաղու կուատանը մէջ ժող-  
վել տուաւ որպէս թէ հանդէս ընելու համար :  
Կուատունը իր զօրքին պաշտել տալով՝ մէջին-  
ները բոլը ջարդեց, Բահաղն ու կուատունը  
կործաննեց ու տեղը ոտից ճամփայ ըրաւ : Աստ-

ուած ալ թէուին այս բարեպաշտութեանը փոխարէն խոստացաւ որ անոր զաւակներէն մինչեւ չորս աղդ իսրայէլի աթոռը նստին :

Ի՞նչ վեճակի մէջ մեռաւ Յէու .

184. Յէու կատարեալ ծառայութիւն չըրաւ Աստուծոյ . Յերոբովամին կանգնած հորթերն ալ կը պաշտէր : Անոր համար Աստուած Ազայէլը որ Ասորւոց թագաւոր օծել տուաւ Եղիսէին , ասոր թագաւորութեանը դէմ հանեց , որ իսրայէլացւոց Յորդանանէն անդին եղող երկիրները զարկաւ , քաղաքնին կործանեց և շատ մարդ ջարդեց : Յէու այս ցաւով 28 տարի թագաւորելէն եղը մեռաւ :

#### ՅՈՎ.Ա.Ք.Ս.Զ

Յէուին ո՞վ յաջորդեց .

185. Յէուին յաջորդեց իր որդին Յովաքազ , որ բոլորովին կռապաշտութեան հետեւ լրան պատիժ՝ Ազայէլի պատերազմներուն երեսէն իր թագաւորութեան վիճակը յետին թշուառութեան մէջ ինկաւ : Բայց ետքը իր մեղացը վրայ զզլալով Աստուծոյ աղաչեց նէ , Աստուած իսրայէլի ժողովուրդը թշնամիին ձեռքէնիրկելու խօսք տուաւ : Այս յուսով Յու

վաքաղ մեռաւ իր թագաւորութեանը 17 երրդ տարին :

#### ՅՈՎ.Ա.Յ , ՅԵՐՈԲՈՎԱՄ

Յովաքաղին ո՞վ յաջորդեց .

186. Յովաքաղին յաջորդեց իր որդին Յովաքազ , իր հօրը ճամբովլը . և Եղիսէ մարդարէին գուշակելովլը երեք անգամ զարկաւ Ասորիքը , և իսրայէլացիներէն յափշտակուած քաղաքներուն շատը ետ առաւ : Նմանապէս Յուդայի Ամասիա թագաւորին վրայ ալ մեծ յաղթութիւն մը ըրաւ , և 12 տարի թագաւորելով մեռաւ :

Յովասի օրովը ի՞նչ պատահեցաւ .

187. Ասոր օրովը մեռաւ Եղիսէ մարդարէն ու թաղուեցաւ այրի մը մէջ . օր մը մեռել մը կը բերէին թաղելու , և աւազակներու պատահելով մեռելը նոյն այրին մէջ նետեցին ու փախան . մեռելը Եղիսէի ոսկորներուն դպչելով մէկէն ողջընցաւ ոտք ելաւ :

Ո՞վ յաջորդեց Յովասին .

188. Յովասին յաջորդեց իր որդին Յերոբովամ Բ . ասիկա իսրայէլի թագաւորութիւնը Ասորւոց բռնութենէն աղատեց . և իսրայէ-

լացւոց կորմնցուցած բոլոր երկիրները ետ առնելով, տէրութիւնը իր առաջին վիճակին հասցուց, և 40 տարի թագաւորելով մեռաւ :

Յերոբովամ Բ. ին օրը ո՞ր մարդարէն կար կարայէլ մէջ.

189. Ասոր ատենն էր Յովիսան մարդարէն, որ Աստուծոյ կողմէն Նինուէի կործանումը երթալ քարոզելը իրեն ծանր դալով երբ ծովով Թարսիս կը փախէր, նաւը այնպէս անօրինակ ալէկոծութեան մը բռնուեցաւ, որ ճարերնին հատաձ մէջը եղողներուն վրայ վիճակ ձգելով քաշածնին Յովիսանու երեսէն ըլլալը իմացուեցաւ նէ, զինքը իր կամերովը ծովը նետեցին, որ իսկոյն խաղաղցաւ :

Յովիսան ի՞նչպէս աղատեցաւ ծովէն .

190. Ահադին կէտ ձուկ մը Աստուծոյ հրամանաւը Յովիսանը կուլ տուաւ, և երեք օր երեք գիշեր փորուն մէջ ողջ պահելէն ետքը՝ տարաւ Նինուէի ծովեղերքը դուրս փախեցամ բողջ Յովիսան Նինուէ մոտաւ և սկսաւ Աստուծոյ հրամանը քարոզելու թէ երեք օրէն Նինուէ պիտի կործանի . Նինուէացիք Աստուծոյ ոզորմութեանը գիմելով իրենց մեղացը վրայ ապաշխարեցին և կործանումէն աղատեցան :

ԶԱՐԱՐԻԱ, ՍԵՂՎՈՒՄ, ՄԱՆԱՅԵՄ

Յերոբովամ Բ. ին ո՞վ յաջորդեց .

191. Յերոբովամ Բ. ին յաջորդեց իր որդին Զաքարիա, որ Յէուի զաւակներէն չորրորդ ազգ էր, ինչպէս որ իսոստացաւ Աստուծ (183) և Յէուի ցեղին վերջինն եղաւ : Քանզի 6 ամիս թագաւորելէն ետքը Աքիսայ որդին Սեղղումը ելաւ սպաննեց զանիկա, և ինք առաւ թագաւորութիւնը .

Սեղղում ո՞չչափ ատեն Յագաւորեց .

192. Ամսուան մը չափ հազիւ թէ կըրցաւ թագաւորել Սեղղում . մէկ մ'ալ դադդեայ որդին Մանայեմ թէրափէն եկաւ զարկաւ սպաննեց Սեղղումը, և անոր տեղն անցնելով 10 տարի թագաւորեց ու մեռաւ :

ՓՈԿԻԱ, ՓՈԿԵՔ ԵՒ ՈՎՍԵՔ

Մանայեմին որո՞նք յաջորդեցին Հետպէտէ .

193. Մանայեմին յաջորդեց իր որդին Փակիա, որ 10 տարի թագաւորելէն ետքը ըսպաննուեցաւ իր Փակէէ զօրապետէն : Փակիային տեղն անցաւ Փակէէ, ասոր օրովը Ասորոց թագղաթ Փաղասար թագաւորը եկաւ, և չատ իսրայէլացիներ գերի տարաւ Ասորեստան :

Փակէէ 20 տարի թագաւորելէն ետքը , Ովսէէ զինքն սպաննեց և թագաւոր նստաւ :

Ի՞նչպէս վերջացաւ Խարյէլի թագաւորութիւնը և որո՞ւ ձեռօք .

194. Ովսէէ Խարյէլի թագաւորներուն տասնելիններորդն ու վերջինն եղաւ . քանզի իր թագաւորութեան եօթներորդ տարին Ասորւոց Սաղմանասար թագաւորը իմանալով որ Ովսէէ ծածուկ օգնութիւն խնդրած է Եղիպտացիներէն՝ իրեն հարկատու չըլլալու համար , եկաւ երեք տարի Սամարիա քաղաքը պաշարելով առաւ , Ովսէէն շղթայի զարկած և անոր հետ բոլոր Խարյէլի ժողովուրդը գերի տարաւ ի Նինուէ : Այսպէս վերջացաւ Խարյէլի թագաւորութիւնը 250 տարիի չափ տևելէն ետքը :

ՏՕԹԻԹ

Ո՞ւ էր Տօթիթ , և ի՞նչ վարը ունէր .

195. Նինուէ գերի գացողներուն մէջն էր Տօթիթ՝ Նէփթաղիմի ցեղէն՝ իր Աննա կնիկովը և մէկ հատիկ Տուրիա զաւակովը : Ասիկա Աստուածպաշտութենէ երեք հեռացած չէր . Աստուած ալ զանիկայ Սաղմանասարայ հաճոյ երեցուց , որ իրեն վաճառական ըրաւ , և անով Տօթիթ շատ հարստացաւ և իր ազդակիցներուն

միշտ բարիք կ'ընէր . մինչև անդամ իր ազդէն անթաղ ձգուած մեռելները դաղսուկ կ'առնէր կը թաղէր : Օր մ'ալ ուշ ատեն մեռել մը թաղելով ըստ օրինաց պիղծ սեպուելուն համար տանը դրափ բակը պառկած տեղը՝ ճընճղուկները առաստաղէն աչքին մէջ ծրտելով աչքերը կուրցան . և ինք անդործ մնալով յետին աղքատութեան մէջ ինկաւ :

Տօթիթ իր ապրուստը ի՞նչպէս ճարեց .

196. Տօթիթ Մարաց երկիրը ճամբեց Տուրիան , որ հոն իր Գաբայէլ բարեկամին քով առաջուց աւանդ ձգած տասն քաննքար արծաթը առնէ բերէ : Տուրիայի ճամբու ընկեր մը գտնուեցաւ , օրը մէկ դրամ վարձքով , երեսասարդ մը , Ազարիա անուն : Ասիկա Տուրիային գրեթէ խնամահայր եղաւ քան թէ ուղեկից :

Ի՞նչ լինումք ըրաւ Ազարիա Տուրիային .

197. Ազարիա Տիգրիսի գետեղերքէն մեծ ձուկ մը բռնել տուաւ Տուրիային , որուն սիրտն ու լերդը և լեղին պահել պատուիրեց : Երբ Եկեղատան քաղաքը Հռագուէլի տունը իջևանեցան , անոր աղջկանը Սառային դեռ հալածեց՝ նոյն ձկանը սիրտն ու լերդը ծխեցընելով սենեկին

մէջ։ Սառան որ եօթն այր առեր և եօթն ալ  
իրենց փեսայանալու գիշերը դեկն խղդուեր է-  
նն, Ազարիային չնորհիւը այն չար ոգիէն աղա-  
տելով Տուբիան իրեն ամուսին առաւ, ինչպէս  
որ օրէնքը կը պահանջէր՝ իրմէ զատ Հռագուէլի  
աղդական չմնալուն համար։

Տուբիա ի՞նչպէս դարձաւ հօը տունը և ի՞նչ եղաւ.

198. Տուբիա իր Սառա կինը և անոր օ-  
ժիտ տրուած ինչքերը և Գարայէլին քովի ա-  
ւանդն ալ Ազարիային բերել տալով առաւ, ու  
Նինուէ հօրը տունը դարձաւ Ազարիային առաջ-  
նորդութեամբը։ Եւ ինչպէս որ անիկա պատ-  
ուիրեր էր, իսկոյն քովը պահած ձկան լեզին  
հօրը աչքին քսելով լրւաւորեց։ Տօրիթ ողջ ա-  
ռողջ իր Տուբիա որդին և նոր հարսը Սառան  
տեսնելով ուրախութենէն կը դրկէր կ'օրհնէր  
զանոնք։ և Ազարիայի ըրած բարերարութիւն-  
ները լսելով ուզեց որ մեծ պարզ և ատրութիւն  
ընէ անոր։ Ազարիա չընդունեց և վերջապէս  
յայսնեց որ ինքն է Ո.ափայէլ հրեշտակը Աս-  
տուծոյ կողմանէ զրկուած Ազարիայի կերպա-  
րանքով։ որ Տօրիթայ և Սառայի ըրած ա-  
զօթքներուն և բարեգործութեանց փոխարէն  
զիրենք բժշկէ, և Տուբիայի առաջնորդելով,

զանիկա երկու տանը երջանկութեանը միջնորդ-  
ընէ։ այս ըստ ու աներեցիթ եղաւ առջենուն-  
ցօրիթ սարսափելով փառք կուտար Աստուծոյ,  
և միշտ բարեպաշտութեամբ վարուելով 150  
տարեկան մեռաւ Նինուէ քաղաքը։

ԹԱԴԱԿՈՐՈՒԹԻՒՆ ՅՈՒԴԱՅԻ

#### Ո.ՈԲՈՎԱՄ

Ո՛վ Ո.ոբովամ, և Աստուած ինչո՞ւ պատժեց զանի։

199. Ո.ոբովամ Սողոմոնի որդին իր հօրը  
տեղը Յուդայի թագաւորութեան յաջորդելէն  
երեք տարի ետքը սկաս Աստուծոյ ճամքէն հեշ-  
տանալ։ ուստի շուտով Աստուած պատժեց զին-  
քը։ քանզի իր թագաւորութեան հինգերորդ  
տարին Եդիսատացւոց Սովորակիմ թագաւորը  
շատ զօրքով վլան եկաւ, առաւ երուսաղէմը  
և տաճարն ու թագաւորական գանձերը յա-  
փըշտակեց։ Ո.ոբովամ 17 տարի թագաւորելէն  
ետքը մեռաւ։

ԱԲԻՍԱ, ԱՍԱ ԵՒ ՅՈՎԱՓԱՏ

Ո.ոբովամին որո՞նք յաջորդեցին հետզհետէ։

200. Ո.ոբովամին յաջորդեց իր որդին

Արիստ, որ Յ տարի թագաւորելէն ետքը մեռաւ : Արիստին յաջորդեց իր որդին Ասա, որ ՚ի սկզբան բոլոր կուռքերն ու կռասունները ջնջեց վերցուց, և հրաման ըրաւ որ ճշմարիտ Աստուածը պաշտեն, մինչև իր Մաաքա մայրը տիկնութենէ հանեց՝ կռապաշտութենէ ետ չը կենալուն համար, յետոյ կամաց կամաց թուցաւ, և 41 տարի թագաւորելէն ետքը սաստիկ ոտքի ցաւով մը մեռաւ :

Ասայի սկզ յաջորդեց .

204. Ասայի յաջորդեց իր որդին Յովսափատ, որ իր յոյսը Աստուծոյ վրայ դնելուն և կռապաշտութիւնը բոլորովին ջնջել ջանալուն համար՝ Աստուծոյ շատ սիրելի եղաւ : Յովսափատ Աստուծոյ ապաւինած այլազգեաց դէմ մեծ յաղթութիւն մըրաւ, և 25 տարի թագաւորելէն ետքը մեռաւ :

ՅՈՎՈՒՄ ԵՒ ՈՔՈԶԻԱ.

Յովսափատին սկզ յաջորդեց .

202. Յովսափատին յաջորդեց իր որդին Յովրամ, որ Աքարին աղջիկը Դոթողիան իրեն կին առած էր, անոր խրատովը իր վեց եղբայրները մեռցընելէն ետքը կռապաշտութեան ալ սկսաւ . բարկացաւ Աստուած, որով իր ներ-

քել հարկատու եղած ազգերը գլուխ քաշելով մեծ աղջտ հասուցին իրեն, և ինքն ալ 8 տարի թագաւորելէն ետքը մեռաւ :

Յովրամին սկզ յաջորդեց .

203. Յովրամին յաջորդեց իր որդին Ոքողիա, որ թագաւորելէն տարի մը ետքը՝ երբ իսրայէլի Յովրամ թագաւորին տեսութեան գընաց, ինքն ալ Յովրամին (181) հետ սպաննըւեցաւ Յէուլէն :

ԳՈԴՈՂԻԱ. ԵՒ ՅՈՎՍԱ

Գոդողիա ի՞նչպէս ձեռք ձգեց թագաւորական իշխանութիւնը .

204. Գոդողիա իր Ոքողիա տղուն մահը լսելուն պէս՝ ինքը թագաւորելու համար բոլոր թագաւորական ցեղը ջնջել տուաւ, միայն Ոքողիայի մէկ տարուան Յովսա որդին ազատեցաւ՝ Յովիդայէ քահանայապետին Յովսաբեթ կնկանը փախցընելովը ու տաճարին մէջ պահած մեծ ցընելովը :

Գոդողիա ի՞նչպէս մեռաւ .

205. Գոդողիա թագուհի ըլլալով կռապաշտութեան հետեւիլ սկսաւ . բայց շուտով իր անօրէնութեանց պատիմը կրեց, քանզի Յովիդայէ քահանայապետը թագաւոր օծեց Յովա-

սը , որ եօթը տարեկան էր և սպաննել տուաւ  
զգողողիան :

Յովաս մինչև վիթքը Աստուծոյ հաւատարիմ մնաց .

206. Քանի որ Յովիդայէ ողջ էր , Յովաս  
ալ Աստուծոյ ճամբէն չխոսորեցաւ . բայց անոր  
մեռնելէն ետքը կռապաշտութեան սկսաւ , և  
քարկոծել տուաւ Յովիդայէին որդին ջաքարիա  
քահանայապետը , որ յանդիմանեց զինքը և ըզ-  
ժողովուրդը Աստուծածպաշտութիւնը ձգելնուն  
համար :

Յովաս ի՞նչպէս մեռաւ .

207. Յովաս ըրած անօրէնութեանը պա-  
տիժը քաշեց . քանզի Ասորւոյ Ազայէլ թագա-  
ւորը երկու անդամ Երուսաղէմի վրայ յարձա-  
կելով , տաճարին գանձէն մեծ գումար մը ոս-  
կի և արծաթ առնելէն ետքը , Յովդայեան բա-  
նակին յաղթեց , դիմաւորները մեռուց , և շատ  
մ'ալ աւար առաւ , Յովաս ալ հիւանդ պառ-  
կած տեղը իր ծառաներէն սպաննուեցաւ իր  
թագաւորութեան 40 երորդ տարին :

Ա.Մ.Ա.Ս.Ա. , ՈԶԻԱ. Կայ Ա.Զ.Ա.Բ.Ի.Ա. , ՅՈՎ.Ա.Թ.Ա.Մ.

Յովասին ո՞վ յաջորդեց .

208. Յովասին յաղորդեց իր որդին Ամա-

սիա , որ իր հօրը նման կռապաշտութեան ճամ-  
բան բռնեց . և յարայէլի թագաւորութեան  
դէմ պատերազմ բանալով չարաչար յաղթը-  
ւեցաւ . ինք ալ գերի բռնուեցաւ , և հաղիւ  
թէ թագաւորական գանձէն շատ մը ոսկի և  
արծաթ տրուելով աղատ թողրւեցաւ . բայց իր  
զօրքն իրմէն ապատամբելով մեռուցին զինքը ,  
27 տարի թագաւորելէն ետքը :

Մմասկային ո՞վ յաջորդեց .

209. Ամասիային յաղորդեց իր որդին Ո-  
զիա կամ Ազարիա , որ Աստուծոյ ճամբէն չխո-  
տորեցաւ . բայց յետոյ մեծամտութեամբ քա-  
հանայադործութիւն ալ ընելու յանդզնելուն  
համար բորոտեցաւ և այս բորոտութեամբը մե-  
ռաւ , 32 տարի թագաւորելէն ետքը :

Ո՞վ էր Յովաթամ .

210. Ողիա բորոտութիւն հանելէն ետքը  
աթոռէն հրաժարած , և տեղը թագաւոր դը-  
րած էր իր որդին Յովաթամ , որ իր հօրը մեռ-  
նելէն ետքն ալ 16 տարի թագաւորելով Աստ-  
ուածպաշտութեամբ մեռաւ :

Ա.Ց.Ա.Զ. , ԵԶԵԿԻԱ.Բ.

Յովաթամին ո՞վ յաջորդեց .

211. Յովաթամին յաղորդեց իր որդին

Աքաղ, որ ամենէն աւելի ամբարիշտ և մոլի եղաւ, և մինչև տաճարին սրահին մէջ կուռք դնել տալով անոնց զոհ մատոյց, և տաճարին դուռն ալ գոցել տալու յանդգնեցաւ. ասանկ ամբարշտութեամբ 16 տարի թագաւորելով Ասորոց և իսրայէլացւոց թագաւորներէն շատ աղէտներ քաշելէն ետքը մեռաւ :

Ա.քաղին ո՞վ յաջորդեց .

242. Աքաղին յաջորդեց իր որդին Եղեկիա, որ մեծ հոգ տարաւ կուռքերը կործանելու, կռապաշտութիւնը վերցընելու, և տաճարին մէջ իր առջի բարեկարգութիւնները մտցընելու :

Եղեկիային օրով ի՞նչ երևելի դէպք անցաւ .

243. Եղեկիայի օրովը Ասորեստանցւոց Սենեքերիմ թագաւորը անթիւ զօրքով եկաւ Երուսաղէմը պաշարեց . բայց Եղեկիային և Եսայի մարգարէին աղօթքովը հրեշտակ Աստուծոյ 185000 հոգի սպաննեց Սենեքերիմին բանակէն՝ մէկ գիշերուան մէջ, որուն համար Սենեքերիմ կատղած ետ դարձաւ ի Նինուէ, և օր մը Երբ իր տանը մէջ կռոց Երկրպագութիւն կ'ընէր, իր որդիքը Ադրամելէք և Սանասար սպաննեցին զինքը և Հայաստան փախան :

Եղեկիա ի՞նչպէս աղատեցաւ մեռնելէն, և քանի՞ տարի ժաղարերեց .

244. Եղեկիա հիւանդանալով երբ իմացաւ Եսայի Մարգարէին որ պիտի մեռնի, աղաչեց Աստուծոյ որ իրեն առողջութիւն պարգեւէ . լսեց Աստուած անոր աղօթքը, և խրկեց Եսայի մարգարէն որ ըսէ Եղեկիային թէ, Աստուած անոր կեանքը 15 տարի մ'ալ աւելցուց . և այս բանիս հաստատութեան նշան տուաւ Եսայի ժամացուցին վրայ արեուն ձգած ստուերը 10 աստիճան ետ դարձընելով . Եղեկիա 29 տարի թագաւորելէն ետքը մեռաւ :

ՄԱՆԱՍԻ, ԱՄՈՒՆ

Եղեկիային ո՞վ յաջորդեց .

245. Եղեկիային յաջորդեց իր որդին Մանասէ, որ դարձեալ կռապաշտութիւնը երեւան հանելով շատ չարութիւններ գործեց . անոր համար Աստուած զինքը երեսէ ձգեց, և մատնեց իր թշնամիներուն, որոնք զինքը շըլթայակալ բարելոն տարին . բայց հոն զղջալով դարձեալ իր աթոռը դառնալու շնորհքն ստացաւ Աստուծմէ . անկէց վերջը բարեպաշտութեամբ ապրելով թագաւորութեանը 53 Երորդ տարին մեռաւ :

Ո՞վ էր Յուդիթ և ի՞նչ քաջութեան գործ ըրաժ ունի .

246. Մանասէի օրովը Շմաւոնի ցեղէն Յուդիթ անունով այրի կին մը Աստուծոյ ապաւինած՝ վարպետութեամբ մը զարկաւ կտրեց Ասորւոց զօրաց ընդհանուր հրամանատար Հռղեփեռնէսին դլուխը , որ մեծ բազմութեամբ եկած Բետիղուա քաղաքը պաշարած էր . ասան կով Բետիղուացիք՝ որ օր առաջ յուսահատած քաղաքը տալու որոշումն ըրած էին , զօրացան ու մեծ ջարդ տուին Ասորւոց զօրաց :

Մանասէին ո՞վ յաջորդեց .

247. Մանասէին յաջորդեց իր որդին Ամոն , որ շատ չարութիւններ ընելով , և 12 տարի թագաւորելէն Ետքը սպաննուեցաւ իր ծառաներէն :

ՅՈՎ.ՍԻ.Ա. , ՅՈՎ.Ա.Ք.Օ.Զ

Ամոնին ո՞վ յաջորդեց և ի՞նչպէս մեռաւ .

248. Ամոնին յաջորդեց իր ութը տարեկան որդին Յովսիա , որ կռապաշտութիւնը վերցուց և Աստուածպաշտութիւնը նորէն հաստատեց , և միշտ հաւատարիմ մնաց Աստուծոյ : Յովսիա 31 տարի թագաւորելէն Ետքը՝ Եղիպատացւոց Նեղաւով թագաւորին դէմըրած պատերազմին մէջ զարնուեցաւ ու մեռաւ :

Յովսիային ո՞վ յաջորդեց և ո՞ւր մեռաւ .

249. Յովսիային յաջորդեց իր որդին Յովաքաղ , որ առջի չար թագաւորներուն հետեւեցաւ և 3 ամիս միայն կրցաւ թագաւորել . քանզի Նեղաւով Եղիպատացւոց թագաւորը Ասորւոց պատերազմէն դառնալու ատեն՝ եկաւ ձղեց զինքն աթոռէն , ու տեղը անոր մեծ Եղբայրը Յովակիմը (որ առաջ Եղիակիմ կ'ըսուէր) նստեցուց թագաւոր , և զինքն ալ կապած Եղիպատոս տարաւ , որ հոն մնաց և մեռաւ :

ՅՈՎ.ԱԿ.ԽՄ. , ՅԵՖՈՆԻԱ. , ՍԵԴԵԿԻԱ.

Յովակիմ ի՞ս սէւ գել ի գնաց ՚ի Բաբելոն .

220. Յովակիմ յաջորդելով իր Եղբօրը Յովաքաղին , սկսաւ ճշմարիտ ճամբէն խոտորիլ և Երեմիա մարդարէին խրատներն ալ մտիկ չէր ըներ : Ասոր թագաւորութեան չորրորդ տարին Նաբուգոդոնոսոր Բաբելոնի թագաւորը եկաւ առաւ Երուսաղէմը , Յովակիմին հետ շատ գերի տարաւ ՚ի Բաբելոն , որոնց հետ կը գտնուէր նաև Դանիէլ :

Յովակիմ ի՞նչ պայմանաւ ազատեցաւ գերութենէն , և ի՞նչպէս մեռաւ .

221. Յովակիմ տարուէ տարի հարկ վը ճարելու պայմանաւ ազատեցաւ գերութենէն ,

ու եկաւ նորէն թագաւորեց . բայց 3 տարիէն  
ետքը երբ հարկ տալլը դադրեցուց , Նաբուդու-  
գոնսոսոր նորէն վրան զօրք խրկեց , որոնք եկան  
առին Երուսաղէմը , ու սպաննեցին զՅովակիմ ,  
11 տարի թագաւորելէն ետքը :

Յովակիմին ո՞վ յաջորդեց , և ի՞նչպէս մնաւ .

222. Յովակիմին յաջորդեց իր որդին Յե-  
քոնիա , որ 3 ամիս թագաւորելէն ետքը նորէն  
Նաբուդոգոնսոսոր եկաւ Երուսաղէմն առաւ , և  
Յեքոնիան շղթայի զարկած՝ շատ դերիներով  
Բաբելոն խրկեց , ուր բաւական ժամանակ ապ-  
րելէն ետքը մեռաւ :

Նաբուդոգոնսոր ո՞վ թագաւոր դրաւ Յեքոնիային տեղը .

223. Երուսաղէմ մնացածներուն վրայ  
Նաբուդոգոնսոսոր թագաւոր դրաւ Սեղեկիան ,  
որ Յեքոնիային հօրեղբայրն էր : Ասիկա շատ չա-  
րութիւններ ըրաւ , և Երեմիա մարդարէին խօս-  
քը մաիկ չընելով իր ըրած երդումին դէմ Նա-  
բուդոգոնսորէն գլուխ քաշելուն համար , Նա-  
բուդոգոնսոսոր գարձեալ անհամար զօրքով Ե-  
րուսաղէմի վրայ եկաւ , պաշարմամբ առաւ  
զայն , ժողովուրդը ջարդեց , և քաղաքն ու տա-  
ճարը կողոպտելով կրակի տուաւ . Սեղեկիան  
ալ բռնուելով անոր աչքին առջեւը իր որդիւ-

քը սպաննել տալլն յետոյ , զինքը կուրցնելով  
իր աւագաննիներուն հետ բարելոն գերի տարաւ-  
Այսպէս վերջացաւ Յուդայի թագաւորստիւ-  
նը 387 տարի դիմանալէն ետքը :

### Վեցերորդ ՄԱՍ

ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵԿ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՌԱԴՐ



ԴԱՆԻԵԼ ԵՒ ԻՐ ԵՐԵՔ ԸՆԿԵՐՈՒԵԲ

Գերութեան ժամանակ որո՞նք երևելի եղան :

224. Հըկեց գերութեան ժամանակը Երե-  
ւելի եղան Դանիէլ և իր Երեք ընկերները Ա-  
նանիա , Միսայէլ և Ազարիան , կամ Սեղրաք ,  
Միսաք և Արեգնագովը , որոնք թագաւորա-  
կան պալատին մէջ Քաղդէացւոց ուսումները  
սորված էին :

Գանիէլ ի՞նչպէս մեծ պատւոյ հասաւ .

225. Նաբուդոգոնսոսոր իր թագաւորու-  
թեան Երկրորդ տարին Երազ մը տեսած և մոռ-  
ցած ըլլալով , շատ խռոված էր . և իր տէրու-  
թեան բոլոր կախարդները ու մոգերը անոր Ե-  
րազ և մեկնութիւնը չկրցան դիտնալ . միայն

Դանիէլ Աստուծոյ գիմելով պատմեց անոր եւ  
բազը և մեկնեց զայն . ասով Դանիէլ մեծ պատ-  
ւոյ հասաւ :

Նարուգործնոսորայ երազն ի՞նչ էր .

226. Նարուգործնոնոսորայ տեսածն էր ար-  
ձան մը , որուն գլուխը ոսկի էր , կուրծքն ու  
թեւերը արծաթի , մէջքն ու բարձքը պղնձի ,  
սրունքն ալ բոլորովին երկաթի , բայց ոտքերը  
կէս մը երկաթ կէս մը խեցի : Յանկարծ լեռնէն  
քար մը ինքիրմէն գլորելով եկաւ արձանին ոտ-  
քերուն զարկաւ կործանեց ու մանրեց . անանկ  
որ հով մը փշելուն՝ փշուրն ալ չմնաց . և քարը  
մեծնալով լեռ եղաւ ու բոլոր աշխարհ լեցուց :

Երազն ի՞նչ մեկնութիւն տուա . դանիէլ .

227. Դանիէլ Աստուծոյ յայտնութեամբը  
այսպէս մեկնեց երազը . արձաննը՝ աշխարհիս  
վրայ իրարու ետեւ գալիք իշխանութեանց  
պատկերն է . ոսկի գլուխը բարելացւոց թա-  
գաւորութիւնն է որ կայ . արծաթի կուրծքը  
անկէց ետքինը կը ցուցնէ , (Պարսից) . իսկ  
պղնձի մէջքը անանկ տէրութիւն մը պիտի ել-  
նէ , ըսաւ , որ ամէն երկրի պիտի տիրէ . (որ է  
Աղէքսանդրին կամ Յունաց) . երկաթի սրուն-  
քըն ալ ամենէն զօրել թագաւորութիւն մը

կը նշանակէ , որ ամէն բան մանրէ ու պի-  
տի մաշէ . բայց իր մէկ կողմը տկար մէկ կող-  
մը մինակ զօրաւոր պիտի մնայ . և ասիկա պի-  
տի ըլլայ թագաւորութեանց վերջինը , (Հռով-  
մայեցւոց) . վասն զի ասոր ատենը երկնից թա-  
գաւորութիւն մը պիտի յայտնուի որով ամէն  
թագաւորութիւն պիտի ոչնչանայ , և ինք պիտի  
տիրէ յաւիտեան , (Քրիստոսի դալուստը) :

Երեք ընկերը ի՞նչո՞ւ հացին չուրն ինկան , և ասկէ ի՞նչ-  
պէս պատեցան .

228. Նարուգործնոնոսոր իր թագաւորու-  
թեան տամնեւութերորդ տարին՝ վաթսուն  
կանգուն երկայնութեամբ և 6 կանգուն լայ-  
նութեամբ ոսկի արձան մը կանգնեց դաշտի մը  
մէջ . և հրաման ըրաւ որ ամէն ազգ դայ եր-  
կըրպագութիւն ընէ անոր : իսկ Սեդրաք , Մի-  
սաք և Արեգնագով թագաւորին հրամանին  
գէմ կենալով , Նարուգործնոնոսոր հրամայեց  
պատրաստուած հնոցին մէջ նետել զանոնք ,  
ուր Աստուծոյ հրեշտակը օդնութեան դալով  
անվնաս մնացին , և չորսերին միաբան զԱստ-  
ուած կ'օրհնէին : Այս բանս մեծ զարմանք  
տուաւ Նարուգործնոնոսորայ , և հրաման ըրաւ  
որ գուրս ելնեն : Ան ատեն հաւատաց Նարու-  
գործնոնոսոր թէ իսրայէլացւոց Աստուածն է ճըշ-

մարիտ Աստուած , և արդիլեց որ չըլլայ թէ ա-  
նոր դէմ մէկը հայհոյէ :

Աստուած ի՞նչպէս պատժեց Նաբուգոլոսարը .

229. Նաբուգողոնսոսոր երբ իր ըրած յաղ-  
թութիւններուն վրայ պարծենալով կը հպար-  
տանար , դանիէլին խօսքը մտիկ չընելուն համար  
Աստուած պատժեց զինքը , և եօթը տարի մարդ-  
կային ընկերութենէն հեռացած եղի պէս խոտ  
կ'ուտէր . մինչեւ խելքը վրան գալով ճանչցաւ  
Աստուծոյ զօրութիւնը և իշխանութիւնը , և ա-  
զատեցաւ իր պատժէն :

Որո՞նք յաջորդեցին Նաբուգոլոսարին .

230. Նաբուգողոնսոսոր քիչ մը ժամանակ  
ևս ասլրելով մեռաւ . ասոր յաջորդեց նզմարու-  
դաք . ասոր ալ տեղն անցաւ Բաղտասար :

Կիրոս ի՞նչպէտ առաջ Բաբելոնը .

231. Բաղտասարի օրովը Բաբելոնը պա-  
շարեց ու առաւ կիւրոս , որ Մարաց , Պար-  
սից և Հայոց զօրքերով եկած էր : Բաբելոնը  
տակաւին չառնուած առաջին իրիկունը՝ Բաղ-  
տասար տէրութեան մեծամեծներուն սեղան  
տուաւ . և երբ Երուսաղէմէն կողոպտուած սըր-  
բազան ամաններով դիմի կը խմէին , յանկարծ  
ձեռք մ'երեւցաւ և պատին վրայ բան մը գը-

բեց : Դանիէլ մեկնեց այս տեսօիլը , թէ պա-  
տին վրայ գրուած է Մանէ , թէկէւ , փարէս . Մա-  
նէ ըսել է Աստուած համրեց քու թագաւորու-  
թեան օրերդ ու վերջացուց . թէկէզ՝ կշռուե-  
ցաւ ու պակաս ելար . Փարես՝ թագաւորու-  
թիւնդ բաժնուեցաւ , կէսր Մարաց և կէսն ալ  
Պարսից : Եւ ստուգիւ նոյն գեշերը կիւրոս մը-  
տաւ Բաբելոն . ու առնելով զայն սպաննեց  
զբաղտասար : Ասանկով տէրութիւնը կիաքսար  
Բ . ին կիւրոսին մօրեղբօրն անցաւ :

Դանիէլ ինչո՞ւ ձգուեցաւ առիւ ծներըն գուբը .

232. Դանիէլ կիաքսարին ալ սիրելի ե-  
զաւ . որուն համար ամէն իշխաններն ալ կը նա-  
խանձէին անոր վրայ : Ուստի հրաման մը հա-  
նել տուին , որ 30 օր թագաւորէն զատ ուրի-  
շէ մը մինչեւ աստուածներէն ալ խնդիրք մ'ը-  
նողը առիւծուց դուբը նետուի : Դանիէլ աս հը-  
րամանին դէմ իր սովորութեամբը առ Աստուած  
աղօթելէն ետ չկենալուն համար առիւծներուն  
գուբը ձգուեցաւ , բայց Աստուծոյ շնորհիւը ան-  
գսաս հետեւեալ առաւօտուն դուբէն հանուե-  
ցաւ :

Դանիէլ ինչո՞ւ համար կրկնս անգամ գուբը ձգուեցաւ .

233. Դանիէլ Բաբելացւոց թէլ անունով

կուռքն ու անոր տաճարը կործանել տուաւ կիւ  
աքսարին հրամանաւը . քանզի քուրմերուն ըրած  
խարէութիւնը որ բէլին համար սահմանուած  
օրական ուտելիքը իրենք կ'ուտէին ու կը խա-  
բէին թէ բելը կ'ուտէ , դանիէլ հնարքով մը  
յայտնեց թագաւորին : Նմանապէս Բարելացւոց  
պաշտած մեծ վիշապը՝ ուտելու գնտակ մը կը-  
ցընել տալով ճամեցուց թագաւորին առջեւը :  
Բարելացիք կատղելով այս բանիս վրայ Դանիէ-  
լը բռնեցին գուբը նետեցին : Եօթներորդ օրը  
թագաւորը գրին քովը գալով՝ Դանիէլը ողջ գը-  
տաւ , ու “ մեծ ես Դանիէլի Աստուածը ” կան-  
չելով՝ շուտ մը հրաման ըրաւ որ Դանիէլ հա-  
նեն ու անոր թշնամիները գուբը նետեն :

Հրեայք ի՞նչուես աղատեցան Բարելացիք գերութենէն .

234. Կիաքսար Բ . Բարելոնի տիրելէն Եր-  
կու տարի Ետքը մեռաւ , և Լիւրոս առանձին  
թագաւորել սկսաւ : Լիւրոս իր թագաւորու-  
թեան առաջին տարին հրովարտակ հանեց , որ  
Հրէաները գարձեալ Հրէաստան դառնան և նո-  
րէն Աստուծոյ տաճարը կանգնեն :

ԵԽՍՈՒ ՔԱՇԱՆԱՊԱԵՏ ԵՒ ԶՈՐԱԲՈՒԷԼ,

Հրեայք Երուսաղէմ դասնախտան պէս ի՞նչ ըրին .

235. Յեսու քահանայապետը և Զորաբա-

բէլ , որ Յուդայի Յեքոնիա թագաւորին թոռը և  
Սաղաթիէլին որդին էր , 42000 հոգւով դար-  
ձան Եկան յերուսաղէմ , և աաճարին հիմը մեծ  
հանդիսով դրին : Բայց Սամարացիք արդեկք ըլ-  
լալով՝ տաճարին շինութիւնը 45 տարի երեսի  
վրայ մնաց , յետոյ գարձեալ շարունակեցին , և  
4 տարւոյ մէջ լմնուցին զայն . և նուիրման  
հանդէսն ալ շատ փառաւորութեամբ կատա-  
րեցին :

### ԵՍԹԵՐ

Եսթեր ո՞վ էր .

236. Նարուգողոնոսորէն գերի բռնուող  
ներուն մէջ բէնիամինի ցեղէն Ամինադարին աղ-  
ջիկը կար Եսթեր , որ Սիսիս քաղաքը կը բը-  
նակէր , իր Մուրդքէ հօրեղբօրը հետ : Եսթե-  
րըն իր գեղեցկութեանը համար Պարսից Արտա-  
շէս թագաւորը կին ըրաւ իրեն , և Մուրդքէն  
ալ իր տանը հոգաբարձուն . ասով Հրէաները  
մեծ աղետէ մաղատելու կարող եղաւ Եսթեր :

Ո՞վ էր Համան , և ի՞նչ թշնամութիւն ընել ուզեց Հը-  
րէլից .

237. Համան անունով իշխան մը մեծ պա-  
տիւ գտաւ թագաւորէն , մինչեւ ամէն մարդ  
թագաւորին հրամանին համեմատ Համանին եր-

կըրագութիւն կ'ընէին բաց ի Մուրդքէին։ Այս  
բանիս զայրանալով Համան, հպարտութեամբ  
ուղեց որ բոլոր Հրէից ազգէն վրէին առնու։  
Ուստի թագաւորին չարախօսութիւն ընելով  
անոնց համար. հրաման առաւ զամէնքն ալթը-  
րէ անցնելու։

Եսթեր ի՞նչպէս աղատեց իր ազգը ջնջուելէ.՝

238. Եսթեր Մուրդքէին շարժեալ թա-  
գաւորին ոտքն ինկաւ, և շարժելով անոր սիր-  
ու աղաչեց որ Համանին չարախօսութեանց ա-  
կանջ չդէնէ և ինայէ իրեն և իր ազգին։ Թա-  
գաւորն այլայլելով և Համանը Մուրդքէին հա-  
մար կախաղան պատրաստած ըլլան ալ լսելով,  
իսկոյն հրաման ըրաւ որ Համանը կախին նոյն  
կախաղանէն, և հրէից ազգին ջնջուելուն տե-  
ղը՝ Համանին առւնը և Հրէից թշնամիքը ջնջուին  
Հրէից ձեռոօք։ Ահա այնպիսի մեծ աղէտէ մա-  
զատեց Եսթեր իր ազգը։

Եջր և ՆէեՄԻ Էն Քոչւ ՄԱՏԱԹԻԱ.

Եզր և Նէեմի ի՞նչ ըրին Հրէաստանի մէջ.

239. Եզր և Նէեմի կիւրոսի յաջորդնե-  
րուն պաշտպանութեամբը բարեկարգեցին Հր-  
էաստանը, և ժողովրդեան մէջ Աստուածպաշ-  
տութիւնը պայծառացուցին։

Նէեմին ետքը ո՞վ կ'իշխէր Հրէաստանի։

240. Նէեմին ետքը քահանայապետաց  
ձեռքն էր կառավարութիւնը, և Հրէաստան  
ալ Աղէքսանդրի մեռնելէն ետքը մերթ Ասոր-  
ւոց և մերթ Եգիպտացւոց թագաւորութեան  
ներքեւ կ'իյնար։

Առը գլուխ ի՞նչպէս թարզմանուեցաւ. Յուսարէնի.

241. Աս ժամանակները Պտղոմէոս Փիլա-  
տելիոս Եգիպտացւոց թագաւորին հրամանաւը  
Սուրբ Գիրքը Երայեցերէնէ Յունարէնի թարգ-  
մանուեցաւ եօթանասուն Երկու Բարունեաց  
ձեռօք, անոր համար Եօնասանէց Ասբէժանունիւն  
ըսուեցաւ. ասկէ թարգմանուած է Հայերէն  
Ասորը գիրքն ալ։

Պտղոմէոս Դ. ինչո՞ւ պատժուեցաւ.

242. Եգիպտացւոց թագաւորը Պտղոմէոս  
Դ. Փիլոպատովը Երուսաղէմ գալով Աստուծոյ  
զոհ մատոյց. յետոյ հետաքրքրութեամբ ի Սըր-  
բութիւնն սրբութեանց մոնելով չարաչար պատ-  
ժուեցաւ ու անդամալոյծ դուրս հանուեցաւ։

Եղի իոդոբոս ո՞վ էր, ինչո՞ւ եկաւ. Երուսաղէմ և ին-  
չո՞ւ պատժուեցաւ.

243. Հրէայք Ասորւոց իշխանութեան տա-  
կըն եղած ատեն, Ախմէն՝ տաճարին վերակա-

ցուն Անիա քահանայապետին հետ թշնամանալով, դնաց Սելևկոս Դ. Ասորուց թաղաւորին իւմացուց թէ տաճարին մէջ շատ ստակ կայ: Եւ Լևկոս ալ իր կողմանէ Հեղիոդորոս պաշտօնատարը խրկեց ստակներն առնելու համար բայց Հեղիոդորոս երբ քահանայապետին մտիկ չընելով՝ գանձատունը մտաւ, հոն իսկոյն պատժւեցաւ մեռելի նման դետինն իյնալով. յետոյ Ոնիա զոհ մատոյց, և Հեղիոդորոս ալ աղէկնալով ետ գարձաւ իր տեղը:

Անտիոքոս Դ. իս ատենը քահանայապետինը ի՞նչ պիտակի մէջ էր.

244. Ասկէ ետքը Անտիոքոս Դ. ին ատենը քահանայապետութիւնն աւելի ստակ խոստացողին կը տրուէր. և Յասոն Դ. իր եղբայրը Ունիան վար առաւ ու ինքն եղաւ քահանայապետ. Յասոնին ձեռքէն ալ Մէկնեղաւոս յափշտակեց քահանայապետութիւնը. ասիկա՝ երբ իր ըրածտնօրէնութեանց համար յանդիմանուեցաւ Ունիայէն, Անդրոնիկոսին ձեռօք սպաննել տուաւ զայն:

Անտիոքոս ինչո՞ւ եկաւ Երուսաղէմն առաւ.

245. Քահանայապետութիւնը մէկմէկուձեռքէ յափշտակելու համար շատ արիւնհեւ

զութիւններ ըլլալով Երուսաղէմի մէջ, Անտիոքոս ալ այս խոռվութիւնները լսեց և ապատամբութիւն կարծելով, եկաւ Երուսաղէմն առաւ, բնակիչներէն շատ մը թրէ անցուց, մը նացածներն ալ գերի ծախեց. տաճարին բոլոր անօթներն ու գանձերը յաւարի առաւ, և հըրաման ըրաւ որ կռապաշտութիւն ընեն ամէն մարդ:

Անտիոքոսին հրամանին դէմ ո՞վ կեցաւ.

246. Անտիոքոսին բռնի ու անողորմ հըրամանին դէմ կեցաւ Եղիազար անունով չնորհալի ու աստուածավախ 90 տարեկան քահանայն, և սիրով ամէն տանջանք յանձն առնելով նահատակուեցաւ.

Ուրիշ սրո՞նք նահատակուեցան.

247. Այս միջոցներուն մէջ Շամունէ անունով բարեպաշտ ու առաքինի կին մը իր եօթը զաւակներով չուրացաւ ճշմարիտ Աստուածը և Հայրենական օրէնքը, և սիրով նահատակուեցան ամենն ալ կարգաւ:

### ՄԱՏԻԹԻԱ

Ո՞վ էր Մատաթիա, և ի՞նչ քաջութեան գործեր ըրածուի.

248. Անտիոքոսին հալածանաց Ժամանա-

կը Մատաթիա անուն քահանայն անսպատքաշունեցաւ իր հինգ որդւովլքը . իրեն հետևեցան նաև Հրէից մէջէն օրինապահներն ու աստուածապաշտները : Ասանկով իրենց թիւը շատնալով՝ մեծ գունդ մը կազմեցին , և Մատաթիան ալ գլուխն անցած ամէն տեղ կը շրջէր , և բադիններն ու մեհեանները կը կործանէր , ամբարիշներն և ուրացեալները կ'ըսպաննէր :

Մատաթիային տեղը ո՞վ անցաւ .

249. Մատաթիա չմեռած իր որդւոցմէ Շմաւոնն ընտրեց գլխաւոր և Յուղա Մակարէն ալ զօրավար , և այնպէս աստուածպաշտութեամբ մեռաւ :

#### ՅՈՒԴ. ՄԱԿԱՐԵ

Յուղա Մակարէ ի՞նչ քաջութիւններ ըրաւ .

250. Յուղա Մակարէ շատ քաջութիւններ գործեց Անտիոքոսին զօրաց գէմերկու անգամ . և երկու անդամին ալ շատ մարդ շարդելով , վերջապէս յաջողեցաւ երուսալէմ մըտնելու , տաճարն ու սեղանը պղծութենէ սրբելու և քաղաքն ալ պարիսպներով ամրացնելու :

Անտիոքոսի մահուանէն ետքը Յուղա ուրիշ ի՞նչ քաջութիւններ ըրաւ .

251. Անտիոքոս շարաչար մեռնելով , իր

տեղը յաջորդող Անտիոքոս Ե. Եւպատորին դէմալ պատերազմեցաւ Յուղա , և մեծ քաջութիւններ ընելով շատ մարդիկ ջարդեց , մինչեւ որ թշնամիք չկընալով դլուխ ելնել , հաշտութիւն ըրին և թողուցին որ Հրէայք ազատօրէն պաշտեն իրենց կրօնքը :

Ի՞նչպէս մեռաւ Յուղա Մակարէ , և տեղի ո՞վ անցաւ .

252. Այս խաղաղութիւնը շատ չտեւեց . Յուղա պարտաւորեցաւ կրկն դէնքը ձեռք առնուլ , ու Հրէաստանի մօտ եղող հեթանոս ազգաց վրայ գնաց , ջարդեց զանոնք . Ասորւոց հետ ալ մեծամեծ պատերազմներ ըրաւ ու շատ մարդիկ ջարդեց . և որպէս զի այս բռնութիւններէն ազատի , Հռովմայեցւոց հետ դաշնադրութիւն ըրաւ : Յետոյ Ասորւոց դէմ պատերազմած ժամանակը քաջութեամբ մեռաւ , և տեղը յաջորդեց անոր եղբայրը Յովինաթան :

#### ՅՈՎՆԱԹԱՆ

Ի՞նչպէս մեռաւ Յովինաթան , և տեղին ո՞վ անցաւ .

253. Ի սկզբան Յովինաթան քանի մը պատերազմներ ընելէն յետոյ Հրէաստան քիչ մը ժամանակ խաղաղ մնաց : Տրիփոն զօրապետը խարէութեամբ բռնեց Յովինաթանը ու սպանալու

նեց : Յովիսաթանին տեղն անցաւ իր եղբայրը  
Շմաւոն :

ԵՐԱԿԱՆՈՒՅՆ, ՅՈՎՀՈՅՆՆԵՍ

Շմաւոն ի՞նչպէս կառավարեց իր ազգը .

234. Շմաւոն իր ազգին և իր Հայրենեաց  
բարօրութեան հոգ տանելով, շատ կարգադ-  
րութիւններ ըրաւ և շնչցուց իր երկիրները :

Շմաւոն ի՞նչպէս մեռաւ, և տեղու ո՞վ անցաւ .

235. Շմաւոն իր երկու որդւոցը հետ Ե-  
րիքովի մէջ խնջոյքի ատեն դաւաճանութեամբ  
սպաննուեցաւ իր Պտղոմէոս փեսայէն, որ աչք  
ունէր անոր իշխանութեանը . բայց Յովիսաննէս  
Շմաւոնին փոքր որդին այս եղեռնագործութիւ-  
նը լսելուն պէս ինք հօրը տեղն անցաւ :

Յովիսաննէս ի՞նչ գործեր տնեցաւ .

236. Յովիսաննէս որ Հիւրկանոս ալ կ'ըս-  
ուէր, իր երկրին բացարձակ տէր եղաւ, և Ա-  
սորւոց ձեռքէն Հրէաստանի շատ քաղաքներն  
առնելով՝ ընդարձակեց տէրութիւնը, ու յետոյ  
մեռաւ :

ԱՐԻՍՏԱԲՈՒԴՈՍ, ՅԱՆՆԵՈՍ ԱՂԵՔՑԱՆԴՐՈՍ

Յովիսաննէսին ո՞վ յաջորդեց, և ի՞նչ անզթութեամսեր ը-  
րած տնի .

237. Յովիսաննէսին յաջորդեց իր անդ-

րանիկ որդին Արիստաբուդոս, որ թադաւորու-  
թեան պատիւ առնելով՝ իր մայրը բանտի մէջ  
անօթութենէ մեռցուց, և Անտիդմնոս եղբայրն  
ալ սպաննել տուաւ . միւս բոլոր եղբայրներն  
ալ բանտարկած էր : Ինքն ալ տարի մը թա-  
գաւորելէն ետքը չարաչար մեռաւ :

Արիստաբուդոսին ո՞վ յաջորդեց .

238. Արիստաբուդոսին յաջորդեց եղբայ-  
րը Յաննէս Աղէքսանդրոս, որ շատ անդթու-  
թիւններ գործեց, քաղաքային պատերազմ մը  
ծագեցաւ, որ գրեթէ ամբողջ 6 տարի տևեց :  
Այս վայրենի թագաւորն ու քահանայապետը  
մեռնելու ատեն՝ իրեն յաջորդ կարգեց իր կի-  
նը Աղէքսանդրա, որ Սողոմէ ալ կ'ըսուէր :

ԱՂԵՔՑԱՆԴՐԱ, ՀԻՒՐԿԱՆՈՍ Բ. ԵՒ

ԱՐԻՍՏԱԲՈՒԴՈՎ,

Աղէքսանդրոսին ո՞վ յաջորդեց .

239. Աղէքսանդրա բաւական ժամանակ  
կառավարելէն ետքը մեռաւ : Ասոր տեղը յա-  
ջորդեց իր որդին Հիւրկանոս Բ. բայց Արիստա-  
բուդ յաղթելով՝ եղբօրը, ինք առաւ թագաւո-  
րութիւնն ու քահանայապետութիւնը :

Ով էր զոմպէս , և ի՞նչպէս առաւ Երուսաղէմը .

260. Երբ Հիւրկանոս և Արիստաբուղ երկու եղբարքն իրարու ձեռքէ յափշտակելու վրայ էին թագաւորական ու քահանայապետական պաշտօնը , Պոմպէս Հռովմայեցի զօրապետըն ալ Հրէաստան եկած էր : Արիստաբուղոս Պոմպէսին դէմ պատերազմի պատրաստութիւն տեսած ըլլալով , Պոմպէս ալ շուտ մը Երուսաղէմի վրայ եկաւ , առաւ զայն , Հիւրկանոսը քահանայապետ ըրաւ , Հրէաստանն ալ հարկատու , Արիստաբուղոսն ալ իր որդւովիքը գերի տարաւ ի Հռովմ :

### ՓԱՍՏԵԼ , ՀԵՐՈՎՈՒՄ

Յուլիոս Կեսար ով դրաւ իշխան Հրէաստանի .

261. Երբ Յուլիոս Կեսար Հռովմայեցւոց տէրութեան դրուխ եղաւ , Հիւրկանոսն իր քահանայապետական պաշտօնին մէջ հաստատեց , և Անտիպատրոս անունով Եղովմայեցւոյ մը երկու զաւակները Փասայել և Հերովդէս իշխան դրաւ Հրէաստանի :

Հերովդէսի իշխանութիւնը ի՞նչպէս առաւ Անտիպոնոս .

262. Հերովդէս կուսակից շատ ունենալով հաստատ բռնած էր իր իշխանութիւնը , մինչև Անտոնինոս կայսրէն Զորբորդապետ Հրէաս-

տանի անուանեցաւ : Բայց Արիստաբուղոսին որդին Անտիպոնոս Բ. ասդիէն անդիէն օդնութիւն գտնելով եկաւ Երուսաղէմը առաւ , Հիւրկանոսի ականջները կտրեց , որ քահանայապետութիւն ընելու կարող չըլլայ . Փասայելի պատճառ տուաւ որ ինքզինք մեռուց , և Հերովդէսն ալ Հռովմ փախուց :

Հերովդէս ի՞նչպէս առաւ Երուսաղէմը Անտիպոնոփ ձեռքէն .

263. Հերովդէս մեծ ընդունելութիւն գըտաւ Հռովմ . մինչև անդամ թագաւոր պըսակուեցաւ Անտոնինոսին , և Հռովմայեցւոց օդնութեամբը զօրացած եկաւ առաւ Երուսաղէմը շատ արիւններ թափելով : Եւ Անտիպոնոսը՝ որ ինքզինք Հռովմայեցւոց յանձնեց անոնց ձեռքովը գլխատել տուաւ . և մակաբայցւոց ցեղէն ով որ մնացեր էր նէ . զանոնք ալ մէկ մէկ պատճառաւաւ մեռցնել տալով , բնաջինջըրաւ այն ցեղը . և իր իշխանութիւնը որ բոլոր Պաղեստինի վրայ տարածեց՝ ապահովցուց բոլորովին :

Հրէաստան ի՞նչպէս անցաւ Հռովմայեցւոց տէրութեանը .

264. Ահա այսպէս վերցաւ Յուդայի ցեղէն իշխանութեան գաւազանը Հերովդէս մե-

ծին ձեռքովլը , և Պաղեստինացւոց աշխարհը  
որ իսրայէլացւոց տասներկու ցեղին ժառանգու-  
թեան բաժինն էր , անցաւ Հռովմայեցւոց իշ-  
խանութեան ձեռքը , որուն կը տիրապետէր  
Հոկտաւիանոս Օդոսոս միահեծան կայսրու-  
թեամբ : Այս երկու պարագաներս յայտնի նը-  
շան էին Քրիստոսի Փրկչին գալստեանը մօտե-  
նալուն . ինչպէս որ Յակոբ Նահապետ գուշա-  
կած էր իր Յուդա որդւոյն օրհնութիւն տուած-  
ատենը . և Դանիէլ Մարդարէն ալ յայներ էր  
Նաբուգոդոնոսորայ երազին մեկնութեանը մէջ :

ՆՈՐ ԿՏԾԱԿԱՐԱՆ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՓՐԿԻՉ ԱՇԽԱՐՀԻ

Ն Ա Խ Ա Ք Ե Պ Ե Լ Հ + .

Նոր կտակարանը երեք մաս կը բաժնուի .  
Ա . Յիսուսի Քրիստոսի ծննդենէն մինչև  
մկրտուիլը :  
Բ . Մկրտութենէն մինչև չարչարանքն ու  
մահը :  
Գ . Մահուանէն մինչև առաքելոց քարո-  
զութեան սկսիլը :

ԱԹԱԶԻՆ ԾԱՄ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԽՆԴԻՆԵՆ ՄԵԽԵԿ ՄԿՐՏՈՒԻԼԸ

Փրկչին գալստացը հասկրաելու միջոցն ի՞նչ էր .

265. Աշխարհի սկիզբէն պատրաստուած  
և մարդարէից բերնովը խոստացուած մարդկա-  
յին ազգի Փրկչին աշխարհ գալու ժամանակը  
հասած ըլլալով , անոր գոլուասը քարոզելու նա-  
խընթաց մէկը կ'ըսպասուէր Հրեից ազգէն՝ մար-

գարելից գուշակութեանը համեմատ : Եւ այս եւ զաւ Յովհաննէս կարապետը :

Յովհաննու կարապետի ծնունդը ի՞նչպէս եղաւ .

266. Յովհաննու հայրը Զաքարիա՝ քահանայ էր . որ մը տաճարին մէջ ինկարկած ատենը դարբիէլ հրեշտակ Աստուծոյ երենալով անոր աւետեց որ Յովհաննէս անուն զաւակ մը պիտի ծնի իրեն , և աշխարհ գալու Մեսիային կարապետ պիտի ըլլայ :

Զաքարիա այս աեսիլքիս հաւատո՞ց .

267. Զաքարիա որ ինքը ծեր՝ և իր կինը Եղիսարեթ ամուլ ու պառաւ ըլլալուն համար զաւկի յոյս չունէր , հրեշտակին խօսքին չը հաւատաց . ուստի իրեն թերեհաւատութեանը պատիժ և եղած խոստմանը ճիշդ կատարուելուն նշան՝ հրեշտակը անոր լեզուն համրացուց , և անանկ մնաց մինչև տղային ծնանելու ատենը :

Զաքարիային իեղուն ի՞նչպէս բացուեցաւ .

268. Զաքարիայի տղան ծնաւ և թլիատուելու օրը անունը կ'ուղէին դնել : Զաքարիա՝ որ դեռ չէր կրնար խօսիլ , տախտակի մը վրայ՝ Յովհաննէս է դրեց , ու իսկոյն լեզուն բացուեցաւ . և հոգւով որբով լրցուած օրհնութիւն մը ըստ Աստուծոյ . Քրիստոսի աշխարհ գալը և

Յովհաննու անոր կարապետ և մարդարէն ըլլաւ լը գուշակելով :

Յովհաննէս կարապետ ի՞նչ կեսնք կը վարէի :

269. Յովհաննէս կարապետ Աստուծոյ չնորհօքը մեծնալով անապատ քաշուեցաւ . իր հագուստը լոկ ուղտու մազէ շինուած բան մը՝ վրայէն ալ կաշիէ գոտի մ'էր . և ուտելիքը մարախ ու վայրենի մեղք ըլլալով կ'ապրէր . և հոն մնաց մինչև Աստուծոյ կողմանէ խորայէլի աղգին քարոզութեան ենելու ատենը :

Փրկչիս ծնունդը ի՞նչպէս եղաւ .

270. Յովհաննու մայրը Եղիսարեթ վեց ամսուան յղի էր , երբ նոյն Դարբիէլ հրեշտակը Աստուծոյ կողմանէ եկաւ Նաղարէթ քաղաքը Մարիամ անուն կուսին՝ որ հայր Յովհակիայ նշանուած էր , աւետիս տուաւ թէ մարդկային ազգի Փրկիչ որդին Աստուծոյ Հոգւոյն սրբոյ զօրութեամբը իրմէն պիտի ծնանի , և անոնը Յիսուս դնելու է որ Դաւթի աթոռը ժառանգելով յաւետեան պիտի թագաւորէ :

Մարիամ կոյս այս լսերվը ի՞նչ ըրաւ .

271. Մարիամ կոյս՝ որ անարատ սրբութեամբ կեցած էր միշտ , առջի բերան հրեշտակին խօսքերէն շփոթեցաւ . բայց ետքը Եղի-

սաքեթի պէտ ամռւլ պառաւի մը վեցամնեայ  
յղութիւնը իմանալով հրեշտակէն, և Աստուծոյ  
կարողութեանը ամէն բան հնարաւոր է ըսելուն  
հաւատալով՝ խոնարհութեամբ ընդունեց աւե-  
տիսը, թող ըսածիդ պէտ ըլլայ ինձի ըսելով. և  
իսկոյն որդին Աստուծոյ մարմնացաւ անոր անա-  
րատ արգանդին մէջ :

Յովսէփ գիտէ՞ր այս աւետինը և ի՞նչ ըրաս.

272. Մարիամ կուսին խօսնայրը (նշանա-  
ծը) Յովսէփ՝ որ գեռ անոր անձին աստուածա-  
յին աւետեօք եղած հրաշքը չէր գիտեր, իր  
կուսական վիճակին մէջ յղանալը տեսնելով,  
մարգկօրէն կասկածներու բռնուեցաւ. և որով  
հետեւ արգար էր՝ չուզելով որ բանը հրատա-  
րակուի, գաղտուկ մը սուրբ կոյսը իր քովէն  
հեռացնել կը խորհէր :

Յովսէփ կաարե՞ց իր խորհածը.

273. Հրեշտակ Աստուծոյ Յովսէփոյ ե-  
րաղին մէջ երենալով վատահեցուց որ Մարիամ  
կոյսը քովը պահէ, վամն զի անոր արգանդի ծը-  
նունդը չոգւցյն որբոյ հրաշքովն է. որդի մը  
պիտի ծնի, ըսաւ, որուն անունը Յիսուս դնե-  
լու ես, և անիկա պիտի փրկէ իր ժողովուրդը  
իրենց մեղքէն : Յովսէփ այս բանս հրեշտակէն

իմանալուն վրայ Մարիամ սուրբ կոյսը քովը  
պահեց և պաշտպան եղաւ անոր մինչև իր վախ-  
ճանը :

Քրիփէը ե՞րբ և ո՞ւր ծառ.

274. Աշխարհի ստեղծումէն 4000 տարի  
լրանալուն՝ բոլոր աշխարհի ակնկալած Փրկիչը  
Քրիստոս ծնաւ սուրբ կոյս Մարիամէն՝ երու-  
սաղէմի մօտ Բէթլէհէմ կոչուած Դաւթի քա-  
ղաքը՝ այրի մը մէջ : Վասն զի այն օրերուն պա-  
տահած աշխարհագրին անցնելու պատճառաւ  
Նազարէթէն Բէթլէհէմ եկած էին սուրբ կոյսն  
ու իրեն խօսնայրը. Յովսէփ՝ Դաւթի ցեղէն ըլ-  
րալնուն համար :

Քրիչին ծնունդը առաջ ո՞վ խոնցաւ .

275. Փրկչին ծնած գիշերը յանկարծ երկ-  
նային լցո մը ծագեց այրին մօտ՝ բաց տեղ մը  
իրենց հօտը հսկող հովիւներուն վրայ . և հրեշ-  
տակ Աստուծոյ երենալով աւետեց թէ իրենց  
ու բոլոր մարգկան Փրկիչ Քրիստոս աէրը ծնաւ  
Բէթլէհէմ, որ է մարի մէջ գրուած խանձարրա-  
պատ մանուկ մը : Շատ մը հրեշտակներ ալ  
զԱստուծած կ'օրհնէին ընելով. փառք ի բարձունս  
Աստուծոյ և յերկիր խազագութիւն ի մարգիկ  
հաճութիւն :

Հովհանեսը ի՞նչ ըստի .

276. Այս տեսիլքին վրայ հովհաները զարդարած ու զարմացած՝ իսկոյն ելան բէթէհէմ եկան, և երբ ըստածին պէս նորածին մանուկը գտան, իմացան որ անոր համար էր. և զԱստուած փառաւորելով դարձան, ու եղածն ու տեսածնին կը պատմէին ամենուն :

Օրէնքին պահանջանքը Փրկչին վրայ ալ կատարեցի՞ն .

277. Ուժ օրէն ետքը երբ մանուկը թըլ-փառելու եղան, Յիսուս դրին անունը՝ ինչպէս որ առաջուց հրեշտակ աստուծոյ ապարած էր իրենց : Եւ երբ քառասուն օրուան եղաւ, ըստ օրինաց՝ առջինեկ մանչ դաւակ ըլլալուն համար երուսաղէմ տաճարը տարին Աստուծոյ ընծայելու :

Տաճարին մէջ ի՞նչ պատահեցաւ .

278. Հոգւոյն սրբոյ ազգեցութեամբը տաճարն եկաւ լիմիօն ծերունին, որ շատ ժամանակէ հետէ երուսաղէմ կ'ըսպասէր՝ Աստուծմէ հրաման առած ըլլալով որ մինչև Քրիստոս Փըրկիչը չուեմնէ՝ չմեռնի : Ինդութեամբ գիրկն առաւ Յիսուս մանուկը, և հայրն ու մայրը օրհնելէն ետքը գոհանալով խնդրեց յԱստուծոյ, որ ալ զինքը արձակէ աշխարհէս : Աննա մար-

դարէուհին ալ որ 84 տարի ամբողջ այրիութեամբ տաճարը կեցած զԱստուծ կը պաշտէր, փառք տալով Աստուծոյ, Յիսուսի համար կը խօսէր թէ Քրիստոս Փրկիչն է :

Փրկչին ծննդով Երուսաղէմի մէջ ի՞նչպէս համբաւուեցաւ .

279. Արեւելքի կողմէն երեք մոգ՝ իրենց երեւցած նորանշան աստղի մը առաջնորդելովը եկան երուսաղէմ մեծ պատրաստութիւնով . և հրէից նորածին թագաւորին ուր ըլլալը կը փնտուէին որ երթան երկրպագութիւն ընեն անոր : Այս ըստը բալը երուսաղէմի մէջ տարածուելով մինչև Հերովդէսի ականջը հասաւ :

Հերովդէս երբ լսեց ի՞նչ ըրաւ .

280. Հերովդէս իսկոյն հրէից կարդացողները ժողվելով՝ Քրիստոսի Բեթէհէմ ծնանելը գուշակուած ըլլալը հասկցածին պէս՝ մոգերը կանչեց գաղտուկ, և աստղին երեւցած ատենը անոնցմէ ստուգելէն ետքը Բեթէհէմ ճամբեց, ապսպիրելով որ եթէ գտնեն մանուկը՝ իրեն ալ իմացնեն որ ինքն ալ գայ երկրպագութիւն ընէ . բայց մոգերը իրենց երկրպագութիւնը և ընծաները Յիսուս Փրկչին մատուցանելէն ետքը՝ երազի մէջ Աստուծմէ հրաման առնելով՝ որ Հերովդէսին չհանդիպին, ուրիշ ճամբով դարձան իրենց երկիրը :

Հերովդէս մովերը չտեսնելուն վրայ ի՞նչ ըրտ .

284. Մոդերուն բեթլէհէմէն ետ դառնալու ատենը իրեն չհանդիպելուն վրայ բարկանալով Հերովդէս , միանդամայն և վախնալով ալ որ նորածին թագաւորը օր մը իր ձեռքէն կը յափշտակէ թագաւորութիւնը , զօրք դրկեց բեթլէհէմու անոր սահմանները , և երկու տարուընէ վար դժնուած տղայքը բոլոր սպաննել տուաւ . որպէս զի Յիսուս Փրկիչ ալ անոնց հետ մէկտեղ սպաննուի :

Յիսուս Բեթէհէմի մասկանց մէջ էր .

282. Հրեշտակ Աստուծոյ առաջուց հայր Յուլէփայ քընոյն մէջ երեւցած՝ ու Հերովդէսի Յիսուս Փրկիչը մեռցնել ուղելը իմացնելով անոր սպատուիրած էր որ մանուկն ու անոր մայրը առնէ Եգիպտոս փախչի , և հոն մնայ մինչև դարձեալ իրեն իմաց արուիլը : Ասանկով Յիսուս Հերովդէսի կատաղութեանը զոհ չեղաւ Բեթլէհէմի անմեղ մանկանց հետ :

Հերովդէսի իշխանութիւնը երկար տեսեց .

283. Շատ չանցաւ Հերովդէս չարաչար մեռաւ . և իշխանութիւնը երեք որդւոցը բաժնուեցաւ : Հրէաստանի և Սամարիայի վրայ Արքեղայոս իշխեց , որ ետքը Հռովմ կանչուելով

աքսորուեցաւ . և տեղը դատաւորներ գրուեցան կառավարելու : Իսկ Յորդանանու հիւսիսային կողմին Փիլիպպոս և Գալիլիայի սահմանին Հերովդէս Անթիպաս կ'իշխէին Զորքորդապետ անուամբ :

Յովակի Հերովդէսի մեռնիլի իմացաւ , և ինչ ըրտ .

284. Հերովդէսի մահը Յովակի երազին մէջ հրեշտակէն իմանալով . և հրաման առնելով առաւ Յիսուս մանուկը և անոր մայրը և Խրայէլի երկիրը դարձաւ : Բայց Հրէաստանի վրայ Արքեղայոս իշխելուն համար , հոն երթալու չվստահելով , դարձեալ հրեշտակին հրամանաւը Գալիլիայի Նաղարէթ քաղաքը գնաց Քնակեցաւ . որով Յիսուս Նաղարէթի ըսվեցաւ :

Զատկին երբ Յիսուս Փրկիչը Երուսաղէմ տարին ի՞նչ պատահեցաւ :

285. Յիսուսի երկոտասաններորդ տարին երբ ամէն տարուան պէս երուսաղէմ առին դնացին ծնողքը՝ զատկին տօնը կատարելու , Յիսուս հոն էր մնացեր՝ ետ դարձած ատեննին . և ծնողքը կարծելով թէ զիտածու ճամբորդներու հետ է՝ մինչև օրուան մը ճամբայ դացած դանուեցան , և երբ վինտրուեցին ու չը դտան նորէն երուսաղէմ դարձան :

Յիսուս Երուսալիմի մէջ ո՞ւր գտնուեցաւ .

286. Երեք օր ալ Երուսաղէմի մէջ փնտուելին ետքը՝ տաճարին մէջ գտան Յիսուսը , ուր կարդացողներուն հետ նստած կը խօսակցէր . մայրն ըսաւ իրեն , աս ի՞նչ էր որ ըրիբ մեզի որդեակ , հայրդ ու ես փնտռելէն յոդնեցանք : Յիսուս պատասխան տուաւ թէ ի՞նչու կը փնտռէիք զիս . չէ՞իք գիտեր որ հօրս տունը ըլլալու եմ : Անկէ ելաւ ծնողացը հետ նազարէթ դարձաւ , և միշտ անոնց հնազանդ ըլլալով օրէ կը զարդանայր շնորհօք և իմաստութեամբ :



### ԵՐԿՐՈՐԴ ԾԱՌ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱ ՄԻՆՉԻ ԶԱՐՅԱԴԱԳԻ  
ՈՒ ՄԱՀԻ

Յովհաննէս կարապետ ե՞րբ և ո՞ւր ելաւ քարոզվու .

287. Յիսուսի երեմներորդ տարւոյն ըսկիդրները՝ Աստուծոյ հրամանաւը Յովհաննէս կարապետ անապատէն Յորդանան գետին կողմերը պարտելու ելաւ , և Փրկչին աշխարհ դալը կը քարոզէր ժողովրդացուներուն Յիսուսի վրայ իջաւ . և երկինքէն ալ ձայն եկաւ թէ “դու ես իմ սիրեմ որդիս՝ քեզի հաճեցայ , :

ապաշխարելու համար կը մկրտէր Յորդանան գետին մէջ :

Յիսուս ալ Մկրտեցաւ Յովհաննէս կարապետէն .

288. Յիսուս ալ նոյն օրերը Նազարէթէն ելաւ ու եկաւ Յորդանան գետը՝ Յովհաննէս կարապետէն մկրտուելու : Յովհաննէս որ բնաւ Յիսուսը տեսած չէր , Հոգւոյն սրբոյ աղդեցութեամբը ճանչցաւ թէ նոյն եկողը Փրիստոս Փրը կիչն է , և մկրտելէն կը հրամարէր : Բայց ետքը Յիսուս Փրկչին ստիպելովը յանձն առաւ ու մկրտեց : Յիսուս Ջրէն ելնելուն պէս Հոգին սուրբ աղաւնիի կերպարանքով Յիսուսի վրայ իջաւ . և երկինքէն ալ ձայն եկաւ թէ “դու ես իմ սիրեմ որդիս՝ քեզի հաճեցայ , :

Մկրտուելէն ետքը ո՞ւր զնաց և ի՞նչ պատահեցաւ իրեն .

289. Ամկէ ետքը Յիսուս խկոյն անապատը քաշուեցաւ Հոգւոյն սրբոյ տնօրէնութեամբը . ուր քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելէն ետքը անօթեցաւ . նոյն միջոցին չարն սատանայ մօտենալով Յիսուսի Փրկչին , Երեք անդամ մեղքի մէջ ձգելու հրապուրանքով վորձեց . և Յիսուս Երեք անդամին ալ սուրբ գըրքին խօսքելով անոր հրապուրանքները ջրելով խայտառակեց ու վոնտեց քովէն :

Յիսուսի առաջին աշակերտողները որո՞նք եղան .

290. Յիսուս անապատէն ելած՝ Յորդանանի քովը եկեր կը շրջադայէր . Յովհաննէս Մկրտիչ զանիկա ցուցընելով վկայեց թէ նա է Քրիստոս Փրկիչն աշխարհի : Այս լսելով իր երկու աշակերտները Յիսուսի ետևէն գնացին . և մէկը որ Անդրէան էր՝ իր Սիմոն եղբայրն ալ առաւ բերաւ Յիսուսի : Ասոնք թէպէտ աշակերտեցան Յիսուսի, բայց գեռ հետը չէին շըրջեր . հետը շրջողներ ալ կային, որոնց մէջ էր Փիլիպպոս, զոր Յիսուս Գալիլիայի ճամբան տեսաւ՝ կանչեց որ հետը դայ, և Նաթանայէլ՝ զոր Փիլիպպոս գնաց բերաւ Յիսուսի :

Յիսուս իր Աստուածային զօրութիւնը նախ և առաջ ի՞նչ-պէս յայտնեց .

291. Երեք օրէն ետքը՝ Յիսուս աշակերտներովը Գալիլիայի կանա քաղաքը Հարսնիքի մը հրաւիրուեցաւ, ուր իր մայրն ալ դաշած էր : Գինին հատաւ . և Յիսուս մօրը խնդիրքը չկուրելով վեց դատարկ թակուկի մէջ ջուր լեցունել տուաւ, և մինակ հրամայելով որ տաճարապետին տանին՝ ջուրը գինիի փոխուեցաւ : Այս եղաւ Յիսուսի Քրիստոսի առաջին հրաշքը, որով յայտնեց իր Աստուածային կարողութիւնը :

Յիսուս Երուսաղէմ երթալով ի՞նչ ըրաւ .

292. Զատկի տօնին մօտ Յիսուս Երուսաղէմ գնաց, և տաճարի սրահին մէջ զոհի համար արջար, ոչխար ու աղաւնի ծախողներ և ստակ աւրողներ լցուած տեսնելով, խարազանով մը զամէնքն ալ դուրս վարեց : Եւ երբ Հըրեայք նշան խնդրեցին իրմէն այդ բանը ընելուն համար, Յիսուս ըստ, քակեցէք այդ տաճարը և երեք օրուան մէջ շինեմ զայն : Այս խօսքը Յիսուս իր մարմնոյն համար ըստ որ երեք օրէն յարութիւն պիտի առնէր . բայց մէկն ալ չըհամարցաւ :

Նիկոդեմոսի ի՞նչ քարոզեց .

293. Այս տօնին ատենը շատ հրաշքներ ըրաւ Յիսուս, որով շատ մը հաւատացողներ եղան : Ասոնց մէկն էր Նիկոդեմոս իշխանը, որ գիշերանց Յիսուսի քով գալով՝ բան սորվիլ կ'ուզէր : Յիսուս քարոզեց անոր թէ մարդ մը մինչեւ որ ջրէ ու հոգիէ չձնի, չկընար Աստուծոյ արքայութիւնը մտնել . այս խօսքով Մկրտութեան խորհրդոյն հարկաւորութիւնը նշանակեց . և թէ ով որ միածին Որդւոյն Աստուծոյ կը հաւատայ՝ ան կ'ընդունի յաւիտենական կեանքը . ասով ալ իր Որդի Աստուծոյ ըլլալը յայտնեց Յիսուս Նիկոդեմոսի :

Յովհաննուս աշակերտները ի՞նչ դանդառ ըրին Յիսուսէն.

294. Յիսուս Երուսաղէմէն Հրէաստանի կողմերը քարոզելու ելաւ, և իրեն հաւատացողները մկրտել կուտար իր աշակերտացը, ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչ ալ կը մկրտէր Յայենովի կողմը : Ասոր աշակերտները նախանձելով Յիսուսի աշակերտաց մկրտելուն վրայ, դացին գանդատեցան իրեն . բայց անիկա յայտնապէս քարոզեց անոնց թէ Յիսուս է Քրիստոս Փրկիչ աշխարհի, և նա է որուն համար ըսի թէ Հոգւով սրբով պիտի մկրտէ . և ով որ չ'հաւատայ Յիսուսի Քրիստոսի, անոր վրայ կը մնայ Աստուծոյ բարկութիւնը :

Յիսուս ինչո՞ւ շուտով ելաւ Հրէաստանէն.

295. Շատ շմաց Յիսուս Հրէաստանի մէջ. այլ Երբ լեց որ իր աշակերտացը ձեռօք շատերուն մկրտիլն ու հաւատալը փարիսեցիք լսելով զայրացեր են . և թէ Հերովդէս Անթիպաս ապօրինաւոր կին մը առնելուն համար Յովհաննէս Մկրտչէն յանդիմանուելով, բանտարկեր է զանիկա, իսկոյն թողուց գնաց գէպ ի Գալիլիա: Ի՞նչ միջոցով քարոզեց ու յայտնեց զինքը Սամարացւոց .

296. Սամարիայի Սիւքար քաղաքէն անցնելու ատենը, ճանապարհին յոդնելով՝ աղբիւ-

րի մը քով նատած էր, Երբ Սամարացի կին՝ մը ջուր առնելու եկաւ հոն ։ Յիսուս իր հրաշալի խօսքերովը և անոր գողունի յանցանքները Երեսին տալով՝ յայտնեց զինքը թէ Քրիստոս Փրկիչն է : Կինը գնաց քաղաքացւոց իմացուց, անոնք ալ եկան՝ աղաչերով առին տարին Յիսուսը իրենց քաղաքը . ուր Երկու օր մնալով քարոզեց՝ և անոնցմէ շատերը հաւատացին իւրեն :

Յիսուս ի՞նչպէս բժշկեց թագաւորակնին որդին .

297. Յետոյ կանա վերադարձաւ, ուր թագաւորազն մը եկած էր կափառնառումէն, և կը ինդրէր որ Յիսուս դայ իր մեռնելու մօտ հիւանդ որդին բժշկէ : Յիսուս եղած տեղը կենալով, և գնա՛ որդիդ ողջ է ըսելով մը մինակ բըժշկեց . թագաւորադնը հաւատաց ու գնաց, և որդին աղէկցած գտաւ :

Յիսուս ի՞նչպէս կը քարոզէր Գևոնեսարեթայ ծովուն եղերը .

298. Յիսուս կափառնառում փոխեց բնակութիւնը . և օր մը գեննեսարեթայ ծովուն եղերքը քարոզած ատենը՝ բազմութենէն նեղուելուն վրայ Երբ Երկու նաւ տեսաւ հոն . որոնց մէկին մէջ Սիմոնը և Ոնդրէաս Եղբայրը, և միւ-

սին մէջ թակոբոս ու Յօհաննէս իրենց հօրը Զերեթիային հետ ձկնորսութիւն կ'ընէին, Սիմոնին նաւն եղաւ՝ անկէ քարոզեց . ու ետքը ուռականը ծովը ձգել հրամայեց Արմենին . որ բոլոր գիշերը աշխատեր ու բան մը չէին կրցեր բըռանել . բայց այս անդամ ուռականը այնշափ ձկով լեցուեցաւ, որ միւս նաւն ալ օգնութեան հասնելով հազիւ կրցան ծովէն հանել: Ասոր վրայ վախ մը առաւ զիրենք . Յիսուս մի՛ վախնաքը ըստ իմ ետևէս եկէք, ասկէց ետքը ձեղ մարդկան որսորդ պիտի ընեմ. անոնք ալ ամեն բաներնին թողուցին ետևէն դնացին և միշտ հետը կը լըջէին :

Կափառնառւմի մէջ ի՞նչ հրաշքներ գործեց Յիսուս.

299. Յիսուս կափառնառւմի մէջ դիւահար մը և Սիմոնին զոքանչը և ուրիշ շատ հւանդներ և դիւահարներ բժշկելէն ետքը, նաւը մտաւ իր աշակերտներով՝ ծովուն դիմացի կողմն անցնելու համար: Կէս ճամբան երբ Յիսուս նաւին մէջ կը ննջէր՝ մեծ ալեկոծութիւն եղաւ . և աշակերտները վախնալով ձայն արվին Յիսուսի, Յիսուս անոնց թերեհաւատութիւնն երեսնին զարնելով հրամայեց ծովուն որ հանդարտի, և իսկոյն հանդարտեցաւ:

Գերգեսացւոց երկրին մէջ զրով բժշկեց .

300. Յիսուս գերգեսացւոց երկիրը հասնելուն պէս, երկու կատաղի դիւահարներ բըշեցիւց, հրաման ընելով դւերուն որ երթան ընուին մօտ եղած խողին երակին մէջ մտնեն. աս որ եղաւ, խողերը դիւահարած ծովը նետուելով խողուեցան :

Կափառնառւմի մէջ անդամալցը ի՞նչպէս բժշկեց .

301. Յիսուս նորէն կափառնառւմ գալով, տան մը մէջ քարոզութիւն կ'ընէր . և այնքան բազմութիւն լցուած էր հոն, որ անդամալցն մը բերին ու չկրնալով դռնէն ներս մոցընել, տան յարկը քակեցին ու անկէց անդամալցն Յիսուսի առջեւ իջուցին: Յիսուս ալ նախմերգդ թողուի ըստ անդամալուծին . և երբ փարիսեցիները այս ըստ Աստուծոյ գէմհայնոյութիւն է ըսելով կը տրանջային, Յիսուս երԱստուածային կարողութիւնը ցուցընելու համար ըստ անդամալուծին՝ ել առ մահիճդ ու դնա . անդամալոյն ալ շուտ մը կատարեց հրամանը, և ամենքն ալ զարմացած փառք կուտային Աստուծոյ:

Յիսուս ինչո՞ւ Աստուծոս մաքսաւորին տունը գնաց .

302. Յիսուս այն տունէն ծովեզը ելնե-

լով՝ մաքսատան մը առջեւ Մատթէոս անունով մաքսաւոր մը տեսաւ ու ետևէս եկո՛ ըստ . Մատթէոս ամէն բանը թողուց եւ լաւ հետը գնաց և իր տունը ճաշի հրաւիրեց Յիսուս Փրկիչը ուրիշ մաքսաւորներու հետ երբ Փարիսեցիք ու դպիրք կը տրմնջային թէ ինչո՞ն մեղաւորներուն հետ կը նստի , Յիսուս պատասխան տուաւ , ողջերուն բժիշկ պէտք չէ , այլ հիւանդներուն :

Յիսուս ինչո՞ւ Յայրոսին տունը կերպար .

303. Յիսուս Յայրոս անուն իշխանին տունը կ'երթար անոր մէկ հատիկ աղջիկը բժշկելու համար . ճամբան 12 տարիէ ի վեր տեռաւ տեսութեան բռնուած կին մը կամաց մը Յիսուսի զգեստներուն քսուելովը բժշկուեցաւ . Յիսուս իր Աստուածային զօրութեամբն իմացաւ . և կին ալ դողալով եկաւ Յիսուսի ոտքն ինկաւ ու պատմեց եղածը : Յիսուս Յայրոսին տունը չհասած լուր եկաւ թէ աղջիկը մեռեր է . Յիսուս գնաց բռնեց մեռած աղջկան ձեռքէն և հրամայեց որ ելնէ . իսկոյն ողջնցաւ մեռեալը ու սկսաւ քալել և ուտել :

Յայրոսի տունէն դարձած ատեն զորո՞նը բժշկեց .

304. Ետ դառնալուն , երկու կոյր ետեւ

ւէն ինկան մինչև տուն աղաղակելով թէ ողորմէ՛ մեղի . Յիսուս հարցուց թէ զիրենք բժշկելու կարող ըլլալուն կը հաւատա՞ն . երբ այոր սին , աչքերնին շօշափելով ըստ , հաւտայած նուդ պէս ըլլայ ձեղի , և իսկոյն աչքերնին բացուեցաւ : Հնան լեզուն կապուած դիւահար մ' ալ բերին Յիսուսի . ուրիշ գեր ելնելուն պէս լեզուն բացուեցաւ և ամէնքը զարմացան :

Փարիսեցիք ինչո՞ւ կ'ուղէին Յիսուսը մեռնանել .

305. Յիսուս Զատիկի տօնին պատճառաւ ելուսաղէմ գնաց . հոն Պրոբատիկէ աւաղանին բոլորտիքը պառկած հիւանդներուն մէջ 38 տարուան անտէր անդամալոյծ մը բժշկեց , շաբաթ օր մը՝ ե՛լ անկողինդ ա՛ռ ու գնա՛ ըսելով . նոյնպէս ուրիշ շաբաթ մ'ալ ժողովարանի մը մէջ մարդու մը գօսացեալ ձեռքը աղէկցուց . ասոր վրայ վարիսեցիք զայրանալով Յիսուսի մեռցընել կ'ուզէին , չէ թէ մինակ շաբաթը չպահելուն համար , այլ մանաւանդ որ Աստուած իմ հայրս է ըսելով ինքզինքը Աստուծոյ հաւասար կ'ընէր :

Յիսուս որո՞նք ըստից իրեն առաքեալ .

306. Յիսուս անդամ մը լեռն ելնելով , բոլոր գիշերն աղօթք ըրաւ . առաւօտուն կան-

չեց իր աշակերտները, ու անոնցմէ միշտ իր քու  
վըն ըլլալու 12 հոգի ընտրեց և Աւագեաւ ան-  
ուանեց . որովհետեւ հիւանդներ ու դիւահար-  
ներ բժշկելու ու քարողելու պիտի առաքէր զա-  
նոնք . որոց անուններն են .

Սիմոն, որ ետքը Պետրոս ըսուեցաւ,  
Անդրէաս,  
Յակովըոս,  
Յովհաննէս,  
Փիլիպոս,  
Բարթոլոմէոս,  
Մատթէոս,  
Թովմաս,  
Յակոբոս Ալֆեայ,  
Թադէոս,  
Սիմոն կանանացի,  
Յուղա իսկարիովտացի, որ ետքը զՅիսուս  
մատնեց :

Առաքելոց հետ Յիսուս իջաւ տափարակ  
տեղ մը, ուր իր բոլոր աշակերտները ու չորս  
կողմէն եկող մարդոց անթիւ բազմութիւն ալ  
ժողոված էին, և իր սուրբ բերանովը Աստուա-  
ծային բարոյական վարդապետութիւն մը խօ-  
սեցաւ անոնց, սկսեալ էօն երանութիւններէն :

Հարիւրապետին ծառան ի՞սչպէս բժշկեց .

307. Երբ Յիսուս կափառնառւմ գնաց ,  
Հրէց մեծերու աղաչանքովը հարիւրապետի մը  
տունը կ'երթար, որ անոր հիւանդացած սիրե-  
լի ծառան բժշկէ . բայց հարիւրապետն ինքզին-  
քըն անարժան սեպելով զՅիսուս իր տունն ըն-  
դունելու՝ մարդ խրկեց, աղաչեց ըսելով թէ իր  
միայն խօսք մը զրոցելն ալ բաւական է իմ  
մարդու բժշկելու : Ասոր վրայ Յիսուս հարիւրա-  
պետին համար խրայէլի մէջ չգտնուած հա-  
ւատք մը ունենալը վկայելով կատարեց աղա-  
չանքը, իսկոյն խրկած մարդիկը տուն դարձան  
ու ծառան բժշկուած գտան :

Նային քաղաքին դրան քով ի՞սչ հրաշագործութիւն ըրաւ.

308. Երկրորդ օրը Յիսուս իր աշակերտ-  
ներով ու ժողովրդեան բազմութեամբ նային  
քաղաքը կ'երթար . դրանը մօտենալուն՝ մեռած  
աղջիկ մը ողջնցուց, որ մօրը մէկ հատիկն էր և  
դադաղը դրած թաղելու կը տանէին : Այս հը-  
րաշքը տեսնելով հոն գտնուողները, սկսան  
փառք տալ Աստուծոյ :

Յովհաննէս Մկրտիչ բանտին մէջն ինչո՞ւ մարդ խրկեց  
Յիսուսի .

309. Այս հրաշքները Յովհաննէս Մկրտիչ

լսելով բանտին մէջ, իր աշակերտներէն Յիսուս  
սի խրկեց հարցընել տուաւ թէ՝ գալու Փրկիչը  
դո՞ւ ես թէ ուրիշի մը սպասենք: Յիսուս ա-  
նոնց առջև շատ մը բժշկութիւններ ըրաւ ու ը-  
սաւ . դայէք ու տեսածնիդ պատմեցէք Յովէ-  
հաննու: Ետքը Ժողովրդեան ըստ թէ Յովէ-  
հաննէս Մկրտիչէն մեծ մէկը չկայ աշխարհիս ծը-  
նածներուն մէջ . բայց Աստուծոյ արքայութեան  
մէջ էն պղափկը անկէ մեծ է :

Մեղադր կինը ի՞նչպէս թողութիւն դուաւ .

310. Անդամ մը Սիմոն անուն ֆարիսե-  
ցիի մը տունը հաց կերած ատենը , մեղաւոր  
կին մը հետն ազնիւ իւղ առած՝ տունը եկաւ  
Յիսուսի ոտքն ինկաւ , ու իր մեղացը համար՝  
սկսաւ արտասուքովը թրջել անոր ոտքը , մա-  
զերովը չորցնել , պագնել ու իւղով օծել . Յի-  
սուս ալ անոր մեղաց թողութիւն տուաւ , ու  
ըստ՝ եւ գնա խաղաղութեամբ , քու հաւատ-  
քըդ դքեղ փրկեց :

Երկրէն նշան ուզովսերուն ի՞նչ նշան տուաւ Յիսուս .

311. Երբ տուն դարձան , աչքն ու լե-  
զուն առնուած դիւահար մը բերին . Յիսուս  
դեւը հանելուն պէս՝ հիւանդը աղէկցաւ , ու  
սկսաւ տեսնել և խօսիլ . Ժողովուրդը զարմա-

նալով կ'ըսէին թէ արդեօք սա՞է Քրիստոս Փըր-  
կելը . իսկ փարիսիցիք այս հրաշքները դիւաց  
իշխանին ձեռօքը կ'ընէ կ'ըսէին . ուրիշներն ալ  
երկնքէն նշան մը ցուցնել կը խնդրէին Յիսուս-  
սէն . ան ալ Յովնան մարդարէին երեք օր ե-  
րեք գիշեր ձկան փորը կենալուն նման՝ իրեն  
ալ նոյնչափ ատեն երկրիս սիրտը մնալէն ետեւ  
յարութիւն առնելը նշանակեց :

Ի՞նչ էին սերմանացանի առավները .

312. Ժողովուրդը խոնելուն՝ ծովեղը  
իջաւ , և նաւ մը մտնելով անկէ սկսաւ զրու-  
ցել իր խրատը առակներով : Երկու սերմանա-  
ցանի առակ ըստաւ . առաջնովը հասկցուց թէ  
Աստուծոյ խօսքը ընդունողը բարի երկրի մը կը  
նմանի . որ իր մէջը ցանուած հունտը պտղաբեր  
կընէ : Երկրորդովն ալ իմացուց թէ աշխարհիս  
մէջ ինքն Քրիստոս ցորեն այսինքն արքայու-  
թեան որդիք կը ցանէ , և սատանան ալ որո՞նն  
այսինքն չարութեան որդիք . բայց հունձին ա-  
տենը այսինքն աշխարհիս կատարածին՝ չարերը  
բարիներէն զատուելով , չարերը յաւիտեան  
կ'այրին , ու բարիներն ալ յաւիտեան կ'ապրին  
արքայութեան մէջ :

Երկնից արքայութիւնը ուրիշ ի՞նչ սմանեցաց :

313. Յիսուս ուրիշ առակներով ալ երկ-

Նից արքայութիւնը՝ նմանեցուց գիշեր ցորեկ  
աճող ու հասունցող սերման, մանանուխի հա-  
տի, խմորի, ադարակի մը մէջ ծածկուած դան-  
ձի, պատուական մարդարտի, և ծովը ձբգ-  
ուած ուռկանի, որու մէջ ամէն տեսակ ձուկ  
կը լեցուի, բայց ցամաք հանուած ատենը ա-  
ղէկները կ'առնուին և գէշերը կը նետուին :

Յիսուս Նազարէթի մէջ ժողովարանը ի՞նչ վարդապե-  
տութիւն ըրաւ.

344. Անկէ ետքը Յիսուս Նազարէթ եկաւ,  
և ժողովարանը մտնելուն՝ Եսայեայ մարդարէ-  
ութեան գիշեր տուին ձեռքը . ելաւ կարդա-  
լու և յանկարծ “Հոգի տեառն ի վերայ իմ  
վասնորոյ և էօծ իսկ զիս „ գրուած տեղը բաց-  
ուեցաւ : Ասոր վրայ իրեն համար զարմանալի  
վարդապետութիւն մ'ընելով յանդիմանեց ժո-  
ղովուրդը, որ իրեն չէին հաւատար և ընդու-  
ներ : Այս բանիս վրայ ամենքն ալ կատելով  
առին տարին Յիսուսը քաղաքին լեռան ծայրը,  
որ անկէ վար նետեն . բայց Յիսուս անոնց առ-  
ջևէն օդոյն վրայ քալելով անցաւ և դիմացը  
գնաց :

Ո՞ւ զվաստել տուաւ Յովհաննէս Մկրտիչը .

345. Այս օրելու էր որ Հերովդէս Անթիւ-

պաս լվատել տուաւ Յովհաննէս Մկրտիչը՝  
բանտարկուած տեղը, իր երեւելի մէկ հացկե-  
րութին օրը . և գլուխը սկուտեղի վրայ դրած  
տուաւ իրեն ապօրինաւոր կին առած Հերով-  
դիադային աղջկանը, որ այն օրուան հանդէսին  
մէջ աղէկ կաքաւելուն փոխարէն իբրև պարգև  
ինդրեց Հերովդէսին զանիկա իր չար մօրը  
դրդմամբը : Յովհաննու աշակերտները լսելով  
գնացին թաղեցին մարմինը, և եկան պատմե-  
ցին Յիսուսի :

Յիսուս առաքելոց ի՞նչ իշխանութիւն տուաւ .

346. Յիսուս առաքեալներուն ամէն կերպ  
հիւանդներ ու դիւահարներ բժշկելու զօրու-  
թիւն և իշխանութիւն տալով սկսաւ անոնցմէ  
երկու երկու քարոզութեան զրկել Հրէից քա-  
զաքներն ու գեղերը : Եւ այն պաշտօնին մէջ  
ինչ վարք ունենալ և ինչ ընել և դաշտ տե-  
ղերնին ինչ ճամբով գտնուիլ պէտք էր նէ, այն  
ամէնը անոնց պատուիրելէն զատ, գլուխնին  
դալու փորձանքներն ալ դուշակելով քաջալե-  
րեց զիրենք :

Յիսուս անապատին մէջ ի՞նչպէս կերակրեց ժողովուրդը.

347. Առաքեալները քարոզելէն դարձան  
ու ըրածնին պատմեցին Յիսուսի . այն ալ առաւ

զանոնք անապատ տեղ մը տարաւ որ հանդչին.  
բայց ժողովուրդը հօն ալ լցուեցան, անանկ որ  
բաց ի կնիկներէն ու տղաքներէն հինդ հաղար  
էրիկ մարդ կային: Յիսուս անոնց հիւանդները  
բժշկելով և երկարօրէն քարողութիւններ ընե-  
լով երբ իրիկուն եղաւ, գութը շարժելէն հը-  
րաման ըրաւ որ ժողովուրդը դաս դաս նստե-  
ցընեն. և հօն աղու մը քով գտնուած հինդ նը-  
կանակն ու երկու ձուկը օրհնելով, տուաւ ա-  
շակերտներուն որ բաժնեն. կերան ամենն ալ և  
կշտացան. և 12 սակառի ալ կտորուանք աւել-  
ցաւ:

Յիսուս իսչո՞ւ հեռացաւ ժողովրդէն.

348. Ժողովուրդն այս մեծ հրաշքը տես-  
նելով, հաւատացին թէ ինքն է ճշմարիտ Մե-  
սիայն, և ուղեցին որ թագաւոր դնեն. բայց  
Յիսուս հեռացաւ անոնցմէ, և լեռն ելաւ ա-  
զօթելու. աշակերտաց ալ պատուիրեց որ նաւը  
նստին միւս կողմն անցնին, ինքն ալ քալելով  
հօն կուգայ:

Յիսուս ծովուն վրայ ի՞նչ հրաշք ցուցուց.

349. Նաւը ծովուն մէջ ալէկոծութեան  
բռնուած ու կէս դիշերն ալ անցած էր, երբ  
Յիսուս ծովուն վրայէն քալելով դէպ ի նաւը

կերթար: Աս որ տեսան առաքեալք սկսան  
կանչուըուտել, իսկ Յիսուս ես եմ մի վախնաք  
ըսաւ: Պետրոս հրաման առնելով Յիսուսէն,  
որ իրեն երթայ, քալել սկսաւ ծովուն վրայ.  
բայց սիրտը վախ իյնալուն ընկլմելու որ եղաւ  
աղաղակեց Յիսուսի, որ ձեռքէն բռնեց ըսե-  
լով թերահաւատ, ինչո՞ւ երկմոնցիր. նաւը  
մտնելնուն պէս, ծովը հանդարտեցաւ և խկոյն  
ցամաքը հասան, և նաւորդները Յիսուսին ոտքն  
ինկան Որդի Աստուծոյ ըլլալը խոստովանելով:

Ժողովուրդը ինչո՞ւ դՅիսուս վնատուելու ելաւ.

320. Միւս օրը ժողովուրդը երբ տեսաւ  
որ Յիսուս հետերնին չըլլալով աշակերտները  
մինակ կը նաւէին, իրենք ալ ուրիշ նաւեր մը-  
տան ու վնատուելով եկան կափառնաում ու դը-  
տան զՅիսուս. և հարցուցին թէ վարդապետ  
ե՞րբ եկար հօն: Յիսուս դիտնալով անոնց միտ-  
քը որ առջի օրուան հացին պէս հրաշք մը կու-  
զեն դարձեալ վայելել, յանդիմանեց զանոնք,  
և սքանչելի վարդապետութեամբ իր մարմինն  
ու արիւնը ճշմարիտ կերակուր և ըմպելի ըլլալը  
հասկըցնելով՝ Ա. Հաղորդութեան խորհուրդը  
հասաստելը նշանակեց:

Տիւրոսի ու Սիրոսի կողմերու ի՞նչ հրաշք գործեց .

324. Յիսուսի գալիլիայէն Տիւրոսի ու Սիրոսի կողմերը գացած ատենը՝ Քամանացի հեթանոս կին մը իր դիւահար աղջիկը բժշկելու համար Յիսուսի ետեւէն ինկեր կ'աղաշէր . Յիսուս մտիկ չըրաւ ըսելով թէ տղյը հացը առնել և շներուն տալ չվայլեր . կինը պատասխանեց , տէր տղոցը սեղանին փշանքներէն շուներն ալ կը կերակրին . այս խօսքիս վրայ Յիսուս անոր հաւատքը գովելով՝ ուղածդդ թող ըլլայ ըսաւ , և աղջիկը բժշկեցաւ :

Գալիլիայի ծովուն եղեքը ի՞նչ հրաշք գործեց .

322. Գալիլիայի ծովեղը վերադառնալուն՝ խուլ և համր մարդ մը բըժըշկելէն ետքը , մօտ լեռան մը վրայ ելաւ նստաւ . ուր ժողովուրդը չորս կողմէն շատ մը կաղերու , կոյրերու , համրերու , խուլերու և ուրիշ ամէն տեսակ հիւանդներու բազմութիւն բերաւ լեցուց . Յիսուս զանոնք ամէնքն ալ բժշկեց հոն

Եօթը հացով և քիչ մը ձմյուլ ի՞նչովէս կշտացան 4000 էն աւելի ժողովութ .

323. Եկողները որոնց շատն ալ հեռու տեղուանքէ էին , երեք օր հոն մնալու ստիպ:

ուեյան . և ուտեղիքնին հատաւ : Յիոսւս գթալով անոնց վրայ , առաքելոց քովը գտնուած եօթը նկանակը և քիչ մը ձուկը օրհնելով առաքելոց ձեռօքը ժողովրդեան բաժնել տուաւ , ժողովուրդը ամէնն ալ որ կանայքն ու տղայքը համրանքի չը դիելով՝ չորս հազար հոդի էին՝ կերան ու կշտացան . և եօթը զամրիւղ ալ կտորվանք ժողովեցին :

Բէթսայիդա դալով ի՞նչ ըրաւ չն .

324. Անկէ Յիսուս Բէթսայիդա գալով , հոն կոյր մը բժշկեց ոչքին վրայ թքնելով ու ձեռք դնելով : Ետքը ի կեսարիա Փիլիպպեայ Երթալու ճամրան առաքեալներէն հասկնալու զեց թէ մարդիկ իրեն համար ո՞վ է կ'ըսեն . Երբ իրեն իմացուցին թէ ոմանք Յովհաննէս Մկըրտիչ՝ ոմանք ալ Եղիա կամ Երեմիա՝ կամ մարդարէներէն մէկը . այն ատեն իրենց կարծիքը հարցուց . Սիմոն Պետրոս ամէնուն կողմէն պատասխանեց թէ Դու ես Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ : Յիսուս Պետրոսին այս գտումը չէ թէ մարդկային խելքով այլ Հօր Աստուծոյ յայտնութեամբը եղած ըլլալը իմացընելով խստիւ պատուիրեց ամենուն որ այս բանս մէկու մը չյայտնեն :

Յիսուս ո՞ւ և ի՞նչպէս այլակերպեցաւ .

325. Վեց օր ետքը Պետրոս, Յակոբոս ու Յովհաննէս առաքեալները հետն առած քարձր լիուան մը վրայ ելաւ Յիսուս, ու հոն այլակերպեցաւ, դէմքն արեւու պէս լուսաւոր ու հագուստները ձիւնի պէս ճերմակ եղան : Մովսէս ու Եղիա երեցան, և սկսան Յիսուսի հետ խօսիլ. յետոց երկնքէն ձայն մ'ալ լառեցաւ թէ, այդ է իմ սիրելի Որդիս ատոր հաճեցայ ատոր լսեցէք : Այս բանիս վրայ առաքեալք վախերնուն շփոթած, Երեսնուն վրայ ինկած էին, Յիսուս բռնեց վերցուց զանոնք ու քաջալերեց և պատուիրեց որ մարդու չըսեն նոյն դէպքը, մինչև իր յարութիւն առնելը :

Յիսուս լեռնէն լինելուն պէս ի՞նչ ըրաւ .

326. Յիսուս լեռնէն ինելուն պէս՝ դիւահար տղայ մը բժշկեց, զոր առաքեալք չէին կրցեր բժշկել . և պատճառը հասկցան Յիսուսէն որ իրենց թերեհաւատութեանը համար է, և թէ այն տեսակ դեղ միայն պահքով ու ազօթքով կը հալածի :

Յիսուս երկդրամեան տուրքը տուա՞ւ .

327. Յիսուս առաքելոց հետ իր քաշելիք

չարչարանացը և մահուանը և երեք օրէն ետքը յարութիւն առնելուն վրայօք խօսելով Գալիլիայէն կափառնաում դարձած ատենը երկաւըրամեան տուրքը ժողվողները անկէ ալ պահանջեցին նէ, հրաման ըրաւ Պետրոսին որ երթայ ծովը կարթ մը նետէ, և առաջին ելած ձկան բերանը բանայ և հոն գտած մէկ սատերը տանի վճարէ թէ իրեն և թէ անոր համար, Պետրոս այնպէս ըրաւ և վճարեց :

Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ աշակերտացը որ մեծ ըլլալ կ'ուզէն երկնից արքոյութեան մէջ .

328. Յիսուսի աշակերտաց մէջ վէճ մը ծագեցաւ թէ իրենցմէ ո՛րը մեծ պիտի ըլլայ երկնից արքայութեան մէջ . Յիսուս մանուկ մը կանչեց ու անոնց մէջ տեղը կայնեցուց և ըսաւ, եթէ չդառնաք ու մանկուց պէս չըլլաք, Երկնից արքայութիւնը չէք կրնար մանել : Ուրիշ անդամ մ'ալ ըսաւ թէ, ձեր մէջէն մեծ ու առաջին ըլլալ ուզողը ձեր ծառան ու պաշտօնեայն պիտի ըլլայ : Ասով իրարու վրայ չճոխանալ այլ զիրար մեծարել խրատեց :

Իրաքոյ ներող ըլլալու համար ի՞նչ պատուէր տուաւ Յիսուս .

329. Իրարու ներողամիտ ըլլալու համար

ալ երբ զետքոս հարցուց թիսուսի թէ , եղբայրըս մինչև եօթն անդամ ալ մեղանչելու ըլլայ նէ ներե՞մ . թիսուս այս պատուէրս տուաւ որ չէ թէ եօթն , այլ եօթանասնիցս եօթն անդամ ժ'ալ երբոր զղջայ՝ ներել պէտք է : Եւ առակ ժ'ալ ըսաւ թէ թագաւոր մը իր ծառաներուն մէկն ունեցած տասն հաղար քանքար առնելիքը անոր աղաչանացը գթալով չնորհեց . իսկ ծառան ուրիշի մը վրայ ունեցած հարիւր դահեկան առնելիքին համար՝ զանի բանար դնել տուաւ : Ծառային այս անդթութիւնը երբ թագաւորը իմացաւ , բարկանալով զինքն ալ բանտարկեց որ մինչև պարտքը ամբողջ չտայ՝ չելնէ : Ասանկ ալ ըսաւ թիսուս եթէ դուք ձեր ընկերին յանցանքը չներէք , Աստուած ալ ձեր յանցանքը չներէր :

Թիսուս տասը բորոտը ի՞նչովէս բժշկեց .

330. Տաղաւարահարաց տօնին մօտ երբ թիսուս գալիլիային երուսաղէմ կ'երթար , Սամարիային անցնելուն տասը բորոտ մէկն առջևն ելան , և հեռուն կենալով կը կանչէին . Յիսուս վարդապետ ողօրմէ՛ մեղի : Յիսուս հրամայեց որ երթան զերենք քահանային ցուցընեն . անոնք ալ դնալնուն պէս բժշկեցան : Եւ մէջեր-

նին մինակ մէկը որ լամարացի էր դարձաւ եկաւ թիսուսի ոտքն իյնալով՝ չնորհակալ եղաւ : Յիսուս այս հեթանոսին հաւատքը դովելով . միւս ինը հրեային ապերախտութիւնը յանդեմանեց :

Հրէ կը կարգացողներուն եւ վարփեցնմբուն ի՞նչ յանդիմանեթիւն առաւ թիսուս .

331. Տօնին սկիզբները Յիսուս իր երուսաղէմ ելլալը չյայտնեց . Հրէից կարդացողները և վարիսեցիներն ալ կը փնտուէին թէ ո՞ւրէ : Վերջին օրերը տաճարն ելաւ և իր վարդապետութեանը մէջ անոնց օրէնք չպահենին ու զինքը օրէնք աւրողի պէս սպաննել ուղենին յանդիմանեց . և թվատութիւնը շաբաթ օրը նելլը Մովլսէսին հրամայուած ըլլալը մէջ բերելով , նոյն օրին մարդ բժշկելը օրէնքի դէմ չըլլալը հաստատեց :

Փարփեցիք եւ քահանապետք կրցա՞ն Յիսուսը բռնել տաւ .

332. Ասոր վրայ ժողովրդէն շատերը հաւատացին Յիսուսի , ըսելով թէ , Քրիստոս դայնէ ասկէ աւելի հրաշքներ պիտի ընէ . ոմանք ալ Քրիստոս չէ թէ Գալիլիային այլ բեթէհէմէն պիտի դայ կ'ըսէին : Փարփեցիք և քահա-

նայապետք ալ մարդ զրկեցին որ Յիսուսը բըռ-  
նեն ու բերեն . գացողները Յիսուսի հրաշալի  
վարդապետութիւնը մտիկ ընելէն զմայլելով՝ ետ  
դարձան և վկայեցին թէ անոր նման մարդ  
մ'ալ խօսած չէ : Ասանկով այն օրը Յիսուսի վրայ  
ձեռք երկնցնող մը չեղաւ . վասն զի ժամանակը  
եկած չէր : Յիսուս ալ ձիթենեաց լեռը դնաց  
այն գիշերը հօն անցընելու :

Քահանայապետք ու փարիսեցիք ի՞նչպէս փորձել ուզն-  
ցին պՅառուս .

333. Առաւօտուն երբ դարձեալ տաճա-  
րըն եկաւ , քահանայապետք ու փարիսեցիք  
զինքը փորձելու համար գէշութեան մէջ բըռ-  
նուած կին մը բերին , և հարցուցին թէ օրէն-  
քը ասանկները քարկոծել կը հրամայէ , ինք  
ի՞նչ կ'ըսէ : Յիսուս գլուխը ծռած սկսաւ գետ-  
նի վրայ մատովը գրել անոնց մեղքերն ու չա-  
րութիւնները . և երբ զինքը աւելի ստիպեցին ,  
վեր նայելով ըսաւ , ձեր մէջէն անմեղ եղողը  
թող առաջ նետէ քարը ասոր վրայ . և դարձ-  
եալ կը գրէր : Այս լսելով մէկիկ մէկիկ դուրս  
ելան . և Յիսուս կինն ալ աղաս թողուց ըսե-  
լով . գնա՛ այսուհետեւ մի՛ մեղանչեր : Այն օրը  
քարողութեանը մէջ իր Որդի Աստուծոյ ըլլա-  
լը յալտնելուն համար , երբ Հրէայք զինքը քա-

ըի բռնելու եղան , մէջերնուն խոյս տալով տա-  
ճարէն ելաւ գնաց :

Ի ծնէ կը ի՞նչպէս ըժշկուելիս .

334. Ի ծնէ կը մը տեսնելով , բժշկեց  
զայն . այս բանս շաբաթ օրը ընելուն համար  
Հրէայք բարկացան , և սկսան աչքը բացուած  
կուրին հարց ու փորձ ընել թէ ո՞վ զինքը բը-  
ժշկեց . կոյրն ալ Յիսուսի վրայ մեծ հաւատ  
ցուցընելով , անշուշտ զիս բժշկող մարդն Աս-  
տուծմէ ըլլալու էր ըսելուն վրայ զայրացան ,  
ու զինքն առջեւնուն հանեցին . յետց Յիսուսը  
դանելով երկրպագութիւն ըրաւ անոր , և հա-  
ւատաց թէ ան է Որդին Աստուծոյ :

Առաքես լինէն զատ քանի՞ աշակերտ ունէր Յիսուս .

335. Յիսուս տաճներկու առաքեալներէն  
զատ եօթանասուն երկու հոդի ալ իրեն աշա-  
կերտ ընարեց , և զանոնք իրենց քարողութեան  
ատենը ի՞նչ ընելու է և ի՞նչպէս վարուելու ըլ-  
լալնին յատուկ պատուերներով խրատելէն ետ-  
քը , երկու երկու իր առջեւէն իր երթալիք  
քաղաքներն ու գիւղերը կը զրկէր քարողելու :

Յիսուս ի՞նչ առակով բացատրեց ըսկերսիրութեան ինչ  
ըլլալը .

336. Օրէնսդէտին մէկը զՅիսուս փորձե-

լու համար, երբ կը հարցնէր թէ ո՞վ է ընկերըս. որ պիտի սիրեմ. Յիսուս առակով մ'իացուց թէ աւազաներէ վիրաւորուած ու գետինինկած ճանապարհորդի մը քովէն քահանայ մը և յետոյ շեւտացի մ'անցան ու հոգ չտարին ան վիրաւորելոյն. բայց Սամարացի մը անցնելու ատեն խղճաց անոր վրայ, վէրքը դարձնեց, դրաստին վրայ դրաւ ու տարաւ պանդոկ մը, և պանդոկապետին ստակ տուաւ ու խոստացաւ ևս տալ, որպէս զի այն խեղճ վիրաւորելոյն դարման տանի ու առողջացնէ: Յիսուս դարձաւ օրէնսգէտին ըստաւ, դուն ալ Սամարացիին պէս ըրէ: Ասով իմացնել ուզեց Յիսուս թէ չըէայ և չեթանոս ամեն ազդ մէկմէկու ընկեր են. և ամենուն պէտք է օգնել առանց խըտըութեան:

Յիսուս ո՞ր աղօթքը աւանդեց աշակերտացը.

337. Օր մը Յիսուս տեղմը աղօթքի կայնեցաւ. և լմացնելէն ետքը առաքեալներէն մէկը խնդրեց որ իրենց ալ աղօթք մը սորվեցնէ. ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչ իր աշակերտացը սորվեցուցած էր: Յիսուս անոնց աւանդեց այն սքանչելի աղօթքը, որ մենք ալ առաքեալներէն սորվելով կ'ըսեմք ամեն ատեն.

Հայր մեր որ յերկինս, սուրբ Եղիշի անուն

քո: Եկեսցէ արքայութիւն քո՝ Եղիշին կամքք քո, որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապաղորդ տուր մեղայսօր: Եւ թող մեղ ըզպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեղի փորձութիւն, այլ վրկեա զմեղի չարէ: Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն:

Յիսուս ինչը՞ւ չամար վայ կալդ սց փարփեցոց և օրինականաց.

338. Փարիսեցի մը ճաշի հրաւիրեց զթիսուս. և երբ անոր անլուայ ձեռօք սեղանը նստելուն վրայ զարմացաւ, Յիսուս փարիսեցւոց դրսէն մաքրութիւն ցուցնելով՝ սրտերնուն մէջ ամեն տեսակ պղծութիւն ունենալնին յայտնեց, վայ տալով անոնց. մինչեւ օրինական (կարդացող) մը այն խօսքերէն առնուելով, վարդապետ ատ զրուցելովդ մեզի ալ կը դըպչիս ըստաւ նէ. Յիսուս անոնց ալ վայ տալով՝ դորձերնին յանդիմանեց, որ ուրիշին ծանր պատուէրներ կը դնեն, ու իրենք բնաւ օրէնքը չեն բռներ. և դարձաւ առաքելոց պատուիրեց որ փարիսեցոց կեղծաւորութենէն զդոյշ կենան. և ճշմարտութեան համար ամեն բան աչքերնին առնեն և մեռնելէ անդամ չվախնան:

Յիսուս ի՞նչ առակով առաջարկենէն ետ կենալու խը-  
բատեց .

339. Երբ օր մը ժողովրդէն մէկը՝ իր եղ-  
բօրը հետ ունեցած ժառանդութիւնը բաժնե-  
լու կը թախանձէր Յիսուսի . մերժեց Յիսուս  
դանի , և աղահութենէ ետ կենալու վրայ գե-  
ղեցիկ առակ մը զրուցեց թէ , հարստին մէկը  
տարի մը իր արտերէն այնչափ շատ արդիւնք  
առաւ որ լեցնելու տեղ չդանելով՝ ամբարները  
մեծցնել կը մտածէր հոն լեցնելու համար . ու  
ինք իրեն կ'ըսէ , անձն իմ շատ տարիներու օդ-  
նելու չափ բարիք դիզուած ունիս , կեր խմէ և  
ուրախ եղիր : Բայց Աստուած կ'ըսէ անոր , ով  
յիմար այս գիշեր հոգիեղ պիտի առնեն , և այդ  
պատրաստածդ որո՞ւ պիտի ըլլայ : Ահա ասանկ  
կ'ըլլայ , ըսաւ Յիսուս , աղահ մարդոց՝ որ Աս-  
տուծոյ չեն ապաւինիր այլ իրենց ունեւորու-  
թեանը :

Յիսուս ի՞նչպէս պապանձեցուց փարիսեցիները , որ կը  
տրամնջային թէ շաբաթ օր բժշկութիւն կ'ընէ .

340. Շաբաթ օր ժողովարանի մը մէջ Յի-  
սուս վարդապետած ատենը , կին մը տեսաւ որ  
տասնեռութ տարիէ հետէ ջիղերը քաշուած ըլ-  
լալով վեր չէր կրնար նայիլ , ձեռքը վրան դը-  
րաւ ու բժշկեց : Ուրիշ շաբաթ մ'ալ Փարիսե-

ցիկ տուն հաց ուտելու գացած ատենը ջրգո-  
ղած մէկը բժշկեց : Փարիսեցիք կը տրամնջային  
շաբաթ օրը այդ բժշկութիւնները ընելուն հա-  
մար . Յիսուս անպատճախանի ըրաւ զանոնք ը-  
սելով թէ , որերնի՞դ շաբաթ օրով իր էշը կամ  
եզր մառլէն չարձըկեր ու ջուր տալու չտանիր ,  
և եթէ հորը կինայ նէ շուտ մը չհաներ :

Փարիսեցւոց տրամնջալուն որիշ ի՞նչ պատճառ կար .

341. Փարիսեցւոց ու գպրաց Յիսուսի վը-  
րայ տրամնջալուն մէկ պատճառն ալ այն էր , որ  
մաքսաւորներն ու մեղաւորները կ'ընդունի և  
անոնց հետ կերակուր կ'ուտէ . ասոր վրայ ալ  
Յիսուս անոնց հասկցնելու համար թէ Աստուած  
զզացող մեղաւորը կ'ընդունի , անառակ որդ-  
ւոյն առակն ըսաւ թէ , անառակ որդի մը հօ-  
րը ժառանդութիւնն առնելէն ու հեռու քա-  
ղաք երթալով անառակութեամբ զանոնք վատ-  
նելէն ետքը , երբ դարձեալ կուգայ հօրը ոտ-  
քը կ'ինայ , մեղայ կը գոչէ , և կ'աղաղակէ որ  
չէ թէ որդի՝ այլ ծառայի տեղ ընդունի զին-  
քը , հայրն ալ անոր զեղջն ու վերադարձը տես-  
նելով , և կորսուած զաւակը գտնելուն վրայ  
մեծ ուրախութեամբ կը դրկէ կը պագնէ , ու  
դարձեալ առջի փառաւոր զդեստները կը հագ-  
ցընէ անոր :

Տառեսին առակն ի՞նչ էր .

342. Աշխարհիս անիրաւ վաստակովը յաւիտենական հանդիստ շահելու վրայ ալ տընտեսի մը առակ զրուցեց , որ իր տնտեսութեան պաշտօնէն ձգուիլ դիտնալով , տիրոջը պարտապահներուն հաշխէն մէկին հարիւրին քսան , և մէկին ալ յիսուն վար գնաց , և դանոնք իրեն բարեկամ ստայաւ որ ետքը զինքը պաշտպանէն : Ասկէ հետեւցուց Յիսուս թէ անիրաւ մամնայն բարեգործութեան միջոց ընելը մեծ իմաստութիւն է :

Կինը արձակելուն դէմ Յիսուս ի՞նչ պատասխոյն տուան փարիսեցւոց .

343. Փարիսեցիք Յիսուսի հարցուցին փորձելով թէ մէկը իր կինը ինչ վնասու համար ըշլայ թող ըլլայ կընայ թող տալ , Մովսէսի պատուիրանքին նայելով : Յիսուս պատասխան տըւաւ թէ կարդացած չէ՞ք Սուրբ Գիրքը որ Աստուած ի սկզբան մարդու արու և էդ ստեղծեց ու ըստ որ երկուքը մէկ մարմին ըլլան , անանկ էնէ երկու չեն այլ մի մարմին . արդ Աստուածոյ զուգածը թող մարդ չզատէ : Այս խօսքով Յիսուս ամուսնութեան կապը քնաւ անլուծանելի հաստատելով՝ Պատակի խորհուրդը սահմանեց , որ այր և կին զիրար չեն կընար թողուլ .

և երկուքին մէկը չմեռած ուրիշի չեն կընար այր կամ կին ըլլալ :

Արծաթամէր փարիսեցւոց ի՞նչ առակ ըստ .

344. Արծաթամէր փարիսեցւոց ալ առակ մը լսու , թէ աշխարհիս մէջ ծիրաններ հաղնող , ամեն ուրախութիւն ընող բայց Աստուածոյ պատուէրը չպահող , և իր դրան քով ինկած վիրաւորեալ աղքատ Ղաղարոսին վրայ գութ չունեցող մեծատունը՝ մեռնելէն վերջը իր աչքը դըժողին մէջ կը բանայ ու մէկ կաթիլ ջուրին կարօտ մնալով կը պապակի . և այն աղքատն ալ մեռնելով Աքրահամին գիրկը կ'երթայ կը հանդչի :

Գատառորին առակն ի՞նչ էր .

345. Ամեն ատեն անձանձիր աղօթքը ընելու հարկն ալ իմացուց դատաւորի մը առակով , որ Աստուածմէ չվախցող և մարդոցմէ չըխանող մէկն ըլլալով , այրի կնկան մը դատը տեսնելու հոգ չէր ըներ . բայց այրիին շատ մը ատեն երթալ գալով ձանձրացնելուն համար վերջապէս դատը տեսաւ : Յիսուս ասով հասկըցուց որ եթէ անիրաւ դատաւորը թախանձանքի չդիմանալով իրաւունք ըրաւ . հապաճմարտութեան տէր Աստուածը գիշեր ցերեկ իրեն աղաչող ձառաներուն ձայնը պիտի չը սէ՞ :

և միայն երկայնմտութեամբ կ'անցնէ անոնց  
խնդիրքը :

Մաքս աւորին և փարփսեցին աղօթքը ինչի՞ օբինակ ցուցուց .

346. Անդամ մ'ալ Յիսուս առակ մ'ըսաւ  
ինքինքնին արդար կարծող ու հպարտացողնե-  
րուն օրինակ ըերելով, թէ փարփսեցի մը և  
մաքսաւոր մը տաճարը մտան աղօթք ընելու ,  
փարփսեցին փառք կ'ուտար Աստուծոյ որ այն  
մաքսաւորին պէս գող և մեղաւոր անձ մը չէ ,  
այլ ըստ օրինի իր պարտքը կը կատարէ . իսկ  
մաքսաւորն անդադար՝ Աստուծած թողութիւն  
տուր իմ մեղացս ըսելով կը հառաչէր : Ասոնց  
համար Յիսուս ըսաւ թէ մաքսաւորն արդարա-  
ցած գուրս ելաւ տաճարէն քան թէ փարփսե-  
ցին :

Հարուստ մը արքայութիւն երթալու համար ի՞նչ պատ-  
ուէր ընդունեց Յիսուսէն .

347. Հարուստին մէկն եկաւ Յիսուսի հար-  
ցուց թէ արքայութիւն երթալու համար ի՞նչ  
պէտք է որ ընէ . Յիսուս պատասխան տուաւ ,  
Աստուծոյ պատուէրները պահէ . հարուստն ը-  
սաւ թէ պղտիկուց պահած եմ այդ ամէնը . ու-  
րեմն պատասխանեց Յիսուս , բոլոր ունեցած-  
ներդ աղքատաց տուր ու իմ ետևէս եկուր :

Այս բանս ծանր եկաւ հարստին ու սկսաւ հե-  
ռանալ : Յիսուս դարձաւ ըսաւ առաքելոց թէ  
աշխարհիս զուարճութեանց և ընչից հետ սրբ-  
առվ կապուած մեծատունին ո'չափ դժուար է  
արքայութիւն երթալը : Աշակերտները այս լսե-  
ցին նէ զարմանալով կ'ըսէին թէ ո'վ կրնայ ապ-  
րկ . Յիսուս ըսաւ մարդուս ալ անհնար երե-  
ցածը Աստուծոյ առջև հնարաւոր է :

Առաքելոց ի՞նչ խոստացաւ Յիսուս .

348. Այս առթով երբ Պետրոս հարցուց  
Յիսուսի թէ մեզի ի՞նչ պիտի ըլլայ , որ ամէն  
ունեցածնիս թողուցինք ու ետևէդ եկանք : Պա-  
տասխան տուաւ Յիսուս թէ կրկին անդամ փա-  
ռօք աշխարհ գալու ատենս գուք տասներ-  
կուքնիդ 42 աթոռ պիտի նստիք և ինծի հետ  
իսրայէլի 42 ցեղը պիտի դատէք . և չկայ մէկը  
որ ինծի համար իր ամէն ունեցածէն ձեռքքա-  
շէ ու վարձքը չառնէ Աստուծմէ , թէ այս աշ-  
խարհիս վրայ և թէ ՚ի հանդերձեալն :

Յիսուս մեռեալ Ղագարոսը ի՞նչպէս կենդանացուց .

349. Յիսուս երբ լսեց որ Ղազարոս իր բա-  
րեկամը որ բեթանիա կը նստէր հիւանդ է . ե-  
ղած տեղը երկու օր ալ կենաչն ետքը ճամ-  
բայ ելաւ դէպ ի չըէաստան . և երբ բեթանիա

հասաւ, չորս օրուան մեռած ու թաղուած գըտաւ զիազարոս ։ Յիսուս գերեզմանն երթալով՝ գերեզմանին քարը վերցընել տուաւ ու մեծ ձայնով մը կանչեց, Ղաղարոս, ել գուրս եկուր, և իսկոյն մեռած Ղաղարոսն ողջնցաւ, և գերեզմանէն դուրս ելաւ պատանքովը. Յիսուս հրամայեց որ արձշկեն ու թողուն որ երթայ ։ Այս առթով շատերը գարձան ու հաւատացին Քըրիստոսի. բայց փարիսեցիք աւելի ևս կատղած խորհուրդ ըրէն որ զՅիսուս բռնեն մեռցընեն ։ Յիսուս ալ երեսը ծածկեց, գնաց Եփրայիմ գիւղը կեցաւ։

Երիքովի մէջ որո՞ւ տունը հաց կերաւ Յիսուս.

350. Զատկին տօնը մօտեցած ըլլալով՝ թիւսուս Եփրայիմէն ելաւ նորէն երուաղէմ երթալու համար. և Երիքով քաղաքին մօտ մուրացկան կոյր մը բժշկեց. Քաղաքին մէջ պտըտած ատենը, Զաքէսս անուն հարուստ մաքսապետ մը կարճահասակ ըլլալուն պատճառաւ. Յիսուսը տեսնելու փափաքով ժանտաթղենիի մը վրայ ելեր կը նայէր ։ Յիսուս ղանի տեսնելով ըսաւ, Զաքէ շուտով իջիր ատկէ, քանզի այսօր քուտունդ պիտի գամ։ Զաքէսս իջաւ իսկոյն ու ընդունեց զՅիսուս մեծ ուրախութեամբ, և խոստացաւ իր ունեցածին կէսը աղքատաց տալ և

որուն որ զրկանք ըրած է, չորեքպատիկը հատուցանել ։ Յիսուս ալ օրհնեց ղանիկա ըսելով, այսօր փրկութիւն եղաւ այս տանս, որովհետեւ այս ալ Աբրահամու զաւակ է ։

Սիմն բորոտիս տունը հաց ուտելու ատենը ի՞նչ պատահէցաւ.

351. Յիսուս երիքովէն ենելուն, Բարտիմէսս անուն կոյր մուրացկան մը բժշկեց. և Երուսաղէմ չգացած բեթթանիս գիւղը հանդիպեցաւ ։ Հոն Սիմն բորոտը որ Յիսուսէն բժշկուած էր ։ զՅիսուս հացի հրաւիրեց ։ Յիսուսի հեանըստողներուն մէկն ալ Ղաղարոս էր ։ ասոր քոյրը Մարիամ շիշ մը աղնիւ իւղ բերաւ և անով Յիւսուսի ոտքն ու դլուին օծեց ։ Այս բանիս ոմանք դժուարացան, մանաւանդ Յուդա Խակարիովացին թէ ինչո՞ւ իւղը 300 դահեկանի չծախուեցաւ և դինը աղքատաց չորրուեցաւ. որովհետեւ աղքատաց արկին ինքը կըկըէր, և կը յուսար որ անոնց ողբրմութենէն իրեն ալ մաս կ'ելնէ։

Յիսուս ի՞նչ փառցով Երուսաղէմ մտաւ,

352. Յիսուս երկրորդ օրը ճամբայ ելաւ Երուսաղէմ երթալու. Երբ Զիթենեաց լեռան տակը հասաւ, աշակերտներէն երկուքը խրկեց, որ Երենց դիմացի գիւղն երթան ու հոն քու-

ռակովը մէկտեղ կապուած էշ մը պիտի դըտնեն, առնեն բերեն. անոնք ալ կատարեցին հրամանը ։ Յիսուս էշը հեծած սկսաւ Երուսաղէմ երթալ ։ Ժողովուրդը Յիսուսի դալուստը լսելով ամենքն ալ ծերք և տղայք դիմաւորեցին զինքը, ձեռքերնին ձիթենիի ու արմաւենիի կանանչ ոստեր առած, և ոմանք ալ հաղուստնին Յիսուսի ոտքին տակը փոելով, ուրախութեամբ կ'աղաղակէն, “Ովաննա, օրհնեալ որ դասդյանուն տեառն, օրհնութիւն ի բարձունս ։”

Տաճարին մէջ ի՞նչ ըստ Յիսուս.

353. Յիսուս այսպէս յաղթանակաւ Երուսաղէմ մանելով տաճարը գնաց, և դարձեալ ծախողներն ու գնողները տաճարէն դուրս հանեց, և շատ մը կոյրեր ու կաղեր և հիւանդներ բժշկեց ։ Հրէից կարդացողները այս հրաշքները տեսնելով, և տղայոց ալ տաճարին մէջ ովսաննա օրհնութիւն որդւոյ դաւթի գոչենին լսելով բարկացան ու ըսին Յիսուսի, չե՞ս լսեր ի՞նչ կ'ըսեն ատոնք. Յիսուս պատասխան տուաւթէ, չէ՞ք կարդացած այն խօսքը թէ կաթ ծըծող տղայոց բերնէն օրհնութիւն կատարեցիր. և թէ որ ատոնք լոեն քարերը պիտի աղաղակեն ։ Հոնկէ իրիկուան դէմ ելաւ քաղաքին մօտ բեթանիա դեղը գնաց հանդչելու ։

Թղթին իսչո՞ւ անփեց .

354. Առաւոտուն Երուսաղէմ դառնալու ճանապարհին անօթեցաւ, և հեռուէն տերեներով զարդարուած թղենի մը տեսնելով մօտեցաւ որ պտուղէն ուտէ . բայց տերենին զատքան մը չգտնելով անիծեց ծառը ։ Հետեւալ օրը այն ճամբովը ետ դառնալուն՝ առաքեակը տեսան որ ծառը չորցած է, զարմանալով Յիսուսի իմացուցին նէ ըստ անոնց, չէ թէ թղենիին այլ սա լեռանը ըսէք հաւատով թէ ե՛լ ատկէ ծովը ինկիր, կ'ըլլայ . վասն զի ինչ բան որ աղօթքով ու աներկմիտ հաւատով ինդրէք, կ'առնեք ։

Յիսուս դարձեալ ի՞նչպէս յանդիմննեց Հրէից կարդացողները .

355. Յիսուս դարձեալ տաճարին մէջ չըրէից կարդացողները յանդիմնել սկսաւ առակով, ու ըստ մէկը իր երկու որդւոցը այդին երթալ ու բանել ապսպիրեց . առաջնը երթալու խօսք տուաւ ու չդնաց . միւսը չեմ երթար ըստ, ետքը զղաց ու գնաց ։ Ասոնց ո՞րը կատարեց իր հօրը հրամանը . պատասխանեցին թէ ետքինը ։ Ուրեմն ըստ, մաքսաւորները և մեղաւորները ձեզնէ առաջ պիտի մտնեն երկնից արքայութիւնը, որ Յովհաննու Մկրտչի քարո-

զութեանը հաւատացին . բայց դուք տեսաք զայն և հաւատալ չուզեցիք :

Ուրիշ ինչ առակ ըստ .

356. Դարձեալ ըստ . այդետիրոջ մէկը այգին մշակներու յանձնելով , ժամանակին պլատուլը առնելու համար հետզետէ իր ծառայները կը դրկէր անոնց . անոնք ալ ծառայները ծեծելով փետելով կը վռնտէին և կը մեռցընէին : Վերջը իր մէկ հատիկ սիրելի որդին կը զրկէ որ ամչնան անկէ ու պտուղ տան = Զանի կա ալ տեսաձնուն պէս կը բռնեն կ'ըսպաննեն : Արդ այն մշակներուն ի՞նչ ընելու է . ըսին թէ այն չարերը չարաչար կորսնցունելու է և այդին ալ ուրիշներու յանձնելու է : Ծնանկ է նէ ըստ Յիսուս , Աստուծոյ արքայութիւնը ձեզնէ պիտի վերնայ և տրուի անանկ աղդի , որ անոր արժանի պտուղ տայ :

Ալ ուրիշ առակ ըստ .

357. Հարսնիք ընող թագաւորի մ'ալ առակ ըստ , որ հրաւիրածներէն շատը մէյմէկ պատճառ բռնելով չեկան . շատերն ալ հրաւիրակները քամահրեցին ու սպաննեցին ալ : Թադաւորը բարկանալով սպաննողները մեռցուց . և ճամբու գլուխները մարդ հանելով անցնող

ները ժողվել տուաւ իր հարսանեաց տունը : Ետքը ինք հարսնեւորները աչքէ անցընելուն ասենը , մէկը տեսաւ հոն՝ հարսնիքին չվայը լած լաթերավ , ու հրամայեց որ ձեռքն ու ոտքը կապէն ու դուրս նետեն : Ասկէ հետեւ ցուց Յիսուս թէ Աստուծոյ արքայութեանը շատերը կանչուած են , բայց ընտրուածներ քիչ կան :

Այս առակները ի՞նչ ազդեցյաթիւն ըրին .

358. Այս առակներէս Հրէից կարգացող ները և փարիսեցիք կատղեցան , և զՅիսուս բռնել կ'ուզէին . բայց ժողովրդէն կը վախնաչին որ իրեւ մարդարէ ճանչցած էին զանիկա : Ուստի խորհուրդ ըրին որ կառավարութեան գէմյանցաւոր ընելու ծայր մը բռնեն Յիսուսի խօսքէն . և ասոր համար եկան ոմանք հարցուցին իրեն թէ կայսեր հարկ տալ պէտք է : Յիսուս անոնց խորամաննկութիւնը իմանալով դահեկան մ'ուզեց և հարցուց թէ անոր վը բայի պատկերը որո՞ւնն է . ըսին՝ կայսեր . ուրեմին ինչ որ կայսերն է կայսեր տուէք , ըստ , և Աստուծոյն Աստուծոյ :

Յիսուս սագուկեցոց փորձելան գէմ ի՞նչ զբացեց .

359. Նմանապէս սադուկեցիներն ալ որ

աշխարհիս վերջը մեռելոց շարութիւն առնելուն չեն հաւատար , մօտեցան Յիսուսի ու փոքր ձելով հարցուցին , թէ Մովկէսի հրամանին նայելով՝ հետղհետէ եօթը էրիկի կին եղող մը յարութեան օրը ո՞րի պիտի երթայ : Յիսուս անոնց յիմար մոլորութիւնը և տգիտութիւնը խայտառակելով , յարութեան առենը մարդիկ հրեշտակի նման ըլլանին և էրիկ կնիկ շառնելնին իմացուց . և յարութիւն առնելուն ճշմարտութիւնը հաստատեց Սուրբ Գրքին խօսքերով . և այնպէս պապանծեցուց զամէնքը , որ անկէ ետքը մէկն ալ չէր համարձակեր բան մը հարցնելու :

Այսի կատար լումային վրայ ի՞նչ ըստ Յիսուս .

360. Յիսուս օր մը տաճարի գանձանակին դիմացը կանդնէր կը նայէր թէ ով ինչ կը ձըգէ գանձանակը : Շատ մը մեծատուններ եւելոք ստակ կը ձգէին , աղքատ այրի կին մ'ալ երկու լումայ (մանղը) ձգեց հոն : Յիսուս իր քովը կանչեց աշակերտները ու ըստ , այն խեղճ այրին ամենէն շատ ձգեց գանձանակը . քանզի ուրիշները իրենց ապրուստէն եւելցածնին տուին . բայց անիկա ինչ որ ունէր , բոլորն ալ ձգեց հոն :

Տաճարին Հնդին վրայ ի՞նչ ըստ Յիսուս .

361. Յիսուս տաճարէն ելնելու ատեն առաքեաները ցուցուցին Յիսուսի թէ , ի՞նչ զարմանալի քարեր են և ի՞նչ գեղեցիկ շինուած : Յիսուս պատասխան տուաւ . թէ օր պիտի գայ , որ քարը քարի վրայ մնալու չէ : Յետոյ գացին ջիմենեաց լեռը , ուր Յիսուս երկարօրէն խօսեցաւ երուսաղէմի կործանման , և իրեն հաւատացողներուն քաշելիք տանջանաց և նեղութեանցը վրայ :

Ի՞նչ է տան կոտակաց առակը .

362. Աշխարհիս կատարածին վրայ ալ խօսելով՝ տամն կուսանաց առակն ըստ , որոնց մէջ հինգ իմաստունը լապտերնին պատրաստունենալով , կէս գիշերին փեսային գալլ լըսուածին պէս՝ հարսանեաց տունը մտան : Իսկ հինգ յիմարը մինչեւ որ լապտերնին պատրաստելու եղան . դուռը դոցուելով դուրս մընացին : Նոյնպէս վերջին դատաստանին համար ալ օրինակ տուաւ թէ , աղնուական մը իր քանքարը շահեցնելու համար ծառաներուն յանձնելով հեռի տեղ գնաց . ետ դարձած ատենը անոնցմէ հաշիւ պահանջեց , որոնք որ ստակը շահեցուցած էին՝ վարձատրեց , և առածը շահեցնելով պահող ու ետ տուողը պատուհասեց :

Ո՞վ յանձն առաւ մատսել դՅիսուս Հրէից ձեռքը .

363. Զատկին երկու օր մնացած էր, երբ ջիսուս այս քարոզութիւններս ընել և լմիցը-նելէն ետքը աշակերտացը իմացուց թէ երկու օրէն զատիկ կ'ըլլայ . և Հրեայները զինքը պիտի բռնեն ու ի խաչ հանեն : Նոյն օրը Հրէից կարգացողներն ու ծերերն ալ կայիափա քահանայապետին տունը ծողովուելով խորհուրդ կ'ընէին զՅիսուս մեռցնելու : Հոն մէջերնին եկաւ Յուդա իսկարիովտացին ալ . և յանձն առաւ զՅիսուս անոնց ձեռքը մատնելու , որուն փոխարէն անոնք ալ իրեն 30 արծաթ տալ խոստացան :

Յիսուս խոնարհութեան համար ի՞նչ օրինակ տուա .

364. Յիսուս երուսաղէմ քաղաքը զարդարուած վերնատունի մը մէջ 12 աշակերտներով սեղան նստաւ բաղարջակերաց առաջին օրը՝ զատկական գառն ուտելու համար . ընթերելու ատեննին Յիսուս սեղանէն ելաւ , վրայի զգեստը հանեց , զենջակ մը կապեց մէջքը , ու աշակերտաց ոտքը լրւաց . ասով խոնարհութեան օրինակ տուաւ աշակերտաց թէ ինչպէս ինք վարդապետ ու տէր ըլլալով իրենց ոտքը լուաց , անանկ ալ իրենք մէկմէկու ոտք լուան :

Յիսուս ի՞նչպէս յասմեց Յուդային մասնից ըլլալիք .

365. Յետոյ դարձեալ զգեստն առաւ ու սեղանը բազմեցաւ : Յեղանին վրայ դարձաւ ըստ թէ ձեղմէ մէկը զիս պիտի մատնէ . աշակելաները խոռվեցան այս բանիս վրայ . Յիսուս ալ պատառը թաթիսեց ու Յուդային տուաւ , իմացընելով թէ զինքը մատնել ուզողը այն է : Յուդա առանց զղալու լրբութեամբ ելաւ սեղանէն , ու գնաց իր միտքը դրած չար խորհուրդը կատարելու :

Յիսուս ի՞նչ նոր պատուիրան տուաւ ի՞ո աշակերտաց .

366. Յուդային երթալէն ետքը՝ Յիսուս իր աշակերտաց նոր պատուիրան մը տուաւ , որ մէկմէկ սիրեն . իմ աշակերտներս ըլլանիդանկէ ճանչնան՝ ըստաւ , եթէ մէկմէկ սիրէք : Պետրոս ալ երբ իր անձը Յիսուսի համար զոհելու պատրաստ կը ցուցնէր , Յիսուս ըստ թէ աքաղաղն երկու անդամ չխօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս :

Յիսուս ի՞նչպէս հաստատեց Ա. Հաղորդութեան խորհուրդը .

367. Այս խօսակցութիւններէն ետքը Յիսուս ձեռքը հաց առաւ , դոհացաւ , օրհնեց , կտրեց ու տուաւ աշակերտներուն ըսելով , Ա.

ուէք կերէք, այս է մարմին իմ. նոյնպէս բաժակն ալ առաւ, գոհացաւ և տուաւ աշակերտաց ըսելով, Արքէք ի գմանէ ամենեքեան, այդ է արիւն իմ. և ասով սահմանեց Ս. Հաղորդութեան խորհուրդը, պատուիրելով որ իր յիշատակին համար կատարեն միշտ :

Ըսթրիքէն վերջն ի՞նչ ըրաւ.

368. Ընթրիքէն վերջը Յիսուս Գեթսեմանի գիւղին քովի պարտէզը գնաց իր աշակերտներով, և անոնցմէ միայն Պետրոսն ու Յակոբոսն ու Յովհաննէսը հետն առած պարտէզին ներսի կողմերը քաշուեցաւ. և անոնց ալ դուք հոս կեցիք, ու աղօթք ըրէք՝ ըսաւ ու ինքը մինակ քիչ մ'ալ յառաջ երթալով, սկսաւ աղօթել, արիւն քրտինք թափել, և երկնքէն հըրեցտակ մը գալով՝ զօրութիւն կուտար անոր : Յիսուս երեք անդամ իր աշակերտներուն քով դարձաւ և երեք անդամին ալ զանոնք քունի մէջ գտաւ :

Յիսուս ի՞նչպէս բռնուեցաւ.

369. Վերջի անդամին որ աշակերտաց քովն եկաւ, անդիէն Յուդա ալ մեծ ամբոխով, ջահերով, լապտերներով, բրերով ու սրերով եկաւ հասաւ, և ինքն առաջ անցաւ համբու-

ընց զՅիսուս, քանզի այս նշանը տուած էր թէ այն է Յիսուսը զոր ես պիտի պազնեմ, զանի բռնեցէք . և երբ Յիսուս ամբոխին առջև եւաւ ու ես եմ Յիսուս Նազովեցին ըսաւ, ամէնքն ալ ետ ետ գացին ու գետինը զարնուեցան, Յուդան ալ մէջերնին էր :

Յիսուսի բռնուած ատենը Պետրոս ի՞նչ ըրաւ .

370. Ս.յա միջոցին Պետրոս քաշեց սութը, ու քահանայապետաց ծառայներէն մէկուն Մաղքոսին աջ ականջը զարկաւ ձգեց : Յիսուս գարձաւ ըսաւ անոր, սուրդ պատեանը դիր, և իսկոյն Մաղքոսին ականջը բժշկեց :

Կափս որո՞ւ տարին Յիսուսը .

371. Պետոյ կապեցին զՅիսուս և նախ Աննա քահանայապետին տարին, հոն քահանայապետը սկսաւ Յիսուսի հարցուփորձ ընել անոր աշակերտացը և վարդապետութեանը վրայօք : Եւ երբ Յիսուս ըսաւ թէ, ես յայտնի կը վարդապետէի տաճարին մէջ, լսողներուն հարցուը, պատասաւորներէն մէկը Յիսուսի երեսին ապակի մը զարկաւ ըսելով թէ այդպէ՞ն պատասխան կուտաս քահանայապետին : Յիսուս հեղութեամբ մը պատասխանեց անոր որ եթէ գէշ բան մը խօսեցայ այն յայտնէ . ապա թէ բարի ինչո՞ւ կը զարնես :

Յետոյ որո՞ւ առջև տարին Յիսրալ :

372. Աննայէն կայիշափա քահանայապեւտին զրկուեցաւ Յիսուս + որուն առջել սկսան սուտ վկայներով զրպարտութիւններ ընել Յիսուսի վրայ . բայց Յիսուս ըրւու կը կենար : Այս միջոցիս Պետրոս ալ դուրսը դաւիթին մէջ կը րակին քովը նստած կը տաքնար . հոն եղողներէն երեք հոգի ետեւէ ետեւ ըսին Պետրոսի, թէ դուն ալ Յիսուսի աշակերտներէն ես . Պետրոս երեք անդամին ալ ուրացաւ զՅիսուս և չճանչնալու եկաւ . և անդիէն աքաղաղը խօսեցաւ . Յիսուս դարձաւ նայեցաւ Պետրոսին , որ անմիշապէս յիշելով Յիսուսի ըստածը զղջաց , և դուրս ելաւ ու լացաւ դառնապէս :

Հրեայք ի՞նչպէս սկսան չարչարել զՅիսուս .

373. Ասկէ ետքը Հրէայք ժողովեցան Յիսուսի դլուխը՝ զինուորներով մէկտեղ , և սկսան երեսը թքնել , ձաղել և ծեծել . և դլուխը ծածկելով կ'ապտակէին կը կոփէին և կը հարցընին , թէ ո՞վ է զարնողը մարդարէացիր մեզի . և շատ հայհայնքներ կ'ընէին իրեն . և այսպէս գիշերն ի բուն չարչարեցին զՅիսուս :

Հրեայք ի՞նչպէս վճռեցին Յիսուսի համար թէ մահապարտ է .

374. Առաւոտուն որ ուրբաթ էր , քահա-

նայապէտներն ու դպիրներն ու ծերերը մէկ տեղելով դարձեալ իրենց ատեանը հանեցին զՅիսուս . և կայիշափա քահանայապետը Աստուծոյ անուանը երդ մնցընելով հարցուց Յիսուսի թէ , Քրիստոս որդին Աստուծոյ դո՞ւ ես , ըսէ մեզի : Երբ Յիսուս ինքն Արդի Աստուծոյ ըլլալը հաստատեց , քահանայապետը իր պատմուծանը պատառելով , և ամէնքն ալ կատղելով վճռեցին միաբան թէ մահապարտ է . և զՅիսուս կապած առին տարին Պոնտացի Պիղատոսին , որ այն ատենները դատաւորութեամբ կ'իշխէր Պաղեստինի բաժնին՝ Հոռվմացեցւոց տէրութեանը կողմէն :

Յուղայի վախճանն ի՞նչ եղաւ .

375. Այն ատեն Յուղա տեսնելով որ Յիսուս մահապարտի մը պէս Պիղատոսի ձեռքը արուեցաւ , իր մատնելուն վրայ զղջաց . և առած արծաթը քահանայապետներուն դարձուց ըսելով թէ , մեղայ որ անմեղ արիւն մատնեցի , և երբ անոնք ետ առնելու չեղան , տաճարին մէջ նետեց , ու գնաց յուսահատութեամբ կախեց զինքը ու խեղդուեցաւ :

Պիղատոս ի՞նչու Յիսուսը Հերովդէսի տասնել առւար .

376. Պիղատոսի առջեւը հրեայք շատ

սուտ չարախօսութիւններ ըրբին Յիսուսի վրայ .  
բայց Յիսուս անոնց դէմքողովին լուռ կը կե-  
նար : Պիղատոս չարախօսներուն խօսքէն իմաւ-  
նալով որ Յիսուս Գալիլիացի է , զանիկա Հե-  
րովդէս Անթիպասին դրկեց , որ Գալիլիայի բաժ-  
նին չորրորդապետ էր . և զատկի տօնին պատ-  
ճառաւ Երուսաղէմ եկած էր : Հերովդէս իր  
հարցուցածներուն դէմ Յիսուսի լուռ կենալուն  
վրայ բարկանալով , ծաղրելու համար ճերմակ  
լաթ մը ձգեց Յիսուսի վրայ , ու Պիղատոսին  
դարձուց :

Պիղատոս Յիսուսի անմենի լուսալով զանի ապա-  
տելու ի՞նչ չսարք զործածեց .

377. Պիղատոս Յիսուսի անմել ըլլալը և  
հրէից կարդացողներուն նախանձութենէն մատ-  
նուիլը հասկնալով կ'ուզէր որ արձակէ զՅիսուս:  
Ուստի հրէից ամեն զատկի տօնին բանտարկեալ  
մը արձակել տալու սովորութիւնը յիշեցնելով  
զՅիսուս արձակել առաջարկեց . բայց անոնք  
միարերան կ'աղաղակէին որ զՅիսուս ի խաչ  
հանէ և արձակէ իրենց Եւսու Բարաբայն , որ  
մարդասպան աւաղակ մի էր :

Հրէից կատարութիւնը իջեցնելու համար Պիղատոս  
ի՞նչ ըրաւ .

378. Հրէից կատաղութիւնը իջեցնելու

մոքով , Պիղատոս անոնց առաջը Յիսուսի ծեծ  
զարկաւ , և զինուորներուն տուաւ որ ներսի  
դաւիթը տարին , և դլուխը վչէ պսակ մը ,  
կոնակը կարմիր քղամիդ և ձեռքը եղէդ մը  
տալով թագաւոր ձեւացուցին զՅիսուս : Եւ ա-  
ռաջը ծունկի դալով ողջ լիր թագաւոր հըրէ-  
ից կ'ըսէին , ու երեսը կը թքնէին և կ'ապտա-  
կէին . և ձեռքի եղէդովը գլխուն կը զարնէին :  
Այս արիւնլուայ կերպարանքովը զՅիսուս դուրս  
հանեց Պիղատոս . Հըրեայք տեսածնուն պէս  
դարձեալ աղաղակեցին թէ ի խաչ հան : Այն  
ատեն Պիղատոս ձեռքերը լուալով ես անպարտ  
եմ ըսաւ այդ անմեղին արեանը , ու յանձնեց  
Հըրէից որ խաչեն :

Յիսուս իր ետեւէն լացող կանանց ի՞նչ ըսաւ .

379. Խաչը Յիսուսի ուսը տուած և Սի-  
մոն կիւրենացին անոր օդնական բռնելով  
սկսան գողգոթա լեռը երթալ : Ետեւէն մեծ  
ամբոխ մը կ'երթար , և անոնց հետ շատ մը  
կանայք ալ կային որ կոծելով կ'ողբային Յիսու-  
սի վրայ : Յիսուս ըսաւ անոնց . զիս մի՛ լաք ,  
այլ ձեր ու ձեր որդւոցը վրայ լայէք . քանզի  
որ պիտի գայ որ լեռներուն և բլուրներուն ձեր  
վրայ կլշին ու ծածկելլ պիտի փնտոէք որ ա-  
զատիք պատուհասէն : Վասն զի թէ որ դալար

փայտին այսպէս կ'ընեն, չորին ի՞նչ պիտի ըլլայ:

Յիսուս ո՞ւր ի խաչ հանեցին.

380. վերջապէս գողգոթա լեռան վրայ հանեցին, և զմուռառվ ու լեղիով խառնած դինի խմբներ ուղեցին, բայց չընդունեց. ետքը հոն խաչեցին զՅիսուս, անոր երկու կողմն ալ երկու չարագործ աւաղակներ խաչեցին: Աշ-կողմեան աւաղակը Յիսուսի անմեղութեանը վր-կայելով յանդիմանեց մրւս ընկերը, որ կը հայ-հոյէր Յիսուսի, և մեծ հաւատքով մը դարձաւ ըստ Յիսուսի. Տէր յիշէ զիս, երբոր թագա-ւորութեամբ գաս. Յիսուս ալըսաւ, այսօր ինձի հետ դրախտը պիտի ըլլայ:

Յիսուս խաչին վրայ ի՞նչ նախատինվ կրեց.

381. Յիսուս խաչին վրայ եղած միջոցին ալ քահանայապետք ու դպիրք կուգային և կը ծաղրէին զՅիսուս և անկէց անցնողներն ալ գը-լուինին շարժելով կը հայհոյէին: Բայց Յիսուս այն վերջին դառն տանջանաց մէջ զինքն ի խաչ հանողներուն և արհամարհողներուն համար ա-զօթք կ'ընէր: Խաչին քով կեցած էր Յիսուսի մայրը Մարիամ կոյս, կղէոպեան Մարիամաց և Մարիամ Մադդաղենացին հետ, որ արիւն արտասուք թափելով կ'ողբային Յիսուսի վրայ:

Յիսուս դարձաւ ըստ մօրը, կին դու, ահա քու որդիդ՝ զՅովհաննէս սիրելի աշակերտը ցու-ցընելով, որ հոն էր. և դարձաւ Յովհաննէսին ալ ըստ թէ, ահա քու մայրդ: Անկէ ետքը Յովհաննէս յ. Մարիամ տիրամայրը իբրև մայր կը խնամէը:

Յիսուս ի՞նչպէս հովին ուամփեց.

382. Ժամը վեցին ատենները բոլոր աշ-խարհ խաւարեցաւ մինչև ժամը ինը: Ժամը ին-նին ատենները Յիսուս ծարաւի եմ ըստ. և քացախը թաթիսած սպոնդը եղէդի մը վրայ անցուցած Յիսուսի բերանը մօտեցուցին նէ, Յիսուս քացախը բերանն առաւ, և ըստ՝ ա-մենայն ինչ կատարեալ է. յետոյ՝ Հայր, քու ձեռքդ կը յանձնեմ իմ հոգիս ըսելով՝ գլուխը ծռեց ու աւանդեց հոգին:


Յիսուսի հոգի տամնդելու ատեն ի՞նչ պատահեցաւ.

383. Ան ատեն տաճարին վարագոյրը վե-ըէն 'ի վար պատուեցաւ, երկիրը շարժեցաւ, ա-պառաժները պատուեցան, գերեզմաններ բաց-ուեցան, և շատ արդար մարդիկ յարութիւն առած երուսաղէմի մէջ շատ մարդոց երևցան:

Յիսուսի կողը ինչո՞ւ խոցեցին.

384. Խաչին քով կեցող զինուորներէն

մէկն ալ Յիսուսի մեռած ըլլալը ստուգելու համար, գեղարդովը Յիսուսի կողը խոցեց. և իսկոյն արիւն և ջուր բղխեց կողէն. այս տեսնելով հարիւրապետը հաւատաց և վկայեց թէ Աստուծոյ Որդի է սա :



### ԵՐՐՈՐԾ ՄԱՍ

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀԱԿԱՆԻՆ ՄԻՒՋԵՒ ԱՌԱՋԵԼՈՅ ՔԱՐՈՉՈՒԹԵՍՆ  
ՍԿՈՒԼԸ

Ո՞վ խաչն վար առաւ Յիսուսը .

385. Արեմաթացի Յովսէփի անուն բարեպաշտ ու արդար մարդ մը, որ Հրէից չար խորհըրդոց միաբանած չէր, Պիզատոսէն Յիսուսի մարմինը ինդրելով, եկաւ Նիկոդեմոս իշխանին հետ՝ նոյն ուրբաժ օրը իրիկուան դէմ խաչն վար առաւ, ու մաքուր կտաւով պատեց և քարէ փորուած նոր գերեզմանի մը մէջ դրաւ, ու մեծ քարով մ'ալ գերեզմանը դոցեց :

Գերեզմանին վրայ ի՞նչ պահպանութիւն ըրին Հրեայք .

386. Հրեայք ալ Պիզատոսէն հրաման աւին, գացին գերեզմանին քարին կնիք զարկին ու քոֆս ալ պահպան զինուորներ դրին. որ-

պէս զի չըլլայ թէ աշակերտները դադուռկ գեշերը գան ու Յիսուսի մարմինը դողնալով, ժողովրդեան մէջ ձայն հանեն թէ յարութիւն առաւ Քրիստոս :

Յիսուս ի՞նչպէս յարութիւն առաւ .

387. Միաշաբաթին այսինքն կիրակի առաւօտ՝ կանուխ Մարիամ Մագդաղենացին, Մարիամ Յակոբայ, Յովհաննա ու Սողոմէ հետերնին խունկ ու անուշահոտ իւղ առած ելան գերեզմանն երթալու, որ Յիսուսի մարմինը օծեն : Բայց ասոնք գերեզմանը չհասած, նոյն օրը լուսնալու մօտ մեծ շարժ մ'եղաւ, երկինքն հրեշտակ մ'իջաւ, գերեզմանին բերանը դըռուած քարը մէկդի ըրաւ ու վրան նստաւ : Այս տեսիլէն պահպանները սարսափած գետինն ինկան մեռածի պէս, ետքը ելան փախան ու գային պատմեցին քահանայապետներուն ու գպիրներուն, անոնք ալ շատ ստակ տուխն իւրենց, որ լսեն թէ մեր քուն եղած ժամանակը աշակերտներն եկան գողցան Յիսուսի մարմինը . այս լուրը Հրէից մէջ մինչև հիմա տարածուածէ :

Խըստեր կանայք ի՞նչ ըրին .

388. Իւզաբեր կանայք որ եկան, գերեզմանին դրան ահագին քարը վերցուած տեսնելով և Յիսուսի մարմինը հոն չդժնելով շփո-

թեցան։ Մէջերնուն Մարիամ Մագդաղենացին վաղեց գնաց Պետրոս և Յովհաննէս առաքեաներուն իմացուց թէ տէրը գերեզմանէն վերցուցեր են։ Ասոնք ալ շուտով ելան եկան և Մագդաղենացին ըսածին պէս դատարկ դանելով գերեզմանը՝ զարմանալով ետ դարձան։

Նախ որո՞նց ժամուցուեցաւ Յիսուսի յարութիւն առնելը.

389. Այս միջոցիս հօն դժնուող կանանց երիտասարդի կերպարանոք երկու հրեշտակ եւ բևնալով ըսին, մի՛ վախնաք, Յիսուս խաչեալը կ'ուղէք, հոս չէ՛, այլ յարեաւ, ինչպէս որ ինքը առաջնուց կը զրուցէր։ Հիմա շուտով դացէք պատմեցէք անոր աշակերտացը։ Անոնք ալ ահով ու խնդալով ելան, և երբ կ'երթային, Յիսուս պատահելով անոնց ողջունեց։ և ասլսալը բեց որ առաքելոց ըսին թէ Գալիեա երթան զինքը տեսնեն։ Անոնք ալ ոտքին փաթթուելով երկրպագեցին և եկան պատմեցին առաքելոց։

Յիսուս ինչպէս երեցաւ Մարիամ Մագդաղենացին։

390. Կանայք գերեզմանէն բաժնուելէն ետքը՝ հասաւ Մարիամ Մագդաղենացին գերեզմանը։ և դուրսը կեցած ու լացած ատենը մէջ գերեզմանին մէջ նայելով տեսաւ այն երկու հրեշտակները որ իրեն ըսին թէ ինչո՞ւ կու-

լաս՝ զո՞վ կ'ուզես։ նա ալ պատասխան տալուն հետ՝ ետին դարձաւ ու Յիսուս հօն կանգնած դատաւ։ բայց պարտիզպան կարծելով կը թախանձէր, որ եթէ Յիսուսի մարմինը ուրիշ տեղ փոխադրեր է նէ, զրուցէ։ Յիսուս այն ատեն ըսաւ իրեն։ Մարիամ։ այն ալ իսկոյն ճանչնալով կանչեց, վարդապետ, ու մօտենալ կ'ուզէր։ բայց Յիսուս արգիլեց և պատուիրեց որ երթայ առաքելոց իմացընէ։

Ուրիշ որո՞նց երացաւ Յիսուս։

391. Ասոնցմէ զատ ուրիշներու ալ որ անդաստանները կ'երթային երեցաւ Յիսուս։ բայց ամէնուն խօսքն ալ անհաւատալի կը թուէր առաքելոց։ Նոյն օրը երբ աշակերտներէն երկու հոգի ալ երուսաղէմէն իմմաւուս գիւղը կ'երթային, Յիսուս զինքը չճանչընելով ճամբուլնիր եղաւ անոնց։ և իր չարչարանաց և յարութեան վրայօք ցուցուցած կասկածնին վերցընելու խօսքեր ըրաւ, մարդարէից դրածները յիշեցընելով։ երթալու տեղերնին հասան նէ զինքն ալ ստիպեցին հետերնին մնալու։ հօն սեղան նստած ատեննին աչքերնին բացաւ որ զինքը ճանչցան, բայց ինքը իսկոյն աներեւոյթ եղաւ։

Յիսուս իր աշակերտացը ի՞նչո՞ւ երեցաւ։

392. Նոյն կէտին աշակերտները դարձան

Երուսաղէմ, ուր տեղ որ առաքեալք և աշակերտք ծողովուած և վախերնուն դուռը դոցած նստէր էին . և իրենց տեսածը պատմելով ալ չեն կընար հաւտացընել անոնց թէ Յիսուս յարութիւն առած է : Մէյմ'ալ յանկարծ Յիսուս մէջերնին գտնուեցաւ և իր վլրքերը ցուցընելով և շօշափել տալով անոնց հաւտացուց թէ տեսածնին երեսոյթ մը չէ , այլ իսկ և իսկ Յիսուս ինքն է . և անոնց վրայ փչելով՝ առէք Հոդի Սուրբ՝ ըստ և մարդկան մեղաց թողութիւն տալու իշխանութիւն տուաւ :

Թովմաս ի՞նչպէս հաւատնաց Յիսուսի յարութեանը .

393. Այս եղած ատենը թովմաս հոն չեր. ուստի երբ առաքեալք զՅիսուս տեսնելնին իշխացուցին անոր . չեմ հաւատար ըստ մինչև որ ես ալ աչօքս չտեսնեմ : Ութ օրէն ետքը երբ դարձեալ ամէնքը մէկտեղ դուռը դոց նստած էին , իսուս նորէն երեւեցաւ մէջերնին և թովմայի թերեհաւատութիւնը յանդիմանելով՝ ըստ . հիմա բեր մատերդ կողս միէ և ձեռքս ալ տես՝ ու անհաւատ մի ըլլար . երանի անոնց որ զիս չտեսած պիտի հաւատան :

Տիբերեայ ծովուն եղելքը ի՞նչպէս երեցաւ Յիսուս իր աշակերտացը .

394. Առաքեալները՝ ինչպէս որ Յիսուս

իրենց պատուէր զրկած էր , Գալիլիա երթալով օր մը՝ երբ Պետրոս և Յովհաննէս ուրիշ քանի մը առաքելոց հետ ձուկ որսալու ելած էին Տիբերեայ ծովուն եղերքը , երեւեցաւ Յիսուս անոնց և հրաշալի առատութիւն մը տուաւ անոնց որսորդութեանը . և հետերնին հայ ալ կերաւ ։ Ետքը Պետրոսին երեք անդամ զիս կը սիրե՞ն հարցնելով՝ զինքը չարչարանաց գեշերը երեք անդամ ուրանալուն յանցանքը քաւեց :

Յիսուս Գալիլիայի մէջ որո՞սց երևաւ .

395. Ասկէ ետքը Յիսուս անդամ մ'ալ ամէնուն մէկէն երեւեցաւ Գալիլիայի մէջ լեռան մը վրայ , ուր առաքեալներէն զատ ուրիշ շատ բաղմութիւն ալ կար որ ընդ ամէնը հինգ հարիւր հոդիէն տուելի էին : Այս անդամիս բացարձակ հրաման ըրաւ առաքելոց որ երթան բոլոր աշխարհիք քարողեն իր աւետարանը . հեթանոսուներն աշակերտեն և մկրտեն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն որրոյ . և խոստացաւ որ ինքն ալ անոնց հետ պիտի ըլլայ մինչև ի կատարած աշխարհի :

Յիսուս ի՞ցը համբարձաւ յերկին :

396. Յիսուս այսպէս 40 օր իր աշակերտացը տեսնուելով՝ հետերնին կուտէր կը խը-

մէր և իր նոր հաստատուելու եկեղեցոյն կարգադրութիւնները կը սորվեցընէր անոնց ։ Քառամներորդ օրը առաւ առաքեալները ջիւթենեաց լեռը հանեց . և պատուիրեց որ Երուսաղէմէն չբաժնուին մինչև որ Հոդին սուրբ զրկէ իրենց, ինչպէս որ առաջուց խոստացեր էր ։ Ետքը ձեռքերը բացաւ օրհնեց զանոնք և սկսաւ անոնց աչքին առջելը երկինք համբառնալ ։

Յիսուսի համբարձմանէն վերջը առաքեալք ո՞ւր գացին .

397. Առաքեալները Յիսուսի համբառնալը դիտելով ապշած մնացին մինչև որ ամպը ծածկեց աչքերնէն . այն ասեն երկու հրեշտակ երենալով անոնց ըսին . գալիլիացիներ՝ ինչ պշնելով կը նայիք դէպ ի յերկինս . այս Յիսուս որ ձեզմէ վերացաւ, նորէն պիտի դայ օր մը ։ Այս խօսքին վրայ առաքեակը սթափուելով և երկրպագելով դարձան երուսաղէմ, և իրենց ժողովատեղի ըրած վերնատանը մէջ մէկտեղելով կ'ըսպամէին Յիսուսի խոստման կատարումը տեսնելու ։

Յուղայի տեղ ո՞վ առաքեալ ընտրուեաւ .

398. Այս միջոցիս առաքեակը ուղեցին որ իրենց կարգին համբանքը ամբողջացընեն, Յուղա խկարիովտացի մատնիչին տեղ մէկ ու-

րիշը ընտրելով . ուստի երկու արժանաւոր հոգիի համար առ Աստուած աղօթք ընելով վիճակ ձգեցին . և վիճակը Մատաթիային ելաւ . որ Յուղային տեղ առաքելոց կարգն անցնելով երկոտասաներորդ առաքեալն եղաւ :

Հողին Սորը ի՞նչպէս իջաւ առաքելոց վրայ .

399. Համբարձմանէն տասն օր ետքը, երբ առաքեալք և աշակերտք՝ բարեպաշտ կանանց և Ա. Մարիամ Աստուածածնայ հետ ժողված՝ միաբան աղօթք կ'ընէին վերնատանը մէջ, յանկար ծ սաստիկ հողմի ձայնի նման ձայն մ'եկաւ, լեցուց բոլոր տունը, և հոն եղղներուն ամէնուն գլխուն վրայ հրեղէն լեզուներ երեցան . ու ամէնքն ալ հոգւով սրբով լցուեցան, ու սկսան այլ և այլ լեզուով խօսիլ :

Այս ձայնին վրայ ի՞նչ եղաւ .

400. Այս ձայնին վրայ շատ մը զանազան աղդացբազմութիւն եկան խրոնեցան վերնատանը մէջ, ու ամէնքն ալ կ'ըսքանչանային առաքելոց այլ և այլ լեզուօք խօսելուն վրայ : Գլտնուեցան անանկ յաջաղկուներ ալ որ ծաղրելով առաքեալները դինեհարած են կ'ըսէին : Այն ատեն Պետրոս առաքեալ համբարձակութեամբ ատեան ելաւ, և այն իրենց եղածը

Յիսուսի Քրիստոսի չարչարանաց և յարութեան  
արդիւնքովը Աստուածային Հնորհք ըլլալը բա-  
ցատրեց՝ մարդարէից գուշակութեամբը , և  
մարդոյս Քրիութիւնը Յիսուսի Քրիստոսի հա-  
ւատքովը ըլլալը հաստատեց : Որով նոյն օրը  
3000 հոգի մէկէն հաւատացին Յիսուսի և մը-  
կըտուեցան :

Առաքեալք այսուհետեւ ի՞նչ ըրճն .


404. Այնուհետեւ առաքեալք Հոգւոյն  
սրբոյ զօրութեամբ քաջալերուելով սկսան հա-  
մարձակ ամէն տեղ քարողել Յիսուսի Քրիստո-  
սի Աւետարանը . և պէսպէս հրաշքներ ընել .  
հիւանդներ կաղեր բշկել , հաւատացեալները  
մղրտել և Յիսուսի Քրիստոսի Սուրբ Եկեղեցին  
անոր աւանդած կարդադրութեամբը հովուել :  
Վերջապէս Յիսուսի Քրիստոսի համար ամէն նե-  
ղութիւն , չարչարանք , հալածանք , նախատինք  
ու մինչև անդամ մահը սիրով ընդունելով Քր-  
իստոնէական սուրբ հաւատքը ընդ հանուը աշ-  
խարհ տարածեցին , որ կը տեսէ մինչև ցարդ և  
պիտի տեսէ մինչև ցկատարած աշխարհի :


Պ Ե Բ Զ



ՀԽՍՀ Արքայի Հայաստան

ՀԽՍՀ Արքայի Հայաստան





1610



ՅԱՆԿ ԳՐՈՑ

Ի ԳՐԱՏԱՆ ԵՊՐԱՐՑ ԳԱՎԱՖԵԱՆ

ԴՀ. ՓԲ.

Այրբենարան գիւղուսաց Հեղարան և Ընթերցարան	4	
	20	
Աշխարհագրութիւն բնական և քաղաքա-		
կան Ա. Մ. Գարագալշեանի	4	
Աշխարհագրութիւն ուսումնա. բնական քաղաքական Ա. Միքայէլեանի	8	
Գրադիտութիւն առձեռն Մուրատեանի	12	
Դաստիարակ մանկանց կամ նոր Ընթերցա- րան Ա. Մ. Գարագալշեանի	5	
Դաստիարաք թուաբանութեան Տ. Յ. Պօ- ղանեան Գ. Տպագրութիւն	8	
Դպրութիւն կամ նոր Քերականութիւն Ա. Մ. Գարագալշեանի	8	
Կըթութ. Տաճկ. լեզ. Պ. Գալլպմեանի	6	
Մանր ուսմենք Քրիստոնէուկան Հաւասաց և Արբզ. պատ. Գ. Մարկոսեանի	2	
Նոր Դաստիարաք պղտային պատմութեան Ա. Ա. Սուրենեանի	5	
Երգարան նոր կամ Քնար Հայաստանի	6	
Մըրազան պատմութիւն բազմապատկեր Ա. Մ. Գարագալշեանի	5	
Տիեզրաստրութիւն կամ ուսումնական, բնական և քաղաքական Աշխարհա- գրութիւն Ա. Մ. Գարագալշեանի	6	
Բագրամ' Հետվէլի	4	
Փաքրեկ Քարտուզար կամ Նամականի Ա. Մ. Գարագալշեանի	10	
Քերական. Հմաւ. Ա. Մ. Գարագալշ.	4	
Քերականութիւն Գյող. և Հայերէն ըստ Ոլլէստօրքի գիւղութեան Ա. Մ. Գարա. 25 20		